

ԱԼԻՍԸ ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ  
ԼՈՒԻՍ ՔԵՐՈԼ

*Թարգմանիչ՝ Սոնա Սեֆերյան (արձակ), Սամվել Մկրտչյան*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- [ԲՆԱԲԱՆ](#)
  - [ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ Ցած դեպի ճագարի բույնը](#)
  - [ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ Արցունքի լճակը](#)
  - [ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ Վագրի մրցում և երկար վերջավորություն](#)
  - [ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ Ճագարը ներս է ուղարկում փոքրիկ Բիլին](#)
  - [ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ Թրթուրի խորհուրդը](#)
  - [ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ Խոզն ու պղպեղը](#)
  - [ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ Խելահեղ թեյըմպում](#)
  - [ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ Թագուհու քրոքեթի դաշտը<sup>\[23\]</sup>](#)
  - [ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ Կեղծ կրիայի պատմությունը](#)
  - [ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ Խեցգետնի կաղրիլը<sup>\[27\]</sup>](#)
  - [ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ Ո՞վ է գողացել կարկանդակները](#)
  - [ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ Ալիսի վկայությունը](#)
  - [Ծանոթագրություններ](#)
-

## ԲՆԱԲԱՆ

Դոջսոնը վախճանվեց հարբուխից 1898 թվականի հունվարի 14-ին, Լոնդոնից ոչ հեռու Գիլֆորդ քաղաքում, ուր մեկնել էր քույրերի հետ դիմավորելու Ծննդյան տոնը: Այնտեղ էլ նա թաղված է:

Լուիս Քերոլը Դերսբերիի անբաժանելի մասն է. ահա թե ինչ է զգում աշխարհահռչակ գրողի ծննդավայրն այցելող յուրաքանչյուր մարդ: Ձեզ կարող են միանգամայն լրջորեն առաջարկել հայելու միջով ոտք դնել Լիվերփուլից ոչ հեռու գտնվող չեշիրյան այս գյուղը, որն այժմ ճարտարապետական արգելոց է: Գյուղի ծայրին փոխերեցի հին տունն է՝ Քերոլին վերաբերող հուշատախտակով: Ծխական եկեղեցու գունազարդ ապակիներով լուսամուտներից ձեզ կողջունեն... Քերոլն ու Ալիսը, ինչպես նաև Սպիտակ ճագարը, Խելազար Գլխարկագործը, Քնամուկը, Թրթուրը, Արծվառյուծը, Դքսուհին...

Այստեղ մենք ոտք ենք դնում 19-րդ դար. ծխական եկեղեցին, Դերսբերի-հոլն ու ճարտարապետական այլ հուշարձաններ ամեննին չեն փոխվել: Փոխերեց Դեյվիդ Սմիթը ձեզ կհամոզի, որ շինությունները ճիշտ նույն կերպ են պատկերացել նաև Լուիս Քերոլին:

Սակայն Քերոլի Հրաշքների աշխարհը սկսվում է «Լորդ Դերսբերի» հյուրանոցից, որտեղ մեզ դիմավորեցին «Լուիս Քերոլ ընկերության» հիմնադիր Քեն Օուլթրեմը և... Ալիսը: «Ալիսի խանութից» այցելուներին սպասվում է անչափ հետաքրքիր ուղևորություն, տունը, որտեղ ծնվել է գրողը, շատրվանը, որտեղ մկրտել են նրան, «հրաշք-հողմացույցը» և, իհարկե, չեշիրյան կատուն: Այս ամենը ակնառու ժխտումն է այն վարկածի, որ «Ալիսների» իսկական հեղինակը Վիկտորյա թագուհին է, ինչպես սխալմամբ պնդում է «Վիկտորյա թագուհու օրագրերը» հրատարակությունը: Իսկ մոտակա Վորինգթոն քաղաքի կենտրոնում խելահեղ թեյըմպան են նստած հավերժ արձանացած Ալիսը, Գլխարկագործը և Մարտյան Նապաստակը թեյամանի դիմաց, որի մեջ ժամանակ առ ժամանակ մտցնում են քնաթաթախ Քնամուկին, որն այդպես էլ չի հասցնում պատմությունն ավարտին հասցնել:

Հետաքրքիր է, որ նույն մթնոլորտն է տիրում նաև Ռիչմոնդում, ուր 1844-1846 թթ. դպրոց է հաճախել Քերոլը, նախքան Ռագբի մեկնելը: Գոյություն

ունի ապագա մաթեմատիկոսների հաջողությանը, որի վրա այժմ լավ սովորող աշակերտներին են նստեցնում:

Դպրոցական տարիներին հաջորդում են ուսանողական տարիները Օքսֆորդի Քրայսթ Չրչ քոլեջում 1851-1855 թթ.: Ապա նա մնում է այստեղ որպես մաթեմատիկայի դասախոս: Քոլեջի հսկայական սրահի տասնյոթ պատուհանները պատկերում են պատմական դեմքեր և դեպքեր:

Հարավային կողմի պատուհանի ապակենկարին Դոջսոնն ու Ալիսն են և մի շարք քերոյան կերպարներ՝ ըստ այդ հանրահոշակ գրքերի առաջին ձևավորող Ջոն Թենիելի:

Հաճելի անակնկալ էր սպասվում Բրեդֆորդում: Լուսանկարչության ազգային թանգարանում բացվել էր Քերոլի լուսանկարների ցուցահանդեսը, որտեղ դերասանուհի Էլեն Թերիի, բանաստեղծ Ալֆրեդ Թենիսոնի, Վիկտորյա թագուհու որդու լուսանկարներին հարևանում են Դերսֆերիի բնապատկերներն ու մարդիկ: Եվ, իհարկե, Ալիս Լիդելը:

*ՄՈՆԱ ՄԵՋԵԼՅԱՆ*

---

Ոսկի կեսօր<sup>[1]</sup>, մեղմ սահում է  
Մեր նավակը գետն ի վար:  
Դեպի թիակներն են ձգվում  
Փոքրիկ ձեռքերն անդադար  
Ու փորձում են ղեկավարել  
Որպես հմուտ թիավար:

Հորդորում է Առաջինը.  
«Ժամանակը մի վատնիր»:  
Իսկ Երկրորդը քնքուշ ձայնով.  
«Հիմար բաներ մեզ պատմիր»,  
Մինչ Երրորդն ինձ ընդհատում է  
Իր հարցերով դիմադիր:

Անխիղճ Եռյակ, ով է տեսել,  
Որ քնաբեր շոգի մեջ,

Երբ չի շարժվում ոչ մի տերև,  
Հեքիաթ ուզեն անընդմեջ,  
Սակայն ինչպես հակաճառես,  
Երբ պահանջում են անվերջ:

Լռություն է... Աղջնակները  
Լուռ լսում են, թե ինչպես  
Փոքրիկ Ալիսը գնում է  
Հրաշք-աշխարհը ի տես,  
Ընկեր դառնում գազաններին —  
Ճշմարիտ է այն, կարծես:

Սակայն շուտով թուլանում են  
Պատրանքները մեծագոր,  
Ցամաքում է մտքի հոսքը,  
Եվ խնդրում եմ ես անգոր.  
«Մնացածը թողնենք վաղվան»:  
«Վաղը չկա, հենց այսօր»:

Եվ հյուսվում են հրաշքների  
Հեքիաթները մաքրագարդ  
Ու դեպքերը արտասովոր...  
Վերջացած են նրանք արդ.  
Մայրամուտի լույսի ներքո  
Տուն ենք գնում մենք զվարթ:

Անգին Ալիս, քնքուշ ձեռքով  
Պահիր հեքիաթն ամեն օր,  
Թող մանկության հուշ նա լինի,  
Ինչպես ծաղկեփունջ, որ  
Ուխտավորն է սիրով քաղել  
Ճամփաներում հեռավոր:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Ցած դեպի ճագարի բույնը

Ալիսն արդեն ձանձրանում էր, որովհետև գետափին քրոջ կողքին նստած ոչինչ չէր անում: Մեկ, երկու անգամ նա աչք գցեց քրոջ կարդացած գրքին, բայց այնտեղ ոչ նկար կար, ոչ էլ խոսակցություն:

«Էլ ի՞նչ գիրք. մտածեց Ալիսը, որ ոչ նկար ունի, ոչ խոսակցություն»:

Եվ նա սկսեց մտմտալ (բայց դա այնքան էլ հեշտ չէր, որովհետև տոթից թմրել էր և քունը տանում էր), թե ծաղկեպսակ հյուսելու համար արժե տեղից ելնել ու մարգարտածաղիկ քաղել, երբ հանկարծ կարմրավուն աչքերով մի սպիտակ ճագար վազ տվեց կողքով:

Ալիսին բոլորովին տարօրինակ ու արտասովոր չթվաց այն, որ ճագարն անցնելիս ինքնիրեն խոսեց.

— Վայ ինձ, վայ ինձ, ուշանում եմ, շատ եմ ուշանում: (Երբ նա հետագայում մտածեց այդ մասին, գլխի ընկավ, որ ինքն այն ժամանակ պետք է որ զարմացած լիներ, բայց այդ բոլորն իրեն բնական էր թվացել):

Իսկ երբ ճագարը բաճկոնի գրպանից հանեց ժամացույցը, ուշադիր նայեց ու ապա շարունակեց ճանապարհը, Ալիսը վեր թռավ, որովհետև երբեք չէր տեսել բաճկոն հագած կամ ժամացույց ունեցող ճագարի և հետաքրքրությունից վառվելով վազեց ճագարի հետևից ու հասցրեց տեսնել, թե ինչպես վերջինս ցատկեց մտավ ցանկապատի տակի փոսը:

Հաջորդ վայրկյանին Ալիսը նետվեց նրա հետևից, առանց մտածելու, թե հետո ինչ հրաշքով է դուրս գալու այնտեղից: Ճագարի բույնը մի որոշ տարածություն ձգվում էր ուղիղ թունելի նման, հետո միանգամից կտրուկ ցած էր իջնում, այնքան կտրուկ, որ աղջիկը նույնիսկ չհասցրեց իրեն հետ պահել ու ընկավ խոր ջրհորի մեջ: Կամ ջրհորն էր շատ խոր, կամ ինքն էր շատ դանդաղ ընկնում, որովհետև իջնելիս Ալիսը բավական ժամանակ ուներ դիտելու շրջապատը և մտածելու կատարվելիքի մասին: Սկզբում փորձեց ցած նայել ու գուշակել, թե ինչին է մոտենում, բայց հատակում խավար էր և հնարավոր չէր որևէ բան զանազանել: Հետո նայեց ջրհորի պատերին և նշմարեց, որ դրանք վերից վար լցված են պահարաններով ու գրադարակներով: Այս ու այնտեղ նա մեխերից կախված քարտեզներ ու նկարներ տեսավ: Դարակների մոտով անցնելիս ցած բերեց մի սափոր,

որի վրա կայցրած էր «ՆԱՐՆՁԻ ՀՅՈՒԹ» պիտակը, բայց ասիսու դատարկ էր: Նա չուզեց սափորը ձեռքից թողնել՝ վախենալով ներքևում մեկնումեկին վնասելուց և պահարանների մոտով իջնելիս հասցրեց դնել նրանցից մեկի մեջ<sup>[2]</sup>:

«Դե, իհարկե, — մտածեց Ալիսը, — այսպիսի վայրէջքից հետո սանդուղքից գլորվելն ինձ համար դատարկ բան է: Տնեցիք ինձ քաջի տեղ կդնեն: Ու ես ծպտուն անգամ չեմ հանի, թեկուզ տանիքից ընկնեմ»: (Եվ դա իրոք ճիշտ էր): Ցա՛ճ, ցա՛ճ, ցա՛ճ. երբևէ սրա վերջը կգա՞ :

— Հետաքրքիր է, մինչև հիմա քանի՞ մղոն անցած կլինեմ, բարձրաձայն ասաց նա, երևի երկրի կենտրոնին եմ մոտենում: Ինձ թվում է, արդեն չորս հազար մղոն իջած կլինեմ:

(Տեսնում եք, Ալիսը նման շատ բաներ էր սովորել դպրոցում, ու թեև հիմա գիտելիքները ցուցադրելու տեղը չէր, քանի որ նրան լսող չկար, բայց և այնպես առիթը բաց չթողեց):

Երևի այդքան էլ անցած կլինեմ: Տեսնես, ո՞ր լայնության և երկայնության վրա եմ գտնվում: Ալիսը գաղափար անգամ չունեիր, թե ինչ բան է լայնությունը և ոչ էլ գիտեր երկայնության մասին, սակայն մտածեց, որ նման բառերի օգտագործումն իրեն պատիվ է բերում:

Եվ շարունակեց խոսել.

— Հետաքրքիր է, կանցնե՞մ երկրագնդի կենտրոնով<sup>[3]</sup>: Ինչ ծիծաղելի կլինի, եթե հայտնվեմ այնպիսի մարդկանց մեջ, որոնք գլխիվայր են քայլում: Իմ կարծիքով, նրանք կոչվում են Հակակրեկներ: (Ալիսը հոգու խորքում ուրախ էր, որ իրեն լսող չկար, որովհետև վերջին բառը միանգամայն սխալ հնչեց): — Բայց ես պետք է հարցնեմ նրանց այդ երկրի անունը: «Բարի եղեք, տիկին, ասացեք, սա Նոր Չելանդիա՞ն է, թե՞ Ավստրալիան» (և փորձեց գլուխ տալ, պատկերացրեք, ընկնելիս գլուխ տալ: Կարծում եք կարո՞ղ էք): Տիկինը կմտածի. «Ի՛նչ տգետ աղջիկ է, ի՛նչ հիմար հարցեր է տալիս»: Ո՛չ, պետք չէ հարցնել: Գուցե որևէ տեղ գրվա՞ծ լինի այդ երկրի անունը:

Ցա՛ճ, ցա՛ճ, ցա՛ճ: Քանի որ Ալիսն ուրիշ անելիք չունեիր, սկսեց նորից խոսել.

— Հաստատ գիտեմ, այս գիշեր Դինան<sup>[4]</sup> ինձ կկարոտի: (Դինան նրա կատուն էր): Երևի մերոնք թեյի ժամին չեն մոռանա նրան կաթ տալ: Դինա, սիրելիս, երանի հիմա մոտս լինեիր: Ափսոս, օդում մկներ չկան, բայց դու կարող ես չղջիկ բռնել: Գիտես չէ՞, որ չղջիկն ու մուկն իրար նման են: Հետաքրքիր է, կատուն չղջիկ ուտո՞ւմ է<sup>[5]</sup>:

Այստեղ Ալիսի քունը տարավ, բայց նա շարունակեց կես քուն, կես-արթուն միալար կրկնել.

— Իսկ չղջիկն աղջիկ ուտո՞ւմ է, չղջիկն աղջիկ ուտո՞ւմ է, երբեմն էլ, — աղջիկը չղջիկ ուտո՞ւմ է:

Ալիսը չէր կարող պատասխանել այս հարցերից և ոչ մեկին, ուստի միննույնն էր, թե որ հարցն է տալիս: Նա արդեն ննջում էր և երագում սկսել էր տեսնել, թե ինչպես Դինայի թաթը բռնած զբոսնում է և շատ լուրջ հարցնում նրան.

— Դե՛, Դինա, ճիշտն ասա, երբևէ չղջիկ կերե՞լ էս.

Մեկ էլ հանկարծ թրըմփ, թրըմփ, նա փովեց փայտերի կույտի ու չոր տերևների վրա և վայրէջքն ավարտվեց:

Ալիսի ոչ մի տեղը չցավեց նա մի ակնթարթում թռավ -կանգնեց ու նայեց չորս կողմը. գլխավերևում խավար էր: Դիմացը մի երկար միջանցք էր ձգվում, և երևում էր շտապ — շտապ հեռացող Մպիտակ ճագարը:

Վայրկյան անգամ կորցնել չէր կարելի: Ալիսը քամու նման առաջ սլացավ ու հասցրեց լսել անկյունում անհետացող ճագարի ձայնը.

— Վա՛յ իմ խեղճ գլխին, վա՛յ իմ խեղճ գլխին, ինչքա՛ն ուշացա:

Ալիսն արդեն մոտեցել էր ճագարին, բայց վերջինս նորից շրջվեց անկյունը: Ալիսը հայտնվեց երկար ու ցածր սրահում, որը լուսավորված էր առաստաղից կախված լապտերների շարքով:

Շուրջը բազմաթիվ դռներ կային, բոլորն էլ փակ: Բայց երբ Ալիսը շրջանցեց սրահը, փորձեց մեկ առ մեկ բացել մեկ մի կողմի դռները, մեկ մյուս, նա տխուր քայլեց դեպի սրահի կենտրոնն ու սկսեց մտածել, թե արդյո՞ք երբևէ իրեն կհաջողվի այդտեղից դուրս գալ: Հանկարծ նա մոտեցավ կարծր ապակուց պատրաստված եռոտանի մի սեղանի, որի վրա Փոքրիկ ոսկե բանալի կար: Ալիսի առաջին միտքն այն եղավ, որ այն դռներից որևէ մեկինն է: Բայց ավաղ, կամ փականքներն էին շատ մեծ,

կամ բանալին էր շատ փոքր նա այդպես էլ չբացվեց դռներից և ոչ մեկը: Այնուամենայնիվ, երկրորդ անգամ շրջանցելիս նա դեմ առավ մի ցածր վարագույրի, որ մինչ այդ չէր նկատել, ետևում մոտ տասնհինգ մատնաչափ բարձրության դուռ կար: Ալիսը ոսկե բանալին մտցրեց փականքի մեջ և, ո՛վ գարմանք, հարմարվեց.

Ալիսը բացեց դուռը և տեսավ, որ այն տանում է դեպի ճագարի բնից ոչ մեծ, մի նեղ անցք: Նա չոքեց ու անցքի միջով նայելով տեսավ մի հիասքանչ պարտեզ: Որքան էր ցանկանում դուրս գալ այդ մութ սրահից, զբոսնել երփներանգ ծաղկաթմբերի ու զով շատրվանների մոտ, բայց գլուխն անգամ չկարողացավ մտնել դռնից:

«Եթե գլուխս էլ մի կերպ հանեմ, — մտածեց խեղճ աղջիկը, օգուտ չունի, միևնույն է, ուսերս չեն անցնի: Ա՛խ, երանի հեռադիտակի պես ծալծլվեի, փոքրանայի: Ինձ թվում է կկարողանայի, եթե միայն ձևն իմանայի»

Ինչպես տեսնում եք, այնպիսի արտասովոր բաներ էին կատարվում որ Ալիսը մտածում էր, թե շատ քիչ բաներ կան իրոք անհնարին:

Այլևս վոքրիկ դռան մոտ սպասելը միտք չուներ: Եվ նա շտապ հետ գնաց դեպի սեղանը, կիսով չափ հույս ունենալով այնտեղ գտնել մեկ ուրիշ բանալի կամ գոնե կանոնների գիրք մարդկանց հեռադիտակի նման ծալծլվելու մասին: Այս անգամ նա սեղանի վրա գտավ մի շիշ (որն, իհարկե, նոր էր հայտնվել), որի վզիկի թղթե պիտակի վրա մեծ-մեծ տառերով գեղեցիկ տպագրված էր. «ԽՄԻՐ ԻՆՁ»:

Հեշտ է ասել՝ «ԽՄԻՐ ԻՆՁ», բայց փոքրիկ խելացի Ալիսը չէր շտապում այդ գործը հապճեպ անել:

— Նախ տեսնեմ, այստեղ «թույն» գրված է, թե ոչ:

Նա շատ հետաքրքիր կարճ պատմություններ էր կարդացել երեխաների մասին, որոնք վառվել, վայրի գազանների կեր էին դարձել և նման տհաճ բաներ, այդ ամենը այն պատճառով, որ փոքրերը հաճախ չէին հիշում մեծերի սովորեցրած հասարակ կանոնները: Օրինակ, եթե շիկացած կրակխառնիչը երկար ժամանակ բռնես, կվառի ձեռքդ, իսկ եթե մատդ դանակով շատ խոր կտրես՝ արյուն կգա: Ալիսը երբեք չէր մոռացել, որ եթե մի կաթիլ խմեր «թույն» պիտակ ունեցող շշից, վաղ թե ուշ անպայման փորը կցավեր:



Բայց քանի որ շշի վրա գրված չէր «թույն», Ալիսը համարձակվեց համոտես անել: Հեղուկը նրան դուրեկան թվաց (այն սերուցքով բալի կարկանդակի, անանասի, տապակած հնդկահավի, իրիսի ու տաք կարագահացի համեր ուներ) և շուտով խմեց-վերջացրեց պարունակությունը:

\* \* \*

— Մա ի՞նչ տարօրինակ զգացում է, — գոչեց Ալիսը, — կարծես ծալծլվում եմ հեռադիտակի նման:

Եվ իրոք: Նա դարձավ տասը մատնաչափ, և դեմքը պայծառացավ այն մտքից, որ ինքն արդեն ճիշտ այն չափսին է, որ կկարողանա անցնել փոքրիկ դռնից ու մտնել գեղատեսիլ պարտեզը: Բայց և այնպես սպասեց մի քանի րոպե՝ համոզվելու, որ այլևս չի փոքրանում:

Մեկ էլ տագնապահար մտածեց. «Իսկ եթե այսպես շարունակվի, մումի պես կհալվեմ-կվերջանամ: Հետաքրքիր է, ինչի՞ կնմանվեմ ես այն ժամանակ»: Նա փորձեց պատկերացնել, թե ինչպիսին կլինի բոցը մումի հանգչելուց հետո: Ինչքան որ հիշում էր, երբեք նման բան չէր տեսել կյանքում:

Քիչ անց, երբ Ալիսն արդեն համոզվեց, որ այլևս չի կարճանում, անմիջապես որոշեց դուրս գալ պարտեզ, բայց ափսոս, խեղճ աղջիկ, երբ հասավ դռանը, հիշեց, որ մոռացել էր վերցնել փոքրիկ բանալին: Իսկ երբ մոտեցավ սեղանին, ձեռքը չհասավ բանալուն, չնայած ապակու միջից պարզ տեսնում էր: Ալիսը շատ ջանք թափեց մագլցելու սեղանի ոտքերից մեկի վրայով, բայց այն չափազանց սահուն էր, իսկ երբ հոգնեց, խեղճ պստիկը նստեց հատակին ու արտասվեց:

— Իզուր ես լաց լինում, — ինքն իրեն նախատեց Ալիսը, — բավական է, քեզ ասում եմ. հենց այս րոպեին ձայնդ կտրի՛ր:

Սովորաբար լավ խորհուրդներ էր տալիս իրեն (թեպետ հազվադեպ էր կատարում դրանք), երբեմն էլ ինքն իրեն այնպես դաժան էր նախատում, որ աչքերում արցունքներ էին հայտնվում: Նա հիշեց, որ մի անգամ վարձել էր, ապտակել իրեն, որովհետև ինքն իր հետ քրոքեթ խաղալիս խաբել էր: Այս տարօրինակ երեխան շատ էր սիրում երկու հոգու դեր կատարել:

«Հիմա այլևս դա հնարավոր չէ, — մտածեց խեղճ Ալիսը, — այնքան եմ փոքրացել, որ մի կարգին մարդ հազիվ դուրս գա ինձնից»:

Հանկարծ սեղանի տակ մի փոքրիկը ապակե տուփ նկատեց: Շտապ բաց արեց ու մեջը գտավ մի փոքրիկը կարկանդակ, որի վրա հաղարջներով գեղեցիկ գրված էր. «ԿԵՐ ԻՆՁ»:

— Լավ, կուտեմ, — որոշեց Ալիսը, — և եթե սա ինձ մեծացնի, կսողամ դռան տակից, այնպես, որ երկու դեպքում էլ պարտեզ կընկնեմ, իսկ դրանից հետո ինչ ուզում է թող լինի:

Ալիսը կծեց մի պատառ ու ձեռքը գլխին պահած անհանգստացած մտածեց՝ «Մեծանու՞մ եմ, թե՞ փոքրանում: Մեծանու՞մ եմ, թե՞ փոքրանում», որպեսզի զգա փոփոխությունը, բայց խիստ զարմացավ, երբ մնաց նույն չափսին: Հավատացած եղեք, սովորաբար այսպես է լինում կարկանդակ ուտելիս: Սակայն Ալիսն այնքան էր վարժվել տարօրինակություններին, որ կյանքը ձանձրալի ու անիմաստ թվաց, երբ արտակարգ ոչինչ չկատարվեց:

Նա գործի անցավ ու շատ շուտով վերջացրեց կարկանդակը:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՑՈՒՆՔԻ ԼՃԱԿԸ**

— Սա ի՞նչ տարօրինակագույն զգացում է, — բացականչեց Ալիսը (նա մի պահ զարմանքից բոլորովին մոռացավ ճիշտ խոսելը): — Այժմ ես բացվում եմ աշխարհի ամենամեծ հեռադիտակի նման: Գնաք բարով, ոտքեր: (Երբ ուզեց նայել ոտքերին, չկարողացավ տեսնել, որովհետև դրանք գնալով հեռանում էին):

— Վա՛յ, իմ խեղճ ոտքեր: Տեսնես ով հիմա ձեզ գուլպաներ ու կոշիկներ կհագցնի, սիրելիներս: Հաստատ գիտեմ, ես չեմ կարող, ես շատ հեռու կլինեմ: Դուք ինքներդ մի կերպ գլուխ կբերեք այդ գործը: «Բայց նրանց հանդեպ պետք է բարի լինել, — մտածեց Ալիսը, — թե չէ կհրաժարվեն ուզածս տեղը գնալ: Ապա տեսնեմ, ամեն Ծննդյան տոնին ես նրանց պետք է մի գույգ նոր կոշիկ նվիրեմ»:

Հանկարծ սեղանի տակ մի փոքրիկ ապակե տուփ նկատեց:

Եվ սկսեց ծրագրել, թե ինչպես իրագործի այդ բոլորը:

— Կոշիկները պետք է ուղարկել ցրիչի միջոցով, — շարունակեց նա, — ինչքան ծիծաղելի է՝ նվերներ ուղարկել սեփական ոտքերին: Եվ որքան տարօրինակ կլինի հասցեն.

Ալիսի Նորին մեծությունն աջ ոտքին,  
Գորգիկ,  
Բուխարիկի ցանցի դիմաց:

*Ողջույններով՝ Ալիս:*

— Է՛հ, ինչ հիմարություններ եմ դուրս տալիս:

Հենց այդ պահին նրա գլուխը զարնվեց առաստաղին: Իրականում նա հիմա ավելի քան ինը ոտնաչափ էր և անմիջապես վերցրեց փոքրիկ ոսկե բանալին ու շտապեց դեպի պարտեզ տանող դուռը:

Խե՛ղճ Ալիս: Նա միայն կարողացավ մի կողքի պառկել ու մի աչքով նայել դռան անցքից, դուրս գալն այժմ ավելի անհուսալի էր, քան առաջ: Նա նստեց և սկսեց նորից լաց լինել:

— Ամո՛թ քեզ, մեծ աղջիկ ես (նա այդպես էլ ասաց), ու շարունակ լաց ես լինում: Չայնդ կտրի՛ր, լսու՛մ ես:

Բայց միևնույն է, արցունքները հեղեղի նման թափվում էին, մինչև որ նրա շուրջը գոյացավ չորս մատնաչափ խորության մի լճակ, որը գրավեց սրահի կեսը:

Քիչ անց Ալիսը հեռվից թեթև ոտնաձայն լսեց և արագ սրբեց աչքերը՝ տեսնելու եկողին: Սպիտակ ճագարն էր: Նա հիանալի հագնված էր, մի ձեռքին բռնել էր մի գույգ ճերմակ, փայլուն կաշվե ձեռնոց, իսկ մյուսին՝ մի մեծ հովհար: Քթի տակ մոթմոթալով, նա շտապ-շտապ թռչկոտելով քայլում էր:

— Ա՛խ, Դքսուհի, Դքսուհի, հիմա երևի զայրացել է, որ իրեն սպասել եմ տալիս:

Ալիսն այնքան էր հուսահատվել, որ պատրաստ էր առաջին իսկ հանդիպածից օգնություն խնդրելու, ուստի երբ ճագարը մոտեցավ, սկսեց երկչոտ ձայնով թախանձել.

— Խնդրում եմ, ինձ լսեք...

Ճագարը ուժգին ցնցվեց, վայր զցեց հովհարը, կաշվե ձեռնոցը և ինչքան ուժ ուներ նետվեց առաջ ու չքացավ մթության մեջ:

Ալիսը բարձրացրեց դրանք և, որովհետև սրահում տոթ էր, սկսեց արագ-արագ հովհարել իրեն ու հետն էլ խոսել.

— Ա՛խ, տեր աստված, այս ինչ բան է, այսօր ամեն ինչ տարօրինակ է, իսկ երեկ կյանքը սովորականի պես էր: Տեսնես ի՞նչ փոփոխություն է կատարվել ինձ հետ այս գիշեր: Սպասիր, հիշեմ, այս առավոտ ես ինչպիսին էի: Կարծես թե հիշում եմ, մի քիչ փոխվել եմ: Այո, բայց եթե ես նույնը չեմ, ապա հաջորդ հարցն այս է՝ ով եմ ես, այ քեզ բարդ հանելուկ: — Եվ սկսեց մտածել իր տարիքի այն բոլոր երեխաների մասին, որոնց գիտեր, որպեսզի տեսնի, թե արդյոք ինքը չի նմանվել նրանցից որևէ մեկին:

— Չէ, ես Ադան չեմ, որովհետև նրա մազերը երկար են ու գանգուր, իսկ իմը՝ բոլորովին էլ գանգուր չեն: Մեյբլն էլ չեմ, որովհետև ես ամեն ինչ գիտեմ, իսկ նա՝ մի բան էլ չգիտի: Բացի այդ, նա՝ նա է, իսկ ես՝ ես: Ա՛խ, այս ինչ բան է, ամեն ինչ խառնեցի: Ապա մի փորձեմ, տեսնեմ կկարողանամ որևէ բան հիշել: Չորս անգամ հինգ հավասար է տասներկուսի, չորս անգամ վեց՝ տասներեքի, չորս անգամ յոթ... չէ, չեղավ, այսպես երբեք քսանի չեմ հասնի<sup>[6]</sup>: Բայց բազմապատկման աղյուսակը չիմանալը դեռևս ոչինչ չի նշանակում: Հիմա էլ անցնեմ աշխարհագրությանը: Լոնդոնը Փարիզի մայրաքաղաքն է, իսկ Փարիզը՝ Հռոմի, իսկ Հռոմը... Չէ, հաստատ գիտեմ, ամեն ինչ սխալ է: Ուրեմն, ես Մեյբլն եմ դարձել: Սպասիր, անգիր ասեմ «Մեր փոքրիկ կոկորդիլոսը» ոտանավորը: — Նա ձեռքերը ծալեց ծնկներին, կարծես դաս էր պատասխանում ու սկսեց արտասանել, սակայն ձայնը հնչում էր խոպոտ ու տարօրինակ, իսկ խոսքերն էլ ճիշտ չէին ստացվում.

Մեր փոքրիկ կոկորդիլոսը  
Լավ է պոչը խնամում.  
Ամեն օր մտնում Նեղոսը՝  
Թեփուկներն է լվանում:

Այնպես սիրալիր ժպտում է

Սուր ճանկերը բացելիս,  
Հկնիկներին բարևում է  
Ու մեղմ նրանց կուլ տալիս<sup>[7]</sup>:

— Չէ՛, հաստատ գիտեմ, ճիշտ չէ, — հուսահատվեց խեղճ աղջիկը, և աչքերը նորից արցունքով լցվեցին, — ուրեմն ես Մեյբլն եմ և ստիպված պիտի ապրեմ նրա աղքատիկ տնակում, ոչ մի խաղալիք չունենամ և անչափ շատ դասեր սովորեմ: Ո՛չ, արդեն որոշեցի: Եթե ես Մեյբլն եմ, կմնամ այստեղ: Թող ոչ ոք իզուր գլուխը ջրհորի մեջ չկախի ու չբողակի: «Դուրս արի, սիրելիս»: Ես միայն վեր կնայեմ ու կհարցնեմ. «Խնդրում եմ, սկզբից ասացեք, ո՞վ եմ ես հիմա», իսկ հետո եթե ընդունեմ նրանց ասածը, դուրս կգամ, եթե ոչ՝ կմնամ այստեղ այնքան ժամանակ, մինչև որ իմ ուզած մարդը դառնամ:

— Այս ի՞նչ բան է, — կրկին լացակումեց Ալիսը, — երանի մեկը մոտենար ջրհորին, ես այնքան հոգնել եմ այստեղ մենակ մնալուց: — Սրա վրա աղջիկը նայեց ձեռքերին ու զարմացավ, որ խոսելիս հագել էր ճագարի փոքրիկ, ճերմակ ձեռնոցը:

«Այս ինչպե՞ս պատահեց, — մտածեց նա, — ուրեմն՝ նորից պիտի փոքրանամ»:

Նա վեր կացավ ու հասակը չափելու համար մոտեցավ սեղանին և գլխի ընկավ, որ այժմ ինքը մոտ երկու ոտնաչափ բարձրության էր ու շարունակում էր արագ փոքրանալ: Շուտով գլխի ընկավ, որ ձեռքին բռնած հովհարն է պատճառը և այլևս չփոքրանալու, բոլորովին չանհետանալու համար շտապ վայր գցեց այն:

— Լավ պրծա<sup>[8]</sup>, — վախեցած հանկարծակի փոփոխությունից, բայց ուրախ, որ դեռևս գոյություն ունի, շունչ քաշեց Ալիսը, — իսկ հիմա գնամ պարտեզ: — Եվ ամբողջ ուժով ետ վազեց դեպի փոքրիկ դուռը, բայց ավաղ, այն նորից փակ էր, ոսկե բանալին էլ առաջվա նման ապակե սեղանին էր:

— Ինձ ոչ մի բան չի հաջողվում, — դժգոհեց խեղճ երեխան, — ես երբեք այսքան կարճ չեմ եղել: Խոստովանում եմ, զգվելի բան է փոքր լինելը:

Այս խոսքերն ասելուն պես Ալիսը սայթաքեց և հաջորդ վայրկյանին չլքմփ, մինչև կգակը սուզվեց աղի ջրի մեջ: Նրա առաջին միտքն այն եղավ, որ ծովն էր ընկել:

— Այդ դեպքում կարող եմ գնացքով վերադառնալ, — ուրախացավ Ալիսը:

(Նա միայն մի անգամ էր ծովափում եղել և այն եզրակացությանն էր հանգել, որ ուր էլ գնաս անգլիական ծովեզրով, միշտ էլ ծովի վրա բազմաթիվ հանվելու անվավոր խցիկներ կտեսնես ափին, փայտե բահերով ավազը փորոդ երեխաներ, այնուհետև կգան շարքով կահավորված տնակներ, իսկ դրանց հետևում՝ երկաթուղային կայարանը): Բայց և այնպես շուտով հասկացավ, որ ինքն ընկել է իր արցունքներից գոյացած լճակը, երբ լաց էր եղել ինը մատնաչափ եղած ժամանակ:

— Երանի այդքան շատ լացած չլինեի, — ասաց Ալիսը ելք գտնելու համար այս ու այն կողմ լողալով, — ինձ թվում է, ես պետք է պատժվեմ խեղդվելով իմ սեփական արցունքների մեջ: Այ թե տարօրինակ բան կլինի, հա: Դե, այսօր ամեն ինչ տարօրինակ է:

Հենց այդ պահին Ալիսը մոտերքում ճողփյուն լսեց ու լողալով մոտ գնաց, տեսնելու թե ով էր չփչփացնողը: Սկզբում նրան թվաց, թե ջուրն ընկնողը ծովացուլ է կամ գետաձի, հետո հիշեց, թե որքան փոքր է ինքը և շուտով պարզվեց, որ դա սոսկ մուկ է, որն իր նման սահել ընկել էր լիճը:

«Արժե արդյոք մկան հետ խոսել, — մտածեց Ալիսը, — ամեն ինչ այստեղ այնքան արտասովոր է, որ ինձ թվում է, թե մուկն էլ կարող է խոսել: Համենայն դեպս փորձեմ. դրանից վնաս չկա»:

— Ո՛վ Մուկ, դուք գիտեք այս լճակից դուրս գալու ճանապարհը: Ո՛վ Մուկ, ես անչափ հոգնել եմ:

(Ալիսին թվաց, թե դա է մկան հետ խոսելու ճիշտ ձևը:

Նա երբեք մկների հետ չէր խոսել, բայց հիշեց, որ եղբոր լատիներենի քերականության գրքում կարդացել է. «Մուկ, մկան, մկի, մուկ, ո՛վ մուկ»):

Մուկը հարցական նայեց, Ալիսին թվաց, թե իրեն աչքով արեց՝ փակելով փոքրիկ աչքերից մեկը, բայց լուռ մնաց: «Երևի անգլերեն չի հասկանում: Միգուցե սա ֆրանսիական մուկ է, որ Վիլհելմ Նվաճողի ժամանակից է մնացել», — մտածեց Ալիսը:

(Չնայաց Ալիսը պարծենում էր պատմության իր գիտելիքներով, բայց պատկերացում անգամ չուներ, թե քանի տարի առաջ են կատարվել այդ դեպքերը):

Եվ նորից սկսեց խոսել.

— Ou est ma chatte?<sup>[9]</sup>

Դա նրա ֆրանսերենի դասագրքում եղած առաջին նախադասությունն էր: Մուկն անսպասելիորեն դուրս ցատկեց ջրից՝ ամբողջ մարմնով դողալով սարսափից:

— Ա՛խ, ներեցեք ինձ, — անմիջապես սխալն ուղղեց Ալիսը, վախենալով, որ վիրավորել է խեղճ կենդանու ինքնասիրությունը, — ես բոլորովին մոռացել էի, որ դուք կատուներին չեք սիրում:

— Չեմ սիրում կատուներին, — ծվծվաց Մուկը սուր կրքոտ ձայնով, — իսկ եթե դու իմ տեղը լինեիր, կսիրեի՞ր:

— Դե, միգուցե ոչ, — մեղմ պատասխանեց Ալիսը, — մի բարկացեք: Բայց նայնպես շատ կուզենայի ձեզ ցույց տալ իմ Դինա կատվին: Ինձ թվում է, դուք կսիրեիք նրան, եթե միայն տեսնեիք Դինային: Այնքան հեզ ու բարի կենդանի է, — ծուլորեն լողալով լճակում պատմում էր նա, — Դինան նստում է վառարանի կողքին և այնպես գեղեցիկ մոլտում՝ լիզելով թաթերն ու դեմքը: Իսկական հաճույք է նրան խնամելը: Իսկ մուկ բռնելու մեջ մեծ վարպետ է... Ա՛խ, ներեցեք ինձ, — նորից գոչեց Ալիսը, որովհետև հասկացավ, որ իրոք վիրավորել էր նրան, քանի որ Մուկն ամբողջովին փշաքաղվել էր:

— Եթե ձեզ հաճելի չէ, մենք այլևս Դինայի մասին չենք խոսի:

— Իհարկե ոչ, — Մուկը մինչև պոչի ծայրը դողում էր, — կարծես թե շատ եմ ուզում այդ մասին խոսել: Մեր ցեղը միշտ ասել է կատուներին, այդ գարշելի, զզվելի, ստոր արարածներին, ես այլևս չեմ ուզում լսել դրանց անունը:

— Էլ չեմ խոսի: — Ալիսը շտապեց փոխել խոսակցության նյութը: — Դուք... Դուք սիրո՞ւմ եք շներին:

Մուկը չպատասխանեց, այնպես որ Ալիսը տաքացած շարունակեց.

— Մի սիրունիկ շնիկ կա մեր հարևանի տանը: Ես կուզեի, որ դուք տեսնեիք նրան: Փոքրիկ, փայլուն աչքերով որսաշուն է. երկար, գանգուր, շագանակագույն մազեր ունի: Երբ մի բան ես նետում, անմիջապես օդում որսում է: Խելոք նստում է մինչև իրեն ճաշ տան և շատ ու շատ նման բաներ, որոնց կեսն անգամ չեմ հիշում: Նա պատկանում է մի ազարակատիրոջ, որն ասում է, թե այդ շունը չափազանց օգտակար է. նա հարյուր ֆունտ արժե, որսում է բոլոր տեսակի առնետներին: Ա՛խ, ներեցեք, — հուզվեց Ալիսը, — ես ձեզ դարձյալ վիրավորեցի:

Մուկը հնարավորին չափ հեռու էր լողում նրանից ալեկոծելով լիճը:

Ալիսը մեղմորեն կանչեց նրա հետևից.

— Սիրելի Մուկ, եթե դուք չեք սիրում կատուներին ու շներին, մենք այլևս չենք խոսի նրանց մասին: Խնդրում եմ, վերադարձեք:

Երբ Մուկը լսեց այդ խնդրանքը, շրջվեց ու դանդաղ հետ լողաց: Մկան դեմքն ամբողջովին գունատ էր: «Բարկությունից կլինի», — մտածեց Ալիսը:

— Դուրս գանք ափ, և այնտեղ ես քեզ կպատմեմ իմ կյանքը և դու կհասկանաս, թե ինչո՞ւ եմ ասում կատուներին ու շներին, — ցածր, դողդոջուն ձայնով ասաց Մուկը: Վաղուց արդեն դուրս գալու ժամանակն էր, որովհետև լճակի վրա ազատ տեղ չէր մնացել: Բազմաթիվ թռչուններ ու կենդանիներ էին ընկել ջրի մեջ՝ Բադ Ռոբինը, Դոդոն, Լորը, Արծվիկ Էդը<sup>[10]</sup>: Ալիսի գլխավորությամբ ամբողջ խումբը լողաց դեպի ափ:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

### **ՎԱԶՔԻ ՄՐՑՈՒՄ և ԵՐԿԱՐ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Ափին հավաքվածներն իրոք արտառոց տեսք ունեին: Թռչունների փետուրները կեղտի մեջ կորել էին, կենդանիները կուչ էին եկել իրենց մորթիների մեջ, բոլորն էլ թրջված էին, բարկացած ու դժգոհ:

Նախ անհրաժեշտ էր չորանալ: Նրանք խորհրդակցեցին, և քիչ անց Ալիսին շատ բնական թվաց, որ ինքն ընկերաբար գրուցում է խմբի հետ, կարծես ամբողջ կյանքում ճանաչել է նրանց: Նա երկար-բարակ վիճաբանեց Լորի հետ, որն ի վերջո խոժոռվեց ու մեծահոգաբար նետեց.

— Ես քեզնից մեծ եմ և քեզնից լավ գիտեմ:



Լորի ասածը բավական չէր. Ալիսը ցանկացավ իմանալ նրա տարիքը: Իսկ երբ Լորը կտրականապես հրաժարվեց տարիքն ասելուց՝ խոսակցությունն ավարտվեց:

Վերջապես, Մուկը, որ նրանց մեջ որոշ հեղինակություն էր վայելում, բացականչեց.

— Նստե՛ք և բոլորդ ուշադիր ինձ լսեք: Ես ձեզ իսկույն կչորացնեմ: — խումբն անմիջապես լայն շրջան կազմած նստեց Մկան շուրջը: Ալիսն անհանգստացած աչքերը հառել էր Մկան վրա, որովհետև վախենում էր հիվանդանալ, եթե անմիջապես չչորանար:

— Ըհըմ, ըհըմ, — ծանրակշիռ հազաց Մուկը, — պատրա՞ստ եք: Սա՛ է չորանալու ինձ հայտնի ամենալավ միջոցը: Բարեհաճեք լռել: Վիլիելմ Նվաճողը Պապի օրհնությամբ շուտով հնազանդեցրեց անգլիացիներին, որոնք կարիք ունեին ամուր իշխանության և նրանց համար սովորական բաներ էին նվաճումներն ու գահ հափշտակելը: Էդվինը, Մորքարը, Մերսիայի և Նորթամբրիայի կոմսերը<sup>[11]</sup>...

— Սառեցի, — սվսվացրեց Լորը:

— Ներեցեք, խնդրեմ, — խոժոռվեց Մուկը ու քաղաքավարությամբ հարցրեց, — դուք ինչ-որ բան ասացիք:

— Ես չեի, — վրա բերեց Լորը:

— Ինձ թվաց, խոսողը դուք էիք, — ասաց Մուկը, — շարունակում եմ: Էդվինը, Մորքարը, Մերսիայի և Նորթամբրիայի կոմսերը նրա կողմն անցան, նույնիսկ Սթիգանդը՝ Բենթրբերիի հայրենասեր արքեպիսկոպոսը գտավ, որ...

— Ի՞նչ գտավ, — հարցրեց Բադը:

— Գտավ, որ, անհրաժեշտ է... — գայրացավ Մուկը, — իհարկե, դուք գիտեք, թե ինչ է նշանակում դա:

— Շատ լավ գիտեմ, թե ինչ է նշանակում, — ասաց Բադը, — երբ ես որևէ բան եմ գտնում, իսկ դա սովորաբար գորտ կամ որդ է լինում, անհրաժեշտ եմ համարում ուտել: Հարցն այն է, թե ինչ գտավ արքեպիսկոպոսը:

Մուկն ուշադրություն չդարձրեց այդ հարցին և վրա տալով շարունակեց.

— Գտավ, որ անհրաժեշտ է գնալ Էդգար Աթելինգի հետ Վիլյամին դիմավորելու ու գահն առաջարկելու նրան: Սկզբում Վիլյամի վարմունքը շատ ազնիվ էր, բայց նորմանների հանդգնությունը... Ինչպե՞ս ես քեզ զգում, սիրելիս, — Ալիսին դիմեց Մուկը:

— Առաջվա նման թաց եմ, — տխուր պատասխանեց Ալիսը, — կարծես բոլորովին չեմ չորանում:

— Այդ դեպքում, — հանդիսավոր ոտքի ելնելով հայտարարեց Դոդոն, — ես առաջարկում եմ ընդհատել ժողովը՝ անհապաղ ավելի գործնական միջոցներ ձեռք առնելու համար:

— Ի՞նչ եք դուրս տալիս, — սրտնեղեց Արծվիկը, — ես այդ երկար խոսքերի կեսից ավելին չեմ հասկանում: Դեռ ավելին, չգիտեմ, ձեր ասածը գոնե դուք հասկանո՞ւմ եք:

Արծվիկը ծիծաղը թաքցնելու համար իջեցրեց գլուխը: Թռչուններից ոմանք բարձր քրքջացին:

— Այն, ինչ ես մտադիր եմ ասելու, — վիրավորված շարունակեց Դոդոն, — հետևյալն է. չորանալու ամենալավ միջոցը վազքի մրցումն է:

— Ի՞նչ բան է դա, — հարցրեց Ալիսը, լոկ նրա համար, որ Դոդոն բազմանշանակալից լռեց, սպասելով, որ մեկնումեկը ձայն կհաներ, բայց նրանցից և ոչ մեկը հակված չէր խոսելու:

— Դե, ինչ բացատրեմ, — շարունակեց Դոդոն, — ավելի լավ է ցույց տամ: (Գուցե ձմռան մի օր դո՞ւք էլ ցանկանաք փորձել Դոդոյի ասածը: Ես ձեզ կպատմեմ, թե նա ինչպես գլուխ բերեց այդ գործը):

Սկզբում նա մի շրջան գծեց. «Այնքան էլ հաջող չստացվեց, բայց ճիշտ ձևը կարևոր չէ» — եզրակացրեց Դոդոն, որից հետո ամբողջ խումբը ցաքուցրիվ տեղավորվեց շրջանի շուրջը: Ոչ ոք չասաց. «Մեկ, երկու, երեք, առաջ»: Յուրաքանչյուրն ուզած ժամանակ վազում էր և ուզած ժամանակ կանգ առնում, այնպես որ դժվար է ասել, թե երբ ավարտվեց մրցումը: Այնուամենայնիվ, երբ նրանք արդեն մոտ կես ժամ վազել էին և բոլորն էլ լրիվ չորացել, Դոդոն հանկարծ հայտարարեց.

— Մրցումն ավարտված է:

Թռչուններն ու կենդանիները խմբվեցին նրա շուրջը և շնչակտուր հարցրին.

— Ո՞վ շահեց:

Առանց երկար մտածելու Դոդոն չէր կարող պատասխանել այդ հարցին: Նա մատը դրեց ճակատին ու մտազբաղ նստեց (այն դիրքով, որ սովորաբար տեսնում էք Շեքսպիրին նկարներում), իսկ մնացածները համբերությամբ սպասում էին:

Վերջապես Դոդոն ասաց.

— Բոլորն էլ շահեցին և բոլորն էլ պետք է մրցանակ ստանան:

— Իսկ ո՞վ է բաշխելու դրանք,— միաբերան հարցրին նրանք:

— Դե, իհարկե, նա, — Դոդոն մատնացույց արեց Ալիսին:

Խումբն աղմուկ-աղաղակ բարձրացնելով խոնվեց Ալիսի շուրջը.

— Մրցանակները, մրցանակները...

Ալիսը չզիտեր ինչ անել, նա հուսահատ ձեռքը տարավ գրպանը, դուրս հանեց քաղցրավենիքով լի մի տուփ (բարեբախտաբար աղի ջուրը չէր թափանցել մեջը) և բաժանեց դրանք որպես մրցանակ: Յուրաքանչյուրին բաժին ընկավ մեկ հատ:

— Գիտե՞ք ի՞նչ, նա ինքն էլ պետք է մրցանակ ստանա, — ասաց Մուկը:

— Իհարկե, — լուրջ արձագանքեց Դոդոն և դիմեց Ալիսին, — ուրիշ ի՞նչ կա գրպանումդ:

— Միայն մի մատնոց, — տխուր ասաց Ալիսը:

— Տուր այստեղ, — կարգադրեց Դոդոն:

Հետո նրանք դարձյալ խմբվեցին Ալիսի շուրջը, և Դոդոն հանդիսավորությամբ մատնոցը հանձնեց Ալիսին.

— Մենք խնդրում ենք ընդունել այս շքեղ մատնոցը:

Երբ Դոդոն վերջացրեց իր կարճ ճառը, խումբը ցնծության ճիչեր արձակեց:

Չնայած այդ բոլորը Ալիսին հիմարություն էր թվում, բայց նրանք այնքան լուրջ տեսք ունեին, որ նա չհամարձակվեց ծիծաղել, այլ ստիպված

արժանապատվությամբ խոնարհվեց ու վերցրեց ընծան՝ հնարավորին չափ հանդիսավոր կեցվածք ընդունելով:

Երբ հերթը հասավ քաղցրավենիքներն ուտելուն՝ տուր ու դմփոց, գոռում-գոչուն բարձրացավ: Մեծ թռչունները բողոքում էին, որ համն անգամ չտեսան, իսկ փոքրերն ուտելիս խեղդվում էին և ստիպված նրանց մեջքներին թփթփացնում էին: Այնուամենայնիվ, ամեն ինչ բարեհաջող վերջացավ, նրանք նորից շրջան կազմած նստեցին ու խնդրեցին Մկանը մի բան պատմել:

— Դուք ինձ խոստացաք ձեր պատմությունն ասել, — ասաց Ալիսը և, որպեսզի չվիրավորի նրան, շշուկով ավելացրեց, — թե ինչո՞ւ եք ասում «Կ»-երին ու «Շ»-երին:

— Այս պատմությունը երկար ու տխուր վերջավորություն ունի, — ծանր հառաչեց Մուկը շրջվելով դեպի Ալիսը:

— Իրոք որ երկար վերջավորություն է, — նայելով Մկան պոչին՝ հաստատեց Ալիսը, — բայց ինչո՞ւ եք այն տխուր համարում:

Մինչ Մուկը խոսում էր, Ալիսը մտածում էր ու մտածում, և նրա երևակայության մեջ Մկան պատմությունը գծագրվում էր հետևյալ կերպ.

Քուրթիկն ասաց մկանը,  
որին բռնեց իր տանը. «Քեզ  
դատարան քարշ կտամ,  
էնտեղ հախիցդ  
կգամ: Ոչ մի հեր-  
քում ու բողոք, թող  
լինի դատն ան-  
ողոք: Մեկ է, էս-  
օր անգործ եմ,  
ինքս սիրով կը-  
փորձեմ»: Պա-  
տասխանեց Մուկն  
այդժամ. «Ախր,  
պարոն հարգարժան,

Էս ի՞նչ դատ է  
ահավոր, որը  
չունի դատա-  
վոր: Առանց  
նրա մենք ի՞նչ  
ենք: Զուր տեղն  
ինչո՞ւ ջուր ծե-  
ծենք»: «Այդ  
իրավունքն ինձ  
կտաք, — ասաց  
շունը խորա-  
մանկ, — ինքս  
պիտի քեզ  
դատեմ ու  
մահվան  
դատա-  
պար-  
տեմ»<sup>[12]</sup>:

— Դու անուշադիր ես, — բարկացավ Մուկը, — ինչի՞ մասին ես մտածում:

— Ոչ, ինչո՞ւ, լսում եմ, — շատ խոնարհ ասաց Ալիսը, — բայց ինձ թվում է  
դուք արդեն հինգերորդ ոլորքին հասաք:

— Տանել չեմ կարող, — զայրացած ծղրտաց Մուկը:

— Ի՞նչը չեք կարող տանել, — անհանգստացավ Ալիսը ծառայելու միշտ  
պատրաստ, — տվեք ձեզ օգնեմ:

— Ես այդպիսի բան թույլ չեմ տա, դու ինձ վիրավորում ես նման  
հիմարություններ դուրս տալով, — Մուկը ոտքի ելավ ու հեռացավ:

— Ես բոլորովին չուզեցի ձեզ վիրավորել, — խեղճացավ Ալիսը, —  
իմիջիպայլոց, դուք շարունակ վիրավորվում եք:

Ի պատասխան Մուկը միայն գոմոաց.

— Խնդրո՛ւմ եմ, հետ եկեք և վերջացրեք ձեր պատմությունը, — նրա  
հետևից կանչեց Ալիսը:

Բոլորն էլ միաձայն աղաղակեցին.

— Խնդրում ենք, վերջացրեք:

Բայց Մուկը միայն բացասաբար շարժեց գլուխը և քայլերն արագացրեց:

— Ափսոս, նա այլևս հետ չի գա, — հառաչեց Լորին, հենց որ Մուկը չքացավ տեսադաշտից:

Պառավ խեցգետինը առիթից օգտվելով նախատեց իր դաստիկին.

— Տե՛ս, սիրելիս, թող սա քեզ համար դաս լինի, որ երբեք չափոջ կորցնես:

— Լռի՛ր, մայրիկ, — զայրացավ ջահել խեցգետինը, — դու ընդունակ ես Ոստրեին անգամ համբերությունից հանելու:

— Եթե մեր Դինան այստեղ լիներ, ես գիտեի, թե ինչ կանեի, — իմիջիայլոց քարձրածայն ասաց Ալիսը, — նա անմիջապես Մկանը հետ կբերեր:

— Իսկ ո՞վ է Դինան, համարձակվում եմ հարցնել, — հետաքրքրվեց Լորին:

Ալիսը, որ միշտ պատրաստ էր խոսել իր սիրելիի մասին, եռանդուն բացատրություն տվեց.

— Դինան մեր կատուն է: Նա կատարյալ վարպետ է մուկ բռնելու մեջ: Չեք կարող պատկերացնել, թե ինչպես է թռչունների հետևից վագ տալիս: Բռնելն ու ուտելը մեկ է լինում:

Խոսակցությունն արտակարգ իրարանցում առաջացրեց խմբի մեջ: Մի քանի թռչուն անմիջապես փախուստի դիմեցին: Ծեր կաշաղակը կուչ գալով շատ զգույշ պատրաստվեց գնալու:

— Ես պետք է անհապաղ տուն գնամ: Գիշերվա օդը կոկորդիս համար վնասակար է:

Իսկ Դեղձանիկը վախեցած ձայնով կանչեց իր ձագուկներին.

— Գնացի՛նք, սիրելիներս, արդեն ուշ է, ձեր քնելու ժամը վաղուց է անցել:

Զանազան պատրվակներ բերելով խումբը հեռացավ և Ալիսը շատ շուտով մնաց բոլորովին մենակ:

— Երանի Դինայի անունը տված չլինեի, — տխրեց նա, — այստեղ նրան ոչ ոք չի սիրում: Բայց նայնպես նա աշխարհի ամենալավ կատուն է: Ա՛խ, իմ սիրելի Դինա, արդյոք բախտս կբերի, քեզ նորից կտեսնեմ:

Եվ խեղճ աղջիկը միայնակ ու հուսահատ սկսեց կրկին լաց լինել: Քիչ անց նա հեռվից թեթև ոտնաձայն լսեց ու արագ շրջվեց հույսը չկտրած, թե Մուկը միտքը փոխել է ու հետ է գալիս վերջացնելու իր պատմությունը:

## **ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ**

### **ՃԱԳԱՐԸ ՆԵՐՍ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՓՈՔՐԻԿ ԲԻԼԻՆ**

Եկողը Սպիտակ ճագարն էր: Նա դանդաղաքայլ առաջանում էր, անհանգստացած այս ու այն կողմ նայելով, կարծես ինչ-որ բան էր Փնտրում: Ալիսը լսեց, թե ինչպես ճագարը փնթփնթաց քթի տակ.

— Դքսուհին, Դքսուհին, վա՛յ իմ խեղճ գլխին, այս ինչ փորձանքի մեջ ընկա: Նա ինձ գլխատել կտա, դա այնպես պարզ է, ինչպես մեկ անգամ մեկ: Չեմ հասկանում, որտե՞ղ եմ կորցրել դրանք:

Ալիսն իսկույն կռահեց, որ ճագարը հովհարն ու կաշվե ձեռնոցն էր փնտրում, և ինքն էլ սկսեց բարեխղճորեն փնտրել, բայց ոչ մի տեղ չկարողացավ գտնել: Արցունքի լճակից հետո ամեն ինչ կարծես փոխվել էր: Մեծ սրահը, ապակե սեղանն ու փոքրիկ դուռն անհետացել էին:

Շուտով ճագարը նկատեց Ալիսին ու բարկացած ձայնեց.

— Հե՛յ, Մերի Աննա, ինչ ես անում այստեղ, իսկույն վազիր տուն ու մի գույզ ձեռնոց, մեկ էլ մի հովհար հասցրու: Դե, շուտ:

Ալիսն այնպես վախեցավ, որ անմիջապես վազեց ճագարի ցույց տված ուղղությամբ՝ առանց բացատրելու նրան, որ ինքը Մերի Աննան չէ:

«Նա ինձ իր սպասուհու տեղը դրեց, — ճամփին մտածում էր աղջիկը, — ինչքան կզարմանա, երբ տեսնի, որ սխալվել է: Բայց ավելի լավ է ես բերեմ նրա ձեռնոցն ու հովհարը, եթե, իհարկե, կարողանամ գտնել»:

Վերջին խոսքերը բարձրաձայն արտասանելուն պես Ալիսը հայտնվեց մի կոկիկ մաքուր տնակի առաջ: Դռան վրայի արույրե ցուցանակին փորագրված էր. «Ս. ՃԱԳԱՐ»: Առանց դուռը թակելու նա ներս մտավ ու շտապեց վեր՝ վախենալով, որ իսկական Մերի Աննային կհանդիպի և դուրս կվճռի հովհարն ու ձեռնոցը չվերցրած:

— Ա՛յ քեզ բան, — ասաց Ալիսն ինքն իրեն, — ես ճագարի հանձնարարություններն եմ կատարում: Երևի շուտով Դինան էլ կսկսի ինձ գործի դնել:

Եվ անմիջապես պատկերացրեց այդ բոլորը:

— Օրիորդ Ալիս, իսկույն եկ այստեղ և պատրաստվիր զբոսանքի գնալու:

— Հիմա կգամ, դայակ, բայց մինչև Դինայի վերադարձը պետք է հսկեմ Մկան բույնը, որպեսզի նա չծլկի: Միայն թե, — շարունակեց Ալիսը, — չեմ կարծում, որ Դինային պահեն տանը, եթե նա էլ սկսի ճագարի նման հրամայել:

Մինչ այդ Ալիսը մտել էր գողտրիկ ու կոկիկ մի սենյակ: Պատուհանի մոտ, սեղանի վրա (ինչպես որ ենթադրում էր) կար երկու-երեք գույզ փոքրիկ ճերմակ, կաշվե ձեռնոց ու մի հովհար: Նա վերցրեց հովհարն ու մի գույզ ձեռնոց և հենց այն է՝ պատրաստվում էր դուրս գալ սենյակից, երբ հանկարծ հայացքն ընկավ հայելու առաջ դրված փոքրիկ շշին: Այս անգամ վրան գրված չէր «ԽՄԻՐ ԻՆՁ», բայց և այնպես Ալիսը բաց արեց այն ու մոտեցրեց շուրթերին:

«Հաստատ գիտեմ, հիմա ինչ-որ հետաքրքիր բան կկատարվի, որովհետև, երբ մի բան ուտում եմ կամ խմում, իսկույն փոխվում եմ, — մտածեց նա, — ես միայն ուզում եմ տեսնել, թե այս շիշն ինչ գորություն ունի: Հուսով եմ, սա ինձ նորից կմեծացնի, թե չէ արդեն շատ եմ ձանձրացել պստիկ մնալուց»:

Այդպես էլ եղավ, այն էլ ավելի շուտ, քան սպասում էր: Դեռ կեսին էլ չէր հասել, երբ գլուխը դիպավ առաստաղին և ստիպված թեքեց վիզը, որպեսզի չկոտրվի: Նա շտապ ցած դրեց շիշը, ինքն իրեն հանգստացնելով:

— Այսքանը բավական է: Երևի այլևս չեմ մեծանա: Բայց արի տես, որ հիմա էլ դռնից դուրս չեմ կարող գալ: Երանի այդքան շատ չխամի:

Ավաղ, արդեն ուշ էր: Նա շարունակում էր մեծանալ ու մեծանալ և շուտով ճարահատյալ չոքեց հատակին: Քիչ անց, այդ դիրքով մնալն էլ անհնարին դարձավ: Մի բոպե ևս և սենյակում ազատ տարածություն չկար: Նա փորձեց պառկել՝ մի ձեռքը դնելով գլխի տակ, իսկ մյուսը հենելով դռանը: Բայց և այնպես աճը չէր դադարում: Ի վերջո Ալիսը մի



ձեռքը պատուհանից դուրս հանեց, իսկ ոտքը մտցրեց ծխնելույզի մեջ ու հուսահատ ասաց.

— Էլ շարժվելու տեղ չունեմ: Չգիտեմ, վերջս ինչ է լինելու:

Բարեբախտաբար կախարդական շշի գորությունն արդեն անցել էր և Ալիսն այլևս չէր աճում: Մակայն դեռևս շատ անհարմար դիրքով էր պառկած, և քանի որ սենյակից դուրս գալու ոչ մի հույս չկար, իրեն շատ դժբախտ զգաց:

— Տանն ավելի լավ էր, — լացակումեց խեղճ աղջիկը, — մարդ ոչ մեծանում էր, ոչ փոքրանում և ոչ էլ մկների ու ճագարների հրամաններն էր կատարում: Երանի չմտնեի այդ ճագարի բույնը, բայց արի տես, այսպիսի կյանքն ավելի հետաքրքիր է: Տեսնես դեռ ինչ է ինձ սպասվում: Մի ժամանակ, երբ հեքիաթներ էի կարդում, մտածում էի, որ այսպիսի հրաշքներ չեն կատարվում, իսկ հիմա այստեղ ես գլխավոր հերոսն եմ: Իմ մասին անպայման գիրք կգրեն: Երբ մեծանամ, ես ինքս կգրեմ:

— Բայց չէ՞ որ ես արդեն մեծացել եմ, — տխուր հառաչեց նա, — բայց մի բանը լավ է, որ այստեղ այլևս մեծանալու տեղ չկա: Ուրեմն սրանից ավելի մեծ չեմ լինի: Մի կողմից դա լավ է, երբեք չեմ ծերանա ու պառավ չեմ լինի, — մտածեց Ալիսը, — իսկ մյուս կողմից էլ վատ, արի ու միշտ դաս սովորի: Չեմ ուզում:

— Ա՛խ դու, հիմար Ալիս, ինչպես կարող ես այստեղ դաս սովորել, դու հազիվ ես տեղավորվել, ուր մնաց դասագրքերին տեղ լինի, — հանգստացրեց իրեն Ալիսը:

Եվ այսպես, նա շարունակում էր քննել հարցը մեկ մի կողմից, մեկ մյուս, ինքն իր հետ զրույց վարելով:

Քիչ անց Ալիսը դրսից ձայն լսեց և հուշիկ ականջ դրեց:

— Մերի Աննա, Մերի Աննա, — կանչում էր ինչ-որ մեկը, — շուտ ձեռնոցս բեր:

Հետո աստիճանների վրա ոտքերի թեթև թփթփոց լսվեց: Ալիսը գլխի ընկավ, որ ճագարն իրեն է փնտրում ու վախեցած այնպես դողաց, որ տունը հիմքից ցնցվեց: Նա բոլորովին մոռացել էր, որ ինքը ճագարից հազար անգամ մեծ է և նրանից վախենալու պատճառ չունի:

Ի վերջո ճագարը մոտեցավ դռանը և փորձեց հրել: Դուռը ներսից էր բացվում, և քանի որ Ալիսի արմունկը հենած էր վրան՝ ճագարի ջանքերն ապարդյուն անցան:

— Ի՛նչ արած, պատուհանից ներս կմտնեմ, — որոշեց ճագարը:

«Կմտնես, բա չէ, — մտածեց Ալիսը և սպասեց այնքան, մինչև ենթադրեց, թե պատուհանի տակ արձագանքեց ճագարի ոտնաձայնը, ապա մեկնեց ձեռքը ու ճանկեց օդը: Նա ոչինչ չբռնեց, բայց լսվեց մի թույլ ճիչ, շրմփոց ու կոտրվող ապակու զրնգոց: Այս ամենից Ալիսը եզրակացրեց, որ ըստ երևույթին ճագարն ընկավ վարունգի ջերմոցը կամ դրա պես մի բան:

Կրկին ճագարի զայրացած կանչը:

— Փաթ, Փաթ, որտե՞ղ ես:

Իսկ մի այլ ձայն, որ մինչ այդ Ալիսը չէր լսել, պատասխանեց.

— Ձերդ մեծություն, ես այստեղ եմ, խնձորենիների տակն եմ փորում:

— Փորելու ժամանակ ես գտել, — զայրացավ ճագարը, — շտապ արի ինձ օգնիր, որ այստեղից դուրս գամ:

(Նորից փշրվող ապակու զրնգոց):

— Հիմա ասա ինձ, Փաթ, այդ ինչ է երևում պատուհանից:

— Ձեռք է, ձերդ մեծություն:

(Նա արտասանեց՝ ձեռոք):

— Ա՛խ, դու հիմարի գլուխ, ձեռք է, ով է տեսել այդպիսի հսկայական ձեռք, ամբողջ պատուհանը ծածկել է:

— Իհարկե ծածկել է, ձերդ մեծություն: Բայց, ինչ ուզում եք ասեք, ձեռք է:

— Այդ դեպքում ձեռքն այնտեղ ոչ մի գործ չունի, գնա և իսկույն դուրս նետիր այն:

Հաջորդեց երկարատև լռություն: Ալիսի ականջին ժամանակ առ ժամանակ շշուկներ էին հասնում:

— Ձերդ մեծություն, դա ինձ բոլորովին դուր չի գալիս, բոլորովին:

— Արա այնպես, ինչպես քեզ ասում են, վախկոտ:

Ի վերջո Ալիսը ձեռքը նորից շարժեց օդում: Այս անգամ լսվեց երկու թույլ ճիչ և ավելի շատ փշրվող ապակու զրնգոց:

«Ինչքան շատ ապակի կա այս ջերմոցում, — մտածեց նա, — տեսնես հիմա ինչ են անելու: Ինչ վերաբերում է ինձ պատուհանից դուրս հանելուն, շատ ուրախ կլինեմ, որովհետև այլևս չեմ կարող մնալ այստեղ»:

Նա սպասեց մի քանի վայրկյան, բայց ոչինչ չկարողացավ լսել: Վերջապես սայլակի անիվների ճոնչոց եկավ ու բազմաթիվ այլ ձայներ, որոնք միաժամանակ խոսում էին: Ալիսը զանազանեց հետևյալ խոսքերը.

— Որտե՞ղ է մյուս սանդուղքը:

— Ես միայն մեկն եմ բերել: Մյուսը Բիլի մոտ է:

— Բիլ, շուտ այստեղ բեր, մանչուկ:

— Այստեղ դիր սանդուղքը, անկյունում:

— Չէ, նախ կապիր դրանք:

— Մի տես, պատի կեսին էլ չի հասնում:

— Ի՛նչ ես ասում, լավ էլ հասնում է: Շատ ես բժախնդիր:

— Ահա, Բիլ, բռնիր այս պարանը:

— Տանիքն արդյոք կդիմանա քո ծանրությանը:

— Հիշիր, որ մի աստիճանը շարժվում է:

— Վայ, ցած է ընկնում:

— Գլուխներդ պահեք:

(Ուժեղ դղրոյուն):

— Ո՞վ արեց: Երևի Բիլն էր:

— Ո՞վ կմտնի ծխնելույզի մեջ:

— Ես չեմ մտնի: Դուք մտեք:

— Ես մտնողը չեմ:

— Թող Բիլը մտնի:

— Հեյ, Բիլ, պարոնն ասում է, որ ծխնելույզի մեջ մտնես:

— Ուրեմն Բիլին բաժին ընկավ, — ասաց Ալիսն ինքն իրեն, — նրանք ամեն ինչ Բիլի վրա են գցում: Ես ոչ մի դեպքում չեի ցանկանա նրա տեղը լինել: Բուխարիկը շատ է նեղ, բայց կարծում եմ, կկարողանամ քացով տալ:

Եվ հնարավորին չափ ոտքը Երկարեց ծխնելույզի մեջ ու սսկվեց: Շուտով լսվեց, թե ինչպես մի փոքրիկ կենդանի (նա չէր պատկերացնում Բիլին) շատ մոտիկից քերում, ճանկոում է պատերը:

— Երևի Բիլն է, — որոշեց Ալիսն ու քացով տվեց, ապա սպասեց, թե ինչ է դրան հաջորդելու:

Մի խումբ ձայներ գոչեցին.

— Բիլը թռչում է:

Հետո՝ ճագարի հրամանը.

— Բռնեք նրան, հեյ դուք, ցանկապատի մոտ կանգնածներ:

Եվ անմիջապես լռություն տիրեց:

Նորից նույն խառնաշփոթ ճիչերը:

— Գլուխը բռնեք:

— Կոնյակ բերեք:

— Ի՛նչ եք խեղդում:

— Ո՞նց ես քեզ զգում, այ տղա:

Վերջապես լսվեց մի բարակ, նվաղուն ձայն:

«Բիլն է խոսում», — մտածեց Ալիսը:

— Ինքս էլ չգիտեմ, թե ոնց: Հերիք է, շնորհակալ եմ:

Հիմա լավ եմ զգում, բայց շատ եմ հուզված ու չեմ կարողանում պատմել, միայն մի բան գիտեմ, որ սատանայի նման մեկը հրեց ինձ, և ես հրթիռի պես երկինք թռա:

— Ճիշտ այդպես էլ թռար, այ տղա, — լսվեց այս ու այն կողմից:

— Հարկավոր է տունը վառել, — հնչեց ճագարի ձայնը: Մրա վրա Ալիսն ամբողջ ուժով բղավեց.

— Եթե դուք այդպիսի բան անեք, ես բաց կթողնեմ Դինային:

Անմիջապես մեռելային լռություն իջավ:

«Հետաքրքիր է, հիմա ինչ են անելու, — մտածեց նա, — եթե մի կաթիլ խելք ունենային, տանիքը կհանեին»:

Քիչ անց կրկին աշխուժություն տիրեց, և նորից ճագարը կարգադրեց.

— Սկզբի համար մի լիքը ձեռնասայլակը բավական է: Ալիսը դեռ չէր հասցրել կռահել, թե ձեռնասայլակով ինչ պետք է գար, երբ հանկարծ հաջորդ վայրկյանին փոքրիկ խճաքարերի մի տարափ տեղաց պատուհանին, դրանցից մի քանիսն էլ դիպան Ալիսի դեմքին:

«Ես վերջ կտամ այս բոլորին», — վճռեց Ալիսը և բղավեց.

— Լավ կանեք դադարեցնեք: — Սրա արդյունքը եղավ նորից քար լռություն:

Ալիսը զարմանքով նկատեց, որ խճաքարերը թափվելով հատակին, դառնում են կարկանդակներ: Մի փայլուն միտք ծագեց նրա գլխում.

«Եթե սրանցից մեկն ուտեմ, երևի ինձ հետ մի որևէ փոփոխություն կկատարվի և որովհետև այլևս մեծանալու հնարավորություն չկա, միգուցե կկարճանամ»:

Նա կուլ տվեց մի կարկանդակ և հիացմունքով նկատեց, որ անմիջապես սկսում է կարճանալ: Երբ բավականաչափ փոքրացավ՝ դռնից դուրս գալու համար, իսկույն տնից դուրս եկավ ու բակում տեսավ զանազան կենդանիներ ու թռչուններ: Խեղճ փոքրիկ Մողես Բիլը նրանց մեջտեղում էր: Երկու ծովախոզ կերակրում էին նրան 22ի մեջ լցված ինչ-որ հեղուկով: Աղջկան տեսնելուն պես բոլորը նետվեցին դեպի նա, բայց Ալիսն ամբողջ ուժով առաջ նետվեց և հայտնվելով խիտ անտառում, միանգամայն ապահով զգաց իրեն:

«Նախ, պետք է իմ նախկին չափսին հասնեմ, իսկ հետո գտնեմ գեղատեսիլ պարտեզ տանող ճանապարհը: Ինձ թվում է, սա հիանալի ծրագիր է», — անտառում թափառելով մտածում էր Ալիսը:

Անկասկած, դա հիանալի ծրագիր էր՝ շատ պարզ ու հասկանալի: Միակ դժվարությունն այն էր, որ նա չնչին պատկերացում անգամ չուներ դրա իրագործման մասին, և մինչ անհանգստացած նայում էր շուրջը,

հանկարծ ճիշտ գլխավերևում լսեց զիլ հաչոց, որը և ստիպեց նրան անմիջապես վեր նայել:

Խոշոր, կլոր աչքերով մի հսկայական քոթոթ անօգնական մեկնել էր թաթը դեպի նա:

— Խե՛ղճ փոքրիկ, — կարեկցանքով ասաց Ալիսը և փորձեց մտերմիկ սուլել, բայց իսկույն սարսափեց այն մտքից, որ քոթոթը կարող է սոված լինել և ուտել իրեն, չնայած իր քաղցր լեզվին:

Առանց անելիքն իմանալու նա մի չոր փայտ վերցրեց ու երկարեց դեպի ծառը: Քոթոթն անմիջապես մի բարձր ցատկ արեց օդում և ուրախ վնգստոցով նետվեց դեպի փայտն ու սկսեց ցնցել այն: Ալիսը թաքնվեց մեծ տատասկափշի հետևում, որպեսզի չճզմվի: Հենց նոր էր հայտնվել թփի մյուս կողմում, երբ քոթոթը գլուխկոնծի տալով հարձակվեց փայտի վրա, փորձելով ճանկել այն: Ալիսը մտածեց, որ դա շատ նման է «կառաձիու» խաղին ու վախենալով ոտնատակ լինել՝ անցավ փշի մյուս կողմը: Քոթոթը խոպոտ հաչոցով գրոհում էր փայտի վրա, բայց ավելի շատ ետ էր գնում, քան առաջ գալիս, մինչև վերջապես խոշոր աչքերը կիսախուփ արած, լեզուն բերնից դուրս գցած, շնչասպառ ընկրկեց ու նստեց աղջկանից բավականին հեռու:

Փախչելու հարմար առիթ էր: Ալիսն անմիջապես սկսեց վազել և վազեց այնքան, մինչև ուժերը սպառվեցին և քոթոթի հաչոցն աստիճանաբար անլսելի դարձավ հեռվում:

— Ի՛նչ սիրունիկ քոթոթ էր, — հանգստանալու համար Ալիսը հենվեց հրանունկին ու դրա տերևով սկսեց հով անել, — ես նրան շատ հնարքներ կտվորեցնեի, եթե միայն հասակս բավականացներ: Պետք է նորից մեծանալ: Բայց ինչպես:

Իսկապես շատ լուրջ հարց էր: Ալիսը նայեց ծաղիկներին ու խոտերին, բայց նման պայմաններում ուտելու կամ խմելու հարմար ոչինչ չտեսավ: Նրա կողքին մի հաստ սունկ կար՝ համարյա իր հասակին: Ալիսը զննեց արմատը, ապա երկու կողմերը և ուզեց տեսնել, թե ինչ կա գազաթին:

Եվ ձգվելով կանգնեց ոտքերի ծայրերին, գողունի նայեց եզրն ի վեր ու հայացքը հանդիպեց մեծ, կապույտ թրթուրի հայացքին: Թրթուրը սունկի

գագաթին նստած ամեննին ուշադրություն չէր դարձնում ոչ Ալիսի և ոչ էլ ուրիշ բանի վրա. նա ձեռքերը ծալած հանգիստ նարգիլէ էր քաշում:

## **ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹՐԹՈՒՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Մի որոշ ժամանակ Թրթուրն ու Ալիսը լուռ դիտում էին միմյանց:  
Վերջապէս, Թրթուրը բերանից հանեց նարգիլէն ու դիմեց աղջկան թույլ,  
քնկոտ ձայնով.

— Դու ո՞վ ես:

Այս հարցը խոսակցություն սկսելու համար քաջալերող նախաբան չէր:  
Ալիսը փոքր-ինչ քաշվելով պատասխանեց.

— Ես... ես չգիտեմ, թե ով եմ ես հիմա, պարոն: Ես միայն գիտեմ, թե ով էի  
այսօր առավոտյան, բայց այնքան շատ եմ փոխվել առավոտից ի վեր:

— Ի՞նչ ես ուզում ասել, — խիստ հարցրեց Թրթուրը, — բացատրիր  
միտքդ:

— Շատ եմ ցավում, պարոն, բայց չեմ կարող միտքս բացատրել,  
որովհետև ինչպէս տեսնում եք, ես՝ ես չեմ:

— Չեմ տեսնում:

— Դժբախտաբար ավելի պարզ հնարավոր չէ ասել, — վերին աստիճանի  
քաղաքավարի ասաց Ալիսը, — ես ինքս էլ չեմ հասկանում, թե ինչից  
սկսեց, բայց մի օրում այդքան անգամ փոխվելուց հնարավոր է գլուխդ  
կորցնես:

— Հնարավոր չէ, — ասաց Թրթուրը:

— Դե, միգուցե դուք չեք կորցնում, բայց երբ հանկարծ հարսնյակ  
դառնաք, իսկ հետո էլ թիթեռնիկ, երևի դուք էլ փոքր ինչ գլխապտույտ  
կզգաք, ճիշտ չէ՞:

— Հեչ էլ չէ<sup>[13]</sup>:

— Դե, միգուցե դուք ուրիշ բան եք զգացել, ես միայն գիտեմ, որ այդ ամենն  
ինձ համար տհաճ է:

— Լսի՛ր, — արհամարհանքով նետեց Թրթուրը, — ո՞վ ես դու:

Այս հարցը նորից նախկին խոսակցությանը վերադարձրեց:

Թրթուրի այդքան կտրուկ խոսքերը բարկացրին Ալիսին: Նա հավաքեց իրեն ու լուրջ դեմք ընդունեց.

— Ինձ թվում է, դուք նախ պետք է ասեք ձեր ով լինելը:

— Ինչո՞ւ, — զարմացավ Թրթուրը:

Ահա մեկ ուրիշ շփոթեցնող հարց: Եվ քանի որ Ալիսը չկարողացավ որևէ հարմար պատասխան գտնել և քանի որ նրան թվում էր, թե Թրթուրը բավական անտրամադիր է, ուստի գերադասեց հեռանալ:

— Վերադարձի՛ր, — բղավեց Թրթուրը, — ես շատ կարևոր ասելիք ունեմ:

Թրթուրի խոսքերը խոստումնալից հնչեցին: Ալիսը շրջվեց ու հետ դարձավ:

— Հանգստացիր, — ասաց Թրթուրը:

— Ա՞յդ էր ամենը, — հնարավորին չափ զսպելով բարկությունը, հարցրեց Ալիսը:

— Ոչ:

Ալիսը որոշեց համբերել, որովհետև ուրիշ անելիք չուներ: Գուցե այդ բոլորից հետո կարևոր բան է լսելու: Մի քանի րոպե Թրթուրը լուռ փստացնում էր. վերջապես արձակեց ձեռքերը, բերանից հանեց նարգիլեն ու ասաց.

— Ուրեմն քեզ թվում է, որ դու փոխվել ես:

— Դժբախտաբար, այո, պարոն, տասը րոպեն մեկ փոխվում եմ և ոչինչ չեմ կարողանում հիշել:

— Չես կարողանում հիշել, օրինակ, ինչը՞, — հարցրեց Թրթուրը:

— Դե, ես փորձեցի արտասանել «Փոքրիկ մեղուն» ոտանավորը, բայց բոլորովին այլ բան ստացվեց, — թախծոտ պատասխանեց Ալիսը:

— Արտասանիր «Ծերացել ես, Վիլյամ հայրիկը»:

Ալիսը խաչաձևեց ձեռքերն ու սկսեց.



— Ծերացել ես, Վիլյամ հայրիկ, — ասաց տղան իր հորը, —  
Ու մազերդ սպիտակել են ձյան պես,  
Սակայն գլխի վրա կանգնած՝ անց ես կացնում քո օրը,  
Քո տարիքում սազակա՞ն է արդյոք քեզ:

— Քո տարիքում, — պատասխանեց որդուն Վիլյամ հայրիկը, -  
Կարծում էի, թե վնաս է խելքին շատ:  
Բայց հիմի, երբ ոչ խելք ունեմ, ոչ էլ դրա կարիքը,  
Ես կանգնում եմ գլխիս վրա անընդհատ:

— Ծերացել ես, — ասաց աղան, — ինչպես արդեն ասացի,  
Չաղացել ես ու դարձել ես մի ցմփոր,  
Բայց նոր օդում դու սվեցիր գլուխկոնձի ու քացի,  
Ասա, ո՞նց ես դու թռչկոտում ամեն օր:

— Քո տարիքում, — պատասխանեց իմաստունը ջլապինդ, —  
Ես շփել եմ իմ մարմինը անընդհատ  
Անմահական այս հեղուկով  
Սրվակն արժի մեկ շիլինգ,  
Չես փոշմանի, եթե առնես երկու հատ:

Թուլացել է քո ծնոտը, — ջահել տղան հորն ասաց,  
— Փորոտիքի ճարպից պինդ բան չես ծամում,  
Բայց խժոեցիր հենց նոր մի սագ ոսկոր-կտուց չմնաց,  
Ասա տեսնեմ՝ ո՞նց ես էդ բանը անում:

— Քո տարիքում, — ասաց հայրը, — դատարանից տուն գալով,  
Քո մոր հետ եմ ամեն գործը քննարկել,  
Եվ ծնոտիս մկանները ամրացել են դրանով  
Ու գործում են մինչև օրս անարգել:

— Ծերացել ես, — ասաց աղան, — և ում մտքով կանցնի, որ  
Առաջվա պես ժիր ես, ճարպիկ, սրատես,  
Բայց պահեցիր օձաձուկը քթիդ ծայրին դու հենց նոր,  
Ի՞նչ ես անում, որ խելքդ ես դու այդպես:

— Չորս հարցերիդ ես տվեցի պատասխաններ ճշմարիտ,  
Բավական է, — ասաց հայրը, — լավ է՝ չափդ իմանաս:  
Հո չե՞ս կարծում ամբողջ օրը պիտի լսեմ տխմարիդ,  
Չքվի՛ր, թե չէ վզակոթիդ կստանաս<sup>[14]</sup>:

— Ճիշտ չէ, — ասաց Թրթուրը:

— Որոշ չափով, — երկչոտ համաձայնեց Ալիսը, — միայն մի քանի բան  
շփոթեցի:

— Սկզբից մինչև վերջ սխալ է, — վճռական ձայնով ասաց Թրթուրը և  
որոշ ժամանակ լռություն տիրեց:

Առաջինը խոսեց Թրթուրը:

— Ի՞նչ չափսի կուզենայիր լինել:

— Դե, ես այնքան էլ պահանջկոտ չեմ, — շտապ վրա բերեց Ալիսը, —  
միայն թե, գիտե՞ք, շարունակ փոխվելը հաճելի չէ:

— Որտեղի՞ց իմանամ, — ասաց Թրթուրը:

Ալիսը ձայն չհանեց: Իր ամբողջ կյանքում նրան երբեք այդքան չէին  
հակաճառել, և զգաց, որ բարկանում է:

— Իսկ հիմա դու գոհ չե՞ս, — հարցրեց Թրթուրը:

— Դե, ես կուզեի մի քիչ ավելի բարձր լինել, եթե իհարկե, դուք չեք  
առարկում: Ինձ դուր չի գալիս երեք մատնաչափ հասակս:

— Դա հիանալի հասակ է, — բարկացավ Թրթուրը և խոսելիս ձգվեց (Նա  
ճիշտ երեք մատնաչափ էր):

— Բայց ես սովոր չեմ դրան, — թախանձագին ձայնով արդարացավ իսեղձ  
աղջիկը և միաժամանակ մտածեց, «Լավ կլիներ, որ այս արարածներն  
այդքան շուտ չվիրավորվեին»:

— Ժամանակի ընթացքում կհաշտվես, — ասաց Թրթուրը, նորից  
նարգիլեն դրեց բերանն ու սկսեց ծխել:

Այս անգամ Ալիսը համբերությամբ սպասեց մինչև Թրթուրը կբարեհաճեր  
խոսել: Քիչ անց, Թրթուրը ցած դրեց նարգիլեն, մի քանի անգամ

հորանջեց ու թափ տվեց իրեն: Հետո իջավ սնկի գլխիկից ու խոտերի միջով սողալով անցավ-գնաց.

— Մի կողմը հասակդ կերկարացնի, իսկ մյուս կողմը կկարճացնի:

«Ինչի՞ մի կողմը և ինչի մյուս կողմը», — մտածեց Ալիսը:

— Սնկի, — պատասխանեց Թրթուրը, կարծես գուշակելով Ալիսի միտքը, և հաջորդ վայրկյանին նրա հետքն անգամ չէր մնացել:

Ալիսը մտածկոտ նայեց սնկին, փորձելով որոշել, թե որոնք են նրա երկու կողմերը: Դա շատ դժվար հարց էր, որովհետև այն բացարձակ կլոր էր: Այնուամենայնիվ, հնարավորին չափ տարածելով թևերը սնկի շուրջը, ձեռքերով յուրաքանչյուր եզրից փոքրիկ կտորներ պոկեց.

— Տեսնես սրանցից որը ո՞րն է, — ասաց նա և, փորձելու համար ազդեցությունը, կծեց աջ ձեռքի պատառիկը: Հաջորդ վայրկյանին կզակի տակ մի ուժգին հարված զգաց, կզակը խփվել էր ոտքին:

Ալիսը շատ վախեցավ այդ հանկարծակի փոփոխությունից և զգաց, որ չպետք է ժամանակ կորցնել, որովհետև արագորեն կարճանում էր: Նա իսկույն գործի անցավ ու փորձեց ուտել մյուսը: Կզակն այնպես էր սեղմվել ոտքին, որ բերանը հազիվ էր բացվում: Մի կերպ նրան հաջողվեց կծել ձախ ձեռքի պատառիկը:

\* \* \*

— Վերջապես գլուխս ազատեցի, — Ալիսի ուրախությանը չափ չկար, բայց ահա, հաջորդ վայրկյանին, երբ չկարողացավ տեսնել ուսերը, նրա ուրախությունը փոխվեց տազնապի: Իսկ երբ ցած նայե՞ց գետնին թափված կանաչ տերևների կույտի միջից ծառաբնի նման վեր էր խոյանում մի հսկայական երկար վիզ:

— Այդ ի՞նչ կանաչությունն է, իսկ ուր են ուսերս, իմ խեղճ ձեռքեր, որտե՞ղ եք դուք հիմա, ինչո՞ւ չեք երևում:

Խոսելիս նա այս ու այն կողմ էր թափահարում ձեռքերը, բայց իզուր, հեռվից միայն տերևների թեթև խշխշոց էր գալիս: Քանի որ Ալիսը չէր կարող ձեռքերը մոտեցնել գլխին, փորձեց հակառակը՝ գլուխը մոտեցնել ձեռքերին շատ ուրախացավ՝ տեսնելով, որ վիզը հեշտությամբ, օձի նման գալարվում է ցանկացած կողմը: Նրան հենց նոր էր հաջողվել երկար վզով

օդում շնորհալի զիզգազ գծել, և պատրաստվում էր սուզվել սաղարթի մեջ, որը այլ ինչ էր, եթե ոչ կատարները այն ծառերի, որոնց տակ քիչ առաջ թափառում էր, երբ հանկարծ մի զիլ ֆշշոց ստիպեց նրան արագորեն հետ քաշվել: Մի խոշոր աղավնի էր թռել եկել դեմքին շատ մոտ և թևերով ուժգնորեն հարվածում էր նրան:

— Օ՛ձ, — ճղճղում էր Աղավնին:

— Ես օձ չեմ, — գայրացավ Ալիսը, — ինձ հանգիստ թողեք:

— Օձ ես, օձ, — կրկնեց Աղավնին, այս անգամ արդեն ցածր, հեծկլտացող ձայնով, — ես ամեն ինչ փորձել եմ, բայց իզուր, նրանց գոհացնել չես կարող:

— Նույնիսկ չեմ հասկանում, թե ինչի մասին եք խոսում:

— Ես փորձել եմ ծառերի արմատները, գետի ափերը, փորձել եմ նույնիսկ ցանկապատերը, բայց այդ օձերից պրծում չկա, չկա, — շարունակեց Աղավնին՝ առանց ուշադրություն դարձնելու Ալիսին:

Ալիսի զարմանքը գնալով աճում էր, բայց գերադասեց լռել, որովհետև խոսելն անօգուտ էր, քանի դեռ Աղավնին չէր վերջացրել ասելիքը:

— Կարծես թուխս նստելը բավական չէ, հիմա էլ այդ օձերի պատճառով օր ու գիշեր քուն չունեմ: Արդեն երեք շաբաթ է աչք չեմ փակել:

— Շատ եմ ցավում, որ ձեզ հանգիստ չեն տալիս, — վշտացավ Ալիսը, որն արդեն սկսել էր հասկանալ Աղավնուն:

— Եվ երբ ընտրեցի անտառի ամենաբարձր ծառը, — ճչալու աստիճան ձայնը բարձրացրեց Աղավնին, — և երբ կարծում էի, վերջապես, ազատվել եմ նրանցից, բայց հիմա էլ նրանք գալարվելով երկնքից են իջնում: Ա՛խ, օձի մեկը:

— Ես ձեզ ասում եմ, որ օձ չեմ, ես... ես..., — ասեց Ալիսը:

— Դե լավ, իսկ ի՞նչ ես: Տեսնում եմ, ուզում ես մի բան հնարել, — հաղթական ասաց Աղավնին:

— Ես... Ես մի Փոքրիկ աղջիկ եմ, — հիշելով օրվա մեջ իր կրած անթիվ-անհամար փոփոխությունները, տարակուսելով քրթմնջաց Ալիսը:

— Լավ ես հնարում, — խոր արհամարհանքով նետեց Աղավնին, — ես կյանքում շատ փոքրիկ աղջիկներ եմ տեսել, բայց ոչ մեկն այդպիսի վիզ չի ունեցել, ոչ, ոչ, դու օձ ես: Իզուր մի խաբիր: Գուցե հիմա էլ ասես, որ երբեք ձու չե՞ս կերել:

— Իհարկե, կերել եմ, — խոստովանեց Ալիսը. նա շատ ճշմարտախոս երեխա էր, — Գիտեք չե՞, որ փոքրիկ աղջիկներն էլ օձերի նման ձու շատ են ուտում:

— Չեմ հավատում, իսկ եթե ուտում են, ուրեմն նրանք էլ օձի մի տեսակն են, ահա թե ինչ:

Մա մի այնպիսի նորություն էր, որ Ալիսը մի քանի բույսեր պապանձվեց: Աղավնին առիթից օգտվելով շարունակեց.

— Ստում ես, գիտեմ, որ հիմա ձու ես փնտրում, և ինձ համար ոչ մի նշանակություն չունի, դու փոքրիկ աղջիկ ես, թե օձ:

— Իսկ ինձ համար նշանակություն ունի, — շտապ վրա տվեց Ալիսը, — բայց ինչպես դուք էք ենթադրում, ես բոլորովին էլ ձու չեմ փնտրում, իսկ եթե չգտնեմ էլ, ձերը չեմ վերցնի, որովհետև հում ձու չեմ սիրում:

— Ուրեմն, հեռացիր այստեղից, — թթված դեմքով ասաց Աղավնին ու մտավ բույնը:

Ալիսը գլխահակ, վախվիսելով քայլում էր ծառերի միջով, որովհետև վիզը փաթաթվում էր ճյուղերին և շարունակ կանգ էր առնում արձակելու այն: Քիչ անց հիշեց, որ բռունցքների մեջ սունկի կտորներ են մնացել և զգուշությամբ գործի անցավ՝ կծելով մեկ մի ձեռքի պատառիկը, մեկ մյուս, մերթ երկարելով, մերթ կարճանալով, մինչև որ հաջողվեց նախկին հասակն ընդունել:

Այդ նրան սկզբում անսովոր թվաց, բայց հետզհետե ընտելացավ և, ըստ սովորության, սկսեց խոսել ինքն իր հետ.

— Դե, ահա ծրագրիս կեսն իրագործված է: Ի՛նչ տարօրինակ են այս փոփոխությունները: Ես չգիտեմ, թե հաջորդ վայրկյանին ինչ եմ դառնալու: Դե ինչ, հիմա արդեն նախկինն եմ, և պետք է մտածել գեղատեսիլ պարտեզն ընկնելու մասին: Մակայն ինչպե՞ս:

Այս խոսքերն ասելուն պես նա հանկարծ հայտնվեց մի բացատում, որտեղ մոտ չորս ոտնաչափ բարձրության տնակ կար:

«Ով էլ որ ապրում է այնտեղ, — մտածեց Ալիսը, — երբեք չեմ կարող այս հասակովս հայտնվել ու լեղապատառ անել նրանց»: Նա նորից կերավ աջ ձեռքի պատառից ու չմոտեցավ տնակին այնքան ժամանակ, մինչև որ դարձավ ինը մատնաչափ:

## **ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՋՆ ՈՒ ՊՂՊԵՂԸ**

Մի քանի բոպե Ալիսը կանգնած դիտում էր տնակը և մտածում անելիքի մասին: Հանկարծ անտառից վազելով դուրս եկավ շքազգեստ հագած մի ծառա (Ալիսը նրա զգեստից կռահեց, որ նա ծառա է, թեպետ դեմքից դատելով նրան ձուկ կկոչեր) և մոտենալով տնակին, ուժեղ բախեց դուռը: Բացվող դռան մեջ երևաց նույնպիսի շքազգեստ հագած, կլոր դեմքով, գորտի աչքերի նման չոված աչքերով մեկ ուրիշ ծառա: Երկուսն էլ, ինչպես Ալիսը նկատեց, ունեին դիմափոշի քսած մազեր, որոնք գանգուրների էին վերածված ամբողջ գլխով մեկ: Նա շատ էր ցանկանում իմանալ, թե ինչ է նշանակում այդ բոլորը և թաքնվեց մի հարմար տեղ, անտառից դուրս, որ լսի նրանց խոսակցությունը:

Ծառա-Ձուկը թևի տակից դուրս քաշեց մի հսկայական նամակ՝ մոտավորապես իր մեծության և հանդիսավորությամբ հանձնելով մյուս ծառային, ասաց. «Դքսուհուն: Հրավեր Թագուհուց՝ քրոքեթ խաղալու»: Ծառա-Գորտը նույն հանդիսավորությամբ կրկնեց նրա ասածը՝ միայն փոխելով բառերի դասավորությունը. «Թագուհուց: Հրավեր Դքսուհուն՝ քրոքեթ խաղալու»:

Հետո նրանք այնպես խոր գլուխ տվին, որ նրանց գանգուրները միախառնվեցին:

Ալիսը սրա վրա այնպես բարձր քրքջաց, որ ստիպված վազեց մտավ անտառ: Երբ հետ նայեց, Ծառա-Ձուկը գնացել էր. իսկ Ծառա-Գորտը, անմիտ հայացքը երկնքին հառած, նստել էր դռան շեմին:

Ալիսը երկչոտ քայլերով մոտեցավ դռանը ու բախեց.

— Իզուր ես բախում, — ասաց ծառան, — երկու պատճառով, նախ՝ ես էլ քեզ հետ գտնվում եմ դռան այս կողմը և բացի այդ, նրանք ներսում այնպիսի աղմուկ են բարձրացրել, որ ոչ ոք քեզ չի լսի:

Եվ իսկապես, Ներսից շատ անսովոր ձայներ էին գալիս: Շարունակ ոռնոց ու փռշտոց, երբեմն էլ՝ ուժգին շրխկոց, կարծես ավստե կամ թեյաման էր փշուր-փշուր լինում:

— Ասացեք խնդրեմ, ինչպե՞ս կարող եմ ներս մտնել, — հարցրեց Ալիսը:

— Քո բախոցը միզուցե որևէ իմաստ ունենար, — շարունակեց ծառան, առանց ուշադրություն դարձնելու նրան, — եթե դուռը մեր միջև լիներ:

Օրինակ, եթե դու ներսում լինեիր, կարող էիր բախել, իսկ ես կբացեի:

Խոսելիս ծառան շարունակ երկնքին էր նայում, որն Ալիսի կարծիքով խիստ անբաղաբավարության նշան էր:

«Գուցե դրանից է, որ աչքերը ճակատի վրա են: Համենայն դեպս, կարող էր պատասխանել իմ հարցերին», — մտածեց նա:

— Ինչպես կարող եմ ներս մտնել, — նորից հարցրեց Ալիսը, ձայնը բարձրացնելով:

— Ես կնստեմ այստեղ մինչև, վաղը..., — իմիջիայլոց ասաց ծառան:

Այդ պահին հանկարծ տան դուռը բացվեց, և մի խոր ավստե թռավ կպավ ծառայի գլխին, քերծեց քիթն ու դիպչելով ծառին փշուր-փշուր եղավ:

— ...Կամ մինչև վաղը չէ մյուս օրը, — միալար շարունակեց ծառան, կարծես ոչինչ չէր պատահել:

— Ինչպե՞ս կարող եմ ներս մտնել, — ձայնը բարձրացնելով կրկնեց Ալիսը:

— Իսկ քեզ ո՞վ կթողնի, — հարցրեց ծառան, — դու այդ մասին բոլորովին չես մտածում:

Ծառայի ասածը իրականություն էր, բայց դա Ալիսին դուր չեկավ:

— Այս արարածների հետ վիճաբանելն ուղղակի անտանելի է, — փնթփնթաց Ալիսը, — մարդու խելքահան են անում:

Ծառան, առիթից օգտվելով, զանազան տարբերակներով արտահայտեց նույն միտքը:

— Ես կնստեմ այստեղ և հիմա, և հետո, և ամեն օր...

— Իսկ ես ի՞նչ անեմ:

— Ինչ ուզում ես արա, — ծառան սկսեց սուլել:

— Է՛հ, իզուր է նրա հետ խոսելը, — հուսահատվեց Ալիսը, — նա կատարյալ ապուշ է, — և բացելով դուռը, մտավ ներս:

Միջանցքը տանում էր ուղիղ դեպի խոհանոց, որն ամբողջովին ծայրից ծայր լի էր ծխով: Դքսուհին նստել էր սենյակի մեջտեղում, եռոտանի արթոնակին և օրորում էր գրկի երեխային: Խոհարարուհին, թեքված օջախին, խառնում էր մի մեծ լիքը կաթսա ապուրը:

— Ինչքա՛ն շատ պղպեղ են լցրել մեջը, — մի կերպ կարողացավ ասել Ալիսը և ուժգին փռշտաց:

Օդը հագեցած էր պղպեղի հոտով: Նույնիսկ Դքսուհին ժամանակ առ ժամանակ փռշտում էր, իսկ երեխան անդադար լաց էր լինում ու հետն էլ փռշտում: Միայն երկու հոգի չէին փռշտում՝ մեկը խոհարարուհին էր, իսկ մյուսը՝ մեծ կատուն, որը կրակի մոտ նստած ժպտում էր:

— Ասացե՛ք խնդրեմ, — փոքր-ինչ քաշվելով Դքսուհուն դիմեց Ալիսը, որովհետև չգիտեր, թե իրեն հարմար է առաջինը խոսել, — ինչո՞ւ է ձեր կատուն այդքան երջանիկ ժպտում:

— Դա Չեշիրյան Կատու է, — ասաց Դքսուհին, — ահա թե ինչո՞ւ, «խո՛ղ»:

Դքսուհին վերջին բառն այնպիսի ցասումով արտասանեց, որ Ալիսը ցնցվեց: Բայց հետո անմիջապես գլխի ընկավ, որ այդ խոսքն ուղղված էր երեխային, և համարձակություն ստանալով, շարունակեց.

— Ես չգիտեի, որ Չեշիրյան կատուները շարունակ ժպտում են: Ճիշտն ասած, ես նույնիսկ չգիտեի, որ ընդհանրապես կատուները կարողանում են ժպտալ:

— Նրանք բոլորն էլ կարող են, — բացատրեց Դքսուհին, — և մեծամասնությունն էլ ժպտում է:

— Ես ոչ մի կատու չեմ ճանաչում, որ կարողանա ժպտալ, — խիստ քաղաքավարի ասաց Ալիսը, գոհ, որ խոսակցություն է սկսել:

— Դու շատ բան չգիտես, — նկատեց Դքսուհին, — և դա փաստ է:



Ալիսին բոլորովին դուր չեկավ այդ դիտողությունը և որոշեց խոսքը փոխել: Մինչ փորձում էր հարմար նյութ ընտրել, խոհարարուհին ապուրով կաթսան իջեցրեց կրակից ու անմիջապես գործի անցավ շրջապատում եղած իրերը մեկ առ մեկ նետելով Դքսուհու և երեխայի վրա: Սկզբում թռան ունեւիները, դրանց հաջորդեց պղինձների, սկուտեղների ու ափսեների մի տարափ: Դքսուհին ամեննին ուշադրություն չէր դարձնում այդ բոլորի վրա, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք վնասում էին իրեն: Իսկ երեխան առանց այդ էլ այնպես բարձր էր ոռնում, որ անհնար էր ասել, հարվածները վնասում էին նրան, թե ոչ:

— Վա՛յ, զգույշ, այդ ի՞նչ էք անում, — սարսափահար վեր թռավ Ալիսը, — երեխայի թանկագին քիթը վնասվեց:

Անսովոր մեծության մի տապակ թռավ-անցավ երեխայի մոտով և քիչ մնաց պոկեր քիթը:

— Եթե ամեն մարդ իր գործով զբաղվեր, — փնթփնթաց Դքսուհին, — երկիրն ավելի արագ կպտտվեր:

— Դրանից ոչինչ չէր փոխվի, — Ալիսը շատ ուրախացավ, որ իր գիտելիքները ցուցադրելու հարմար առիթ գտավ, — ապա մտածեք, ինչ կլիներ ցերեկվա ու գիշերվա հետ: Ինչպես գիտեք, երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը քսանչորս ժամում:

— Հիմա մի վայրկյանում կպտտվես քո առանցքի շուրջը, — ճչաց Դքսուհին, — կտրել նրա գլուխը:

Ալիսը վախեցած նայեց խոհարարուհուն, թե արդյո՞ք նա կկատարի Դքսուհու հրամանը, բայց խոհարարուհին եռանդով ապուրն էր խառնում, կարծես չէր էլ լսել Դքսուհուն:

Ալիսը շարունակեց.

— Կարծես քսանչորս ժամում է, թե՛ տասներկու, ես...

— Է՛հ, հանգիստ թող ինձ, ես թվեր չեմ սիրում, — ասաց Դքսուհին և սկսեց ցնցել երեխային, երգելով օրորոցայինի նմանվող մի բան՝ յուրաքանչյուր տողի վերջում ուժգին թափ տալով մանկանը.

Լավ քոթակ տուր քո տղային,  
Եթե հանկարծ փռշտա.  
Օյիններ են սիրում խաղալ,  
Մեր ջիգրո՛ւ են անում դա:

Կրկներգ (որին ձայնակցում էին խոհարարուհին ու երեխան)՝

Հա՛ փչի, հա՛ փչի, հա՛ փչի<sup>[15]</sup>:

Երբ Դքսուհին անցավ երկրորդ քառյակին, նա սկսեց երեխային կոպտորեն վեր ու վար նետել: Խեղճ փոքրիկն այնպես էր ոռնում, որ Ալիսը հազիվ էր կարողանում զանազանել բառերը.

Քոթակում եմ իմ տղային,  
Եթե հանկարծ փռշտա.  
Թողնես ամբողջ օրը նստած  
Կարմիր պղպեղ ուտի նա:

Կրկներգ՝

Հափչի, հափչի, հափչի:

— Եթե ուզում ես, կարող ես նրան մի քիչ օրորել, բռնի՛ր, — Դքսուհին երեխային շարտեց Ալիսի կողմը, — ես պետք է հագնվեմ, որ Թագուհու մոտ գնամ քրոքեթ խաղալու, — և դուրս եկավ սենյակից: Խոհարարուհին տապակը շարտեց Դքսուհու հետևից, բայց վրիպեց:

Ալիսը դժվարությամբ բռնեց փոքրիկին, որովհետև նրա մարմնի կառուցվածքը շատ տարօրինակ էր, և ձեռքերն ու ոտքերը տարբեր ուղղությամբ էին տարածվում: «Կարծես աստղաձուկ լինի», — մտածեց Ալիսը:

Խեղճ փոքրիկը փնչացնում էր շոգեքարշի նման: Նա մեկ կծկվում էր, մեկ նորից ձգվում այնպես, որ սկզբում դժվար էր նրան գրկելը:

Հենց որ Ալիսը նրան գրկելու ձևը գտավ (երեխային հանգույցի պես ոլորեց, աջ ականջը պինդ սեղմեց ձախ ոտքին, հնարավորություն չտալով ձգվելու), դուրս եկավ բակ: «Եթե սրան հետս չվերցնեմ, — մտածեց նա, — հավանաբար, մի երկու օրից կսպանեն: Իսկ եթե թողնեմ այս տեղ, արածս հանցագործություն չի լինի արդյոք»: Նա վերջին խոսքերը բարձրաձայն ասաց, իսկ երեխան ի պատասխան խոխոաց: (Նա այլևս չէր փոշտում):  
— Ի՞նչ ես խոխոում, — հորդորեց Ալիսը, — կարծում ես դրանով կարո՞ղ ես մտքերդ արտահայտել:

Երեխան նորից խոխոաց: Ալիսը անհանգստացած նայեց նրա դեմքին: Կասկած չկար, որ երեխայի վեր ցցված քիթն ավելի շուտ նման էր խոզի դնչի, քան սովորական քթի: Աչքերը չափազանց փոքր էին: Ընդհանրապես, Ալիսին բոլորովին դուր չէր գալիս նրա արտաքինը:  
— Գուցե հեկեկու՞մ է, — Ալիսը նրա աչքերում արցունքներ չնկատեց:  
— Եթե ուզում ես խոզ դառնալ, սիրելիս, — խիստ ասաց նա, — ես քեզ հետ այլևս անելիք չունեմ: Լավ մտածիր:

Խեղճ փոքրիկ արարածը նորից հեկեկաց (կամ խոխոաց, դա անհնար է ասել) և նրանք միառժամանակ լուռ քայլեցին՝

Մինչ Ալիսը մտածում էր. «Ի՞նչ եմ անելու սրան, երբ տուն հասնեմ», — երեխան սկսեց դարձյալ խոխոալ ու այնպիսի ուժգնությամբ, որ Ալիսը տազնապահար նայեց նրա դեմքին: Այս անգամ սխալմունք լինել չէր կարող: Անտարակույս, դա մի կատարյալ գոճի էր, և չլսված հիմարություն էր նրան գրկած տանելը:

Նա ցած դրեց խոզուկին և շատ ուրախացավ, երբ սա չորեքթաթ վազ տվեց դեպի անտառ:

— Երբ մեծանար, — ասաց Ալիսը, — սարսափելի տգեղ երեխա կլինեք, բայց երևի գեղեցիկ խոզ կդառնա:

Նա սկսեց մտածել իր ճանաչած երեխաների մասին, որոնք սիրունիկ գոճիներ կլինեին:

— Մարդ միայն իմանար նրանց խոզ դարձնելու ձևը, — Ալիսը դեռ նոր էր արտասանել այդ խոսքերը, երբ հանկարծ կանգ առավ՝ նկատելով ծառին նստած Չեշիրյան Կատվին, իրենից մի քանի քայլ հեռավորության վրա:

Տեսնելով Ալիսին, Կատուն միայն ժպտաց<sup>[16]</sup>: Ալիսը մտածեց, որ նա բարեհոգի է: Բայց Կատուն շատ երկար ճանկեր և սուր ատամներ ուներ, ուստի պետք է ստիպված հարգանքով վերաբերվեր նրան:

— Չեշիրյան Փիսիկ, — վախվորած սկսեց Ալիսը, որովհետև չգիտեր, թե նրան դուր կգա այդ անունը:

Կատուն էլ ավելի լայն ժպտաց:

«Առայժմ նրան հաճելի է», — ենթադրեց Ալիսն ու շարունակեց.

— Բարի եղեք, ասացեք, ո՞րն է անտառից դուրս գալու ճանապարհը:

— Դա կախված է այն բանից, թե ուր ես ուզում գնալ:

— Ինձ համար միևնույն է, — ասաց Ալիսը:

— Ուրեմն նշանակություն չունի, թե ուր կգնաս:

— Միայն թե որևէ տեղ հասնեմ, — ավելացրեց Ալիսը:

— Դե, իհարկե կհասնես, — հաստատեց Կատուն, — եթե միայն շատ հեռու գնաս:

Ալիսն զգաց, որ հակառակվելն ավելորդ է և փորձեց մեկ ուրիշ հարց տալ:

— Ի՞նչ մարդիկ են ապրում մոտերքում:

— Այս կողմում, — ցույց տվեց Կատուն՝ թափահարելով աջ թաթը, — ապրում է Գլխարկագործը, — իսկ այն կողմում, — Կատուն թափահարեց մյուս թաթը, — ապրում է Մարտյան Նապաստակը: Այցելիր ում որ կամենաս: Նրանք երկուսն էլ խելագար են<sup>[17]</sup>:

— Բայց ես չեմ ուզում խելագարների մոտ գնալ, նեղսրտեց Ալիսը:

— Դու չես կարող չգնալ, մենք բոլորս էլ այստեղ խելագարներ ենք: Ես խելագար եմ, դու խելագար ես:

— Իսկ որտեղի՞ց գիտեք, որ ես խելագար եմ: Եթե խելագար չլինեիր, այստեղ չէիր գա:

Ալիսը համաձայն չէր Կատվի ասածներին: Այնուամենայնիվ, շարունակեց.

— Իսկ որտեղի՞ց գիտեք, որ դուք խելագար եք:

— Սկսենք այն բանից, որ Շունը խելագար չէ: Համաձայն յն ես:

— Ենթադրենք:

— Դե, ուրեմն, — շարունակեց Կատուն, — Շունը գոմոռում է, երբ բարկանում է, իսկ երբ գոհ է, պոչն է շարժում: Իսկ ես գոմոռում եմ, երբ գոհ եմ և պոչս եմ շարժում, երբ բարկացած եմ: Դրա համար էլ ես խելագար եմ:

— Ես ձեր արածը կանվանեի մոլտոց և ոչ թե գոմոռոց:

— Ինչպես ուզում ես անվանիր, — անփույթ ասաց Կատուն: — Այսօր Թագուհու մոտ քրոքեթ խաղալու ես:

— Շատ եմ ուզում, բայց հրավիրված չեմ:

— Դու ինձ այնտեղ կտեսնես, — ասաց կատուն ու չքացավ:

Ալիսն այնքան էլ չզարմացավ, որովհետև արդեն վարժվել էր տարօրինակությունների: Մինչ շարունակում էր նայել ճյուղին, որի վրա քիչ առաջ նստած էր Կատուն, հանկարծ սա նորից հայտնվեց:

— Իմիջիայլոց, ինչ եղավ երեխան, քիչ մնաց մոռանայի, — հարցրեց Կատուն:

— Խոզ դարձավ, — շատ հանգիստ պատասխանեց Ալիսը, կարծես Կատուն սովորական ձևով հետ եկած լիներ:

— Այդպես էլ գիտեի: — ու նորից չքացավ:

Ալիսը սպասեց մի քիչ, հուսալով, հր նորից կտեսնի Կատվին, բայց իզուր: Քիչ անց քայլեց այն ուղղությամբ, որտեղ Մարտյան Նապաստակն էր ապրում:

— Գլխարկագործներ շատ եմ տեսել, Մարտյան Նապաստակն ավելի հետաքրքիր է: Բայց կարող է պատահել, նա այլևս խելագար չէ, որովհետև հիմա մայիս է, և կամ էլ ոչ այնքան խելագար, ինչպես մարտ ամսին:

Այս խոսքերն ասելուն պես նա վեր նայեց ու կրկին տեսավ ծառին նստած Կատվին:

— Դու խո՞զ ասացիր, թե՞ պոզ:

— Խոզ ասացի, — պատասխանեց Ալիսը, — ես կուզեի, որ դուք այդպես հանկարծակի չհայտնվեիք ու չանհետանայիք, մարդու գլուխն ուղղակի պտտվում է:

— Շատ լավ, — զիջեց Կատուն ու այս անգամ դանդաղ անհետացավ՝ սկսեց պոչի ծայրից մինչև ժպիտը, որը մնաց բավական ժամանակ նրա անհետանալուդ հետո:

«Ես շատ եմ տեսել կատու՝ առանց ժպիտի, բայց ժպիտ առանց կատվի, երբեք<sup>[18]</sup>: Դա ամենահետաքրքիր բան՝ է, որ երբևէ տեսել եմ իմ ամբողջ կյանքում», — եզրակացրեց Ալիսը: Նա շատ չէր հեռացել, երբ երևաց Մարտյան Նապաստակի տունը: Ալիսը չէր սխալվում, որովհետև ծխնելույզները նման էին նապաստակի ականջների, իսկ տանիքը ծածկված էր մորթով: Տունն այնքան մեծ էր, որ Ալիսը չհամարձակվեց մոտենալ, մինչև չկծեց աջ ձեռքում գտնվող սունկի կտորից ու չերկարեց երկու ոտնաչափ: Նույնիսկ դրանից հետո էլ նա երկչոտ քայլեց՝ մտածելով.

«Իսկ եթե Մարտյան Նապաստակի գծությունը բռնած լինի երանի Գլխարկագործի մոտ գնայի»:

## **ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ ԽԵԼԱՇԵՂ ԹԵՅԸՄՊՈՒՄ**

Տան առջև՝ ծառի տակ սեղան էր դրված, որի շուրջը նստած Մարտյան Նապաստակն ու Գլխարկագործը թեյ էին խմում, իսկ նրանց մեջտեղում գտնվող Քնամուկը խորը քնած էր: Մարտյան Նապաստակն ու Գլխարկագործը արմունկները հենել էին Քնամկան վրա որպես բարձի և քաղցր-քաղցր զրուցում էին նրա գլխի վրայով:

«Ի՛նչ անհարմար վիճակի մեջ է խեղճ Քնամուկը, — մտածեց Ալիսը, — բայց երևի ոչինչ չի զգում, որովհետև քնած է»:

Չնայած սեղանը բավական երկար էր, բայց նրանք երեքով խմբվել էին մի անկյունում:

— Տեղ չկա, տեղ չկա, — աղջկան տեսնելուն պես միաբերան գոռացին նրանք:

— Տեղ շատ կա, — զայրացավ Ալիսն ու նստեց սեղանի ծայրին գտնվող մեծ բազկաթոռի մեջ:

— Գինի կցանկանայի՞ր, — քաջալերող ձայնով հարցրեց Մարտյան Նապաստակը:

Ալիսը նայեց սեղանին, բայց թեյից բացի ոչինչ չտեսավ:

— Իսկ ու՞ր է գինին, — զարմացավ Ալիսը:

— Այստեղ գինի չկա, — ասաց Մարտյան Նապաստակը:

— Այդ դեպքում ձեր կողմից մեծ անբաղաքավարություն է առաջարկել այն, ինչ չկա, — վրդովվեց Ալիսը:

— Քո կողմից էլ մեծ անբաղաքավարություն էր առանց հրավերի նստելը,  
— պատասխանեց Մարտյան Նապաստակը:

— Ես չգիտեի, որ այս սեղանը միայն ձեզ համար է, և բացի այդ, այստեղ երեքից ավելին կարող են նստել:

— Քո մազերը կտրել է պետք, — նկատեց Գլխարկագործը: Նա մինչ այդ հետաքրքրությամբ դիտում էր Ալիսին, և սա նրա առաջին խոսքն էր:

— Խնդրում եմ ուրիշի գործերին չխառնվել, — խիստ ասաց Ալիսը, — դա անվայել բան է:

Լսելով այդ, Գլխարկագործը աչքերը չռեց, բայց ասաց հետևյալը.

— Ի՞նչ նմանություն կա ագռավի և գրասեղանի միջև<sup>[19]</sup>:

«Այժմ մի քիչ կծիծաղենք, ինչ լավ է, որ անցանք հանելուկներին», — մտածեց նա և բարձրաձայն ավելացրեց.

— Հենց հիմա կասեմ դրա պատասխանը:

— Կարծում ես կարո՞ղ ես, — հարցրեց Մարտյան Նապաստակը:

— Իհարկե:

— Դե, ուրեմն ասա, — ավելացրեց Մարտյան Նապաստակը:

— Կասեմ, — շտապ վրա բերեց Ալիսը, — առնվազն... առնվազն, ես կարծում եմ, որ... գիտե՞ք ինչ, դրանք միևնույն բաներն են:

— Բոլորովին էլ ոչ, — հակաճառեց Գլխարկագործը, — եթե այդպես լիներ, ապա հետևյալ նախադասությունները միևնույն բանը

կնշանակեին. «Ես տեսնում եմ այն, ինչ ուտում եմ» և «Ես ուտում եմ այն, ինչ տեսնում եմ»:

— Նույն ձևով էլ կարող էիր ասել, — ավելացրեց Մարտյան Նապաստակը, — որ «Ես սիրում եմ այն, ինչ ունեմ» և «Ես ունեմ այն, ինչ սիրում եմ» մտքերը մեկ իմաստ ունեն:

— Դու նույնպես կարող էիր ասել, — շարունակեց Քնամուկը խոսելով քնի մեջ, որ՝ «Ես շնչում եմ, երբ քնած եմ» նույնն է, ինչ որ՝ «Ես քնած եմ, երբ. շնչում եմ»:

— Դա քեզ համար է միևնույնը, — սաստեց Գլխարկագործը և այստեղ խոսակցությունն ընդհատվեց, խումբը մի պահ լուռ նստեց: Մինչ այդ Ալիսը մտածում էր ագռավների ու գրասեղանների մասին, բայց ոչ մի նմանություն չկարողացավ գտնել:

Գլխարկագործը առաջինը խզեց լռությունը և, դիմելով Ալիսին, հարցրեց.

— Այսօր ամսի քանի՞ սն է:

Նա գրպանից հանել էր ժամացույցը և մերթ ընդ մերթ թափահարելով, ականջին մոտեցնելով, անհանգստացած նայում էր վրան:

Ալիսը քիչ մտածեց, ապա պատասխանեց.

— Չորսը:

— Երկու օր հետ է մնացել, — հառաչեց Գլխարկագործը, — ես քեզ չէի ասում, որ կարագը սրա համար չէ, — բարկացած նայելով Մարտյան Նապաստակին՝ ավելացրեց:

— Դա ամենաընտիր կարագն է, — մեղավորի նման արդարացավ Մարտյան Նապաստակը:

— Այո, բայց երևի մեջը հացի փշրանքներ էին ընկել, — փնթփնթաց Գլխարկագործը, — դու չպետք է կարագը հացի դանակով քսեիր:

Մարտյան Նապաստակը վերցրեց ժամացույցն ու մտածկոտ նայեց: Հետո մտցրեց թեյի բաժակի մեջ ու կրկին նայեց, բայց չկարողացավ հարմար պատասխան գտնել, կրկնեց քիչ առաջվա ասածը.

— Դա ամենաընտիր կարագն է:

Ալիսը նրա ուսի վրայից հետաքրքրությամբ դիտում էր:



— Ի՛նչ ծիծաղելի ժամացույց է, — նկատեց նա, — ամսվա օրերն է ցույց տալիս և ոչ թե օրվա ժամերը:

— Ինչո՞ւ ես զարմանում, — հարցրեց Գլխարկագործը, — մի՞ թե քո ժամացույցը տարիներն է ցույց տալիս:

— Իհարկե ոչ, — անմիջապես վրա տվեց Ալիսը, — չէ որ երկար ժամանակ նույն տարին է լինում:

— Ճիշտ այդպես էլ իմ ժամացույցն է<sup>[20]</sup>:

Ալիսը բոլորովին խճճվեց: Գլխարկագործի խոսքերը թեև արտասանվեցին քերականորեն ճիշտ, բայց անիմաստ հնչեցին:

— Ես ձեզ բոլորովին չեմ հասկանում, — հնարավորին չափ քաղաքավարի ասաց Ալիսը:

— Քնամուկը նորից է քնել, — նկատեց Գլխարկագործը և տաք թեյ լցրեց նրա քթին:

Քնամուկը վրդովված թափահարեց գլուխը և առանց աչքերը բացելու խոսեց.

— Իհարկե, իհարկե, դու ասացիր այն, ինչ ես ինքս էի ուզում ասել:

— Գուշակեցի՞ր հանելուկը, — նորից Ալիսին դիմեց Գլխարկագործը:

— Ոչ, հանձնվում եմ, — պատասխանեց Ալիսը, — ո՞րն է պատասխանը:

— Գաղափար անգամ չունեմ, — ասաց Գլխարկագործը:

— Ես էլ, — շարունակեց Մարտյան Նապաստակը:

Ալիսը ծանր հառաչեց:

— Լավ կլիներ, որ դուք ժամանակն օգտավետ անցկացնեիք, քան թե վատնեիք անպատասխան հանելուկներ առաջարկելով:

— Եթե դու ճանաչեիր ժամանակին այնպես, ինչպես ես, — ասաց Գլխարկագործը, — ապա նրան անօգտավետ վատնելու մասին չէիր խոսի: Ժամանակը՝ դա նա է:

— Չեմ հասկանում, ինչ եք ուզում ասել:

— Իհարկէ, չես հասկանա, — Գլխարկագործը արհամարհանքով շարժեց գլուխը, — Համարձակվում եմ ասել, դու երբեք ժամանակի հետ չես խոսել:

— Թերևս, — զգույշ պատասխանեց Ալիսը, — բայց գիտեմ, որ ժամանակ էի վատնում երաժշտություն սովորելու համար:

— Լավ, ամեն ինչ պարզ է, — նկատեց Գլխարկագործը, — ժամանակը տանել չի կարող, երբ վատնում են իրեն: Եթէ դու նրա հետ լավ հարաբերությունների մեջ լինեիր, նա ուզածիդ պես կվարվեր ժամացույցիդ հետ: Օրինակ, ասենք առավոտյան ժամը ինն է, դպրոց գնալու ժամանակը: Դու միայն շնչա նրա ականջին, և մի ակնթարթում սլաքները կպտտվեն: Մեկն անց կեսն է, ճաշի ժամն է:

— Ի՛նչ լավ կլիներ, — շնչաց Մարտյան Նապաստակը:

— Իհարկէ, չտեսնված կլիներ, — մտածկոտ ասաց Ալիսը, — միայն թէ ես ուտել չէի ցանկանա:

— Սկզբում, հավանաբար, այդպես կլիներ, — բացատրեց Գլխարկագործը, — բայց սլաքները ուզածիդ չափ կարող ես պահել մեկն անց կեսի վրա:

— Ուրեմն դուք այդպե՛ս եք վարվում:

Գլխարկագործը մռայլ օրորեց գլուխը:

— Ես՝ ոչ, — պատասխանեց նա: — Մենք անցյալ տարի մարտ ամսին վիճեցինք, գիտես, հենց սրա խելագարվելուց առաջ (նա թեյի գդալով ցույց տվեց Մարտյան Նապաստակին): Այդ Փոսիկի Թագուհու տված համերգին էր, և ես պիտի երգեի.

Շողա չղջիկ, կայծկլտա,  
Ուզածդ ով կիմանա...

Երևի դու գիտես այդ երգը:

— Դրա նման ինչ-որ բան լսել եմ, — ասաց Ալիսը:

— Իսկ շարունակությունն այսպես է, — նորից երգեց Գլխարկագործը.

Թռչիր օդում շարունակ,  
Ինչպես թռչի մի պնակ...  
Շողա, չղջիկ, կայծկլտա՛...<sup>[21]</sup>

Այստեղ Քնամուկը թափ տվեց իրեն ու սկսեց երգել քնի մեջ. «Շողա, չղջիկ, կայծկլտա...» և շարունակեց այնքան ժամանակ, մինչև նրան կամթեցին, ու նա լռեց:

— Դե, ես հագիվ էի առաջին քառյակը վերջացրել, — ասաց Գլխարկագործը, — երբ Թագուհին վեր թռավ ու ճչաց. «Նա սպանում է ժամանակը: Կտրել նրա գլուխը»:

— Ի՛նչ սարսափելի վայրագություն,—բացականչեց Ալիսը:

— Այդ օրվանից, — տխուր շարունակեց Գլխարկագործը, — ժամանակը չի կատարում իմ խնդրանքը: Մեզ մոտ միշտ ժամը վեցն է:

Մի պայծառ միտք ծագեց Ալիսի գլխում:

— Ուրեմն ա՛յդ է պատճառը, որ այստեղ շատ թռչի սպասք կա, — հարցրեց նա:

— Այո, — հառաչեց Գլխարկագործը, — մեզ մոտ միշտ թռչի ժամն է, և մենք չենք հասցնում ավստենները լվանալ:

— Եվ շարունակ պտտվում եք սեղանի շուրջը:

— Ճիշտ այդպես, հենց որ բաժակները փոխելու հարկ է լինում:

— Իսկ ե՞րբ ամեն ինչ նորից սկսեք, — համարձակվեց հարցնել Ալիսը:

— Եկեք ուրիշ բանի մասին խոսենք, — ընդմիջեց Մարտյան Նապաստակը հորանջելով, — ես արդեն հոգնեցի այդ ամենից:

Առաջարկում եմ, որ այս երիտասարդ օրիորդը մեզ մի հեքիաթ պատմի:

— Շատ ավստու, բայց ես ոչ մի հեքիաթ չգիտեմ, — Ալիսին փոքր-ինչ տագնապ պատճառեց Մարտյան Նապաստակի առաջարկությունը:

— Դե, ուրեմն, Քնամուկը թող պատմի, — միաժամանակ բղավեցին Գլխարկագործն ու Մարտյան Նապաստակը և սկսեցին աջ ու ձախ կամթել նրան, — արթնացի՛ր, Քնամուկ:

Քնամուկը դանդաղ բացեց աչքերը:

— Ես քնած չէի, — խոպոտ ու թույլ ձայնով ասաց նա, — և լսեցի ամբողջ խոսակցությունը, բառ առ բառ:

— Մեզ մի բան պատմիր, — ասաց Մարտյան Նապաստակը:

— Ի՛նչ կլինի, պատմեցեք, — խնդրեց Ալիսը:

— Շտապիր, — ավելացրեց Գլխարկագործը, — թե չէ չվերջացրած՝ նորից քուն կմտնես:

— Լինում է, չի լինում, երեք քույր են լինում, — վրա տվեց Քնամուկը, — Էլսին, Լասին ու Թիլին<sup>[22]</sup>. նրանք բնակվում էին ջրհորի հատակում...

— Իսկ ինչո՞վ էին սնվում, — հարց տվեց Ալիսը, որը միշտ հետաքրքրություն էր ցուցաբերում ուսելիքի մասին եղած զրույցին:

— Օջարակով, — մի երկու րոպե մտածելուց հետո պատասխանեց Քնամուկը:

— Բայց միայն դրանով սնվել հնարավոր չէ, — մեղմ նկատեց Ալիսը, — նրանք կհիվանդանային:

— Այդպես էլ եղավ, նրանք ծանր հիվանդացան, — հաստատեց Քնամուկը:

Ալիսը փորձեց պատկերացնել այդ արտասովոր ապրելակերպը, բայց բան դուրս չեկավ:

— Իսկ ինչո՞ւ էին նրանք բնակվում ջրհորի հատակում, — հարցրեց նա:

— Մի քիչ թեյ ավելացրու, — ամենայն լրջությամբ ասաց Մարտյան Նապաստակը:

— Ես դեռ ոչինչ չեմ լցրել, — վիրավորվեց Ալիսը, — այնպես որ, ավելացնել չեմ կարող:

— Ուզում ես ասել, պիտի ասեի լցրու և ոչ թե ավելացրու, — նկատեց Գլխարկագործը, — իհարկե, ավելի հեշտ է ավելացնելը, քան թե ոչինչ չլցնելը:

— Ոչ ոք ձեր կարծիքը չհարցրեց, — խիստ ասաց Ալիսը:

— Հիմա ո՞վ է ուրիշի գործերին խառնվում, — հաղթականորեն քացականչեց Գլխարկագործը:

Ալիսը չզիտեր ինչ պատասխան տար: Նա մի բաժակ թեյ լցրեց, հացին կարագ քսեց ու դիմելով Քնամկանը, կրկնեց.

— Իսկ ինչո՞ւ էին նրանք, բնակվում ջրհորի հատակում:

Քնամուկը դարձյալ մի երկու րոպե մտածեց, ապա ասաց.

— Դա օշարակի ջրհոր էր:

— Այդպիսի ջրհոր չի լինում: — Ալիսն արդեն սկսել էր բարկանալ:

Գլխարկագործն ու Մարտյան Նապաստակը սաստեցին նրան՝ սուս, սուս, իսկ Քնամուկը նեղացած շարունակեց.

— Եթե չես կարող քեզ զսպել, ապա ինքդ վերջացրու պատմությունը:

— Ոչ, խնդրում եմ, շարունակեք, — մեղմացավ Ալիսը, — ես ձեզ այլևս չեմ ընդհատի, հնարավոր է, որ մի այդպիսի ջրհոր լինի:

— Մի հատ այդպիսին, իհարկե, կա, — արհամարհանքով նետեց Քնամուկը, — բայց և այնպես համաձայնեց շարունակել, — հա, ուրեմն այդ երեք քույրերը սովորեցին կրել...

— Իսկ ինչ էին կրում, — ամբողջովին մոռանալով իր խոստումը, հետաքրքրվեց Ալիսը:

— Օշարակ, — այս անգամ արդեն առանց մտածելու պատասխանեց Քնամուկը:

— Ինձ մի մաքուր բաժակ է պետք, — ընդհատեց Գլխարկագործը, — եկեք բոլորս մի-մի աթոռ այն կողմ գնանք:

Խոսելիս նա փոխեց տեղը: Նրան հետևեց Քնամուկը: Մարտյան Նապաստակը գրավեց Քնամկան տեղը, իսկ Ալիսը մեծ տհաճությամբ նստեց Մարտյան Նապաստակի աթոռին: Գլխարկագործը միակն էր, որ այդ փոփոխությունից շահեց: Ալիսի վիճակն առաջվանից ավելի վատ էր, որովհետև Մարտյան Նապաստակը քիչ առաջ շրջել էր կաթի ամանն իր ավստի մեջ:

Ալիսը չէր ուզում Քնամկանը նորից վիրավորել և շատ զգուշությամբ հարցրեց.

- Բայց ես չեմ հասկանում, թե նրանք որտեղից էին օշարակ կրում:
- Դու կարող ես ջուր կրել ջրհորից, — պատասխանեց Գլխարկագործը,
- նրանք էլ օշարակ էին կրում օշարակի ջրհորից: Է՛հ, հիմարի մեկը:
- Բայց չե՞ որ նրանք բնակվում էին ջրհորում, — ուշադրություն չդարձնելով Գլխարկագործի վերջին խոսքին, հարցրեց Ալիսը:
- Իհարկե, — հաստատեց Քնամուկը, — ջրհորում:

Այս պատասխանն այնպես շփոթեցրեց խեղճ Ալիսին, որ նա մի որոշ ժամանակ չընդհատեց Քնամկանը:

- Նրանք սովորում էին գրել, — հորանջելով ու աչքերը տրորելով շարունակեց Քնամուկը, — գրում էին զանազան բառեր, այն ամենը, ինչ սկսվում է «Մ» տառով:
- Ինչո՞ւ «Մ» տառով, — հարցրեց Ալիսը:
- Իսկ ինչո՞ւ ոչ, — ասաց Մարտյան Նապաստակը:

Ալիսը լռեց:

Քնամուկն արդեն փակել էր աչքերն ու ննջում էր, բայց Գլխարկագործը կամթեց նրան, վերջինս թույլ ճիչ արձակելով արթնացավ.

- Այն ամենը, ինչ սկսվում է «Մ» տառով, օրինակ՝ մկան թակարդ, մարդ, միտք և միլիոն»: Դու հաճախ ասում ես՝ «միլիոններ ու միլիոններ», բայց երբևէ տեսել ես այդքան շատ բառ գրված:
- Եթե դուք ինձ եք հարցնում, — շփոթվեց Ալիսը, — չեմ տեսել:
- Ուրեմն, լրիր, — սաստեց Գլխարկագործը:

Ալիսը չկարողացավ հանդուրժել այդ կոպտությունը: Նա վիրավորված ոտքի ելավ ու հեռացավ: Քնամուկն անմիջապես քուն մտավ: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա գնալուն: Ալիսը մերթ ընդ մերթ հետ էր նայում, հուսալով, որ կկանչեն իրեն: Վերջին անգամ տեսավ, թե ինչպես Մարտյան Նապաստակն ու Գլխարկագործը փորձում էին Քնամկանը խցկել թեյամանի մեջ:

- Ինչ էլ որ լինի, այլևս հետ չեմ դառնա, — Ալիսը սկսեց փնտրել անտառից դուրս գալու ճանապարհը, — սա ամենահիմար թեյըմպումն էր, որ երբևէ տեսել եմ իմ ամբողջ կյանքում:

Հանկարծ Ալիսը ծառերից մեկի վրա դուռ նշմարեց:

— Ա՛յ քեզ բան, այսօր ամեն ինչ արտասովոր է: Ինձ թվում է, ես անմիջապես կկարողանամ ներս մտնել:

Ալիսը քայլերն ուղղեց դեպի դուռը և նորից հայտնվեց երկար սրահում՝ փոքրիկ ապակե սեղանի մոտ:

— Այս անգամ գործն ավելի լավ գլուխ կբերեմ, — վճռեց նա ու վերցնելով փոքրիկ ոսկե բանալին, բացեց պարտեզ տանող դուռը: Ապա կերավ սնկից (գրպանում դեռ մի կտոր կար), դարձավ մեկ ոտնաչափ, հետո անցավ նեղ միջանցքով ու վերջապես հայտնվեց գեղատեսիլ պարտեզում՝ զով շատրվանների ու գեղեցիկ ծաղկաթմբերի միջև:

## **ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ**

### **ԹԱԳՈՒՀՈՒ ՔՐՈՔԵԹԻ ԴԱՇՏԸ<sup>[23]</sup>**

Պարտեզի մուտքի մոտ աճել էր մի մեծ սպիտակ վարդենի: Շուրջը կանգնած երեք պարտիզպան շտապ-շտապ կարմիր գույնով ներկում էին վարդերը: Դա Ալիսին տարօրինակ թվաց և նրանց աշխատանքը մոտիկից դիտելու համար մի քանի քայլ արեց: Մոտ գալուն պես լսեց, թե ինչպես նրանցից մեկը խոսեց.

— Լսիր, Հինգնոց, վրաս ներկ ես կաթեցնում:

— Ես մեղավոր չեմ, — մռայլվեց Հինգնոցը, — Յոթնոցը խփեց արմունկիս:

Այս խոսքերի վրա Յոթնոցը բարձրացրեց գլուխը.

— Ճիշտ այդպես, Հինգնոց, մեղքդ միշտ ուրիշների վրա գցիր:

— Գոնե դու մի խոսիր, — ասաց Հինգնոցը, — ես երեկ միայն լսեցի, թե ինչպես Թագուհին ասաց, որ դու արժանի ես գլխատման:

— Հանուն ինչի՞, — հարցրեց այն մեկը, որն առաջինն էր խոսել:

— Քո գործը չէ, Երկուսնոց, — պատասխանեց Յոթնոցը:

— Ո՛չ, նրա գործն է, — պնդեց Հինգնոցը, — ես կասեմ նրան, թե ինչո՞ւմ: Այն պատճառով, որ խոհարարին սոխի փոխարեն կակաչի արմատներ էր սվել:

Յոթնոցը շարտեց վրձինը և հենց նոր էր սկսել.

— Դե, այդ բոլոր անարդարություններից... — երբ պատահամբ աչքն ընկավ Ալիսի վրա, որը կանգնած դիտում էր նրանց, և իսկույն լռեց: Մյուսները նույնպես շրջվեցին դեպի Ալիսն ու գլուխ տվին:

— Ասացե՛ք, խնդրեմ, — փոքր-ինչ երկչոտ հարցրեց Ալիսը, — ինչո՞ւ եք ներկում վարդերը:

Հինգնոցն ու Յոթնոցը լուռ նայեցին Երկուսնոցին: Երկուսնոցը ցածր ձայնով բացատրեց.

— Գիտեք ինչ, փոքրիկ օրիորդ, այստեղ պետք է կարմիր վարդենի լիներ, իսկ մենք սխալմամբ սպիտակն ենք տնկել, և եթե Թագուհին նկատի, գլխատել կտա բոլորիս: Դրա համար էլ, ինչպես տեսնում եք, մենք մեր ձեռքից եկածն անում ենք նախքան նրա գալը, և...

Այդ պահին հինգնոցը, որ անհանգստացած պարտեզի խորքն էր նայում, գոչեց.

— Թագուհի՛ն, Թագուհի՛ն:

Պարտիզպաններն անմիջապես երեսնիվայր փովեցին գետնին: Բազմաթիվ ոտնաձայներ լսվեցին և Ալիսն անհամբերությամբ շրջվեց Թագուհուն տեսնելու:

Առջևից քայլում էին տասը զինվոր: Նրանք բոլորն էլ երեք պարտիզպանների նման ուղղանկյուն էին ու տափակ, իսկ ձեռքերն ու ոտքերն անկյուններում էին: Ապա եկան ադամանդյա ազուռներով զարդարված տԼճսը պալատական, որոնք շարժվում էին զինվորների նման՝ զույգ-զույգ: Նրանցից հետո գալիս էին տասն արքայազն:

Երեխաները ձեռք ձեռքի տված, ուրախ-զվարթ ցատկոտելով առաջ էին վազում: Բոլորն էլ ունեին փոսիկի նշանը: Ապա հայտնվեցին հյուրերը՝ մեծ մասամբ թագավորներ ու թագուհիներ: Նրանց մեջ Ալիսը ճանաչեց Սպիտակ ճագարին, որն արագ-արագ խոսում էր, ժպտալով ամեն մի ասածի վրա, և անցավ Ալիսի կողքով առանց նրան նկատելու: Հետո եկավ Փոսիկի Վալետը՝ ձեռքին արքայական թագը՝ մանուշակագույն թավշյա բարձի վրա: Այդ հսկայական թափորի վերջից գալիս էին

**ՓՈՍԻԿԻ ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ:**



Ալիսը չէր կարողանում որոշել, թե արդյո՞ք ինքն էլ պետք է հետևի պարտիզպաններին և չմտաբերեց որևէ տեղ գրված նման մի օրենք. «Ի՞նչ օգուտ այդ թափորից, եթե բոլոր մարդիկ երեսնիվայր պառկեն ու ոչինչ չտեսնեն», — մտածեց նա ու մնաց կանգնած:

Երբ թափորը մոտեցավ Ալիսին, բոլորը կանգ առան ու նայեցին նրան, իսկ Թագուհին խիստ ձայնով ասաց.

— Սա ո՞վ է, — հարցն ուղղելով Փոսիկի Վալետին, որն ի պատասխան միայն գլուխ տվեց ու ժպտաց:

— Ապուշ, — Թագուհին անհամբերությամբ ցնցեց գլուխը, — անունդ ինչ է, աղջիկս, — դիմելով Ալիսին շարունակեց նա:

— Ալիս է, ձերդ գերագանցություն, — վերին աստիճանի քաղաքավարություն ցուցաբերելով ասաց նա և միաժամանակ մտածեց. «Ի վերջո, նրանք ընդամենը խաղաթղթերի կապուկ են, չարժե նրանցից վախենալ»:

— Իսկ սրանք ովքե՞ր են, — հարցրեց Թագուհին՝ մատնացույց անելով վարդենու շուրջը երեսնիվայր փռված երեք պարտիզպաններին: Քանի որ նրանց մեջքներին նկարված էր նույնը, ինչ որ խաղաթղթերի վրա, Թագուհին չէր կարողանում հասկանալ՝ նրանք պարտիզպաններ էին, զինվորներ, պալատականներ, թե իր երեք երեխաները:

— Որտեղից իմանամ, — պատասխանեց Ալիսը՝ զարմանալով իր համարձակության վրա, — իմ ինչ գործն է:

Թագուհին զայրույթից կապտեց և մի պահ վայրի գազանի նման անթարթ Ալիսին նայելուց հետո ճչաց.

— Կտրել սրա գլուխը, կտրել:

— Հիմարություն, — վճռական ու համարձակ նետեց Ալիսը: Թագուհին լռեց:

Թագավորը ձեռքը վախվորած դրեց Թագուհու ձեռքի վրա և երկչոտ ձայնով ասաց.

— Մտածիր, թե ինչ ես անում, սիրելիս, չէ որ նա դեռ երեխա է:

Թագուհին բարկացած մեջքն արեց նրան ու դիմեց Վալետին.

— Շրջի՛ր դրանց:

Վալետը զգուշությամբ ոտքով շրջեց պարտիզպաններին.

— Ոտքի՛, — հրամայեց Թագուհին սուր, ճղճղան ձայնով, և երեք պարտիզպաններն անմիջապես վեր թռան ու սկսեցին գլուխ տալ Թագավորին, Թագուհուն, արքայազներին և բոլոր հյուրերին:

— Վերջացրե՛ք, — ճչաց Թագուհին, — գլուխս պտտվում է: — հետո դառնալով դեպի վարդենին՝ շարունակեց.

— Դուք ի՞նչ էիք անում այստեղ:

— Թագուհին ապրած կենա, — վախեցած հլու-հնազանդ ասաց Երկուսնոցը և խոսելիս ծնկի եկավ, — մենք փորձում էինք...

— Պարզ է, — ընդհատեց Թագուհին, որ մինչ այդ ուշադրությամբ գննում էր վարդերը, — գլխատել դրանց:

Թափորն առաջ շարժվեց: Զինվորներից երեքը մնացին պատմելու տարաբախտ պարտիզպաններին, որոնք վազեցին դեպի աղջիկը օգնություն հայցելու:

— Մի՛ վախեցեք: — Ալիսը դրեց նրանց մոտակայքում դրված թաղարի մեջ: Երեք զինվորները մի քանի րոպե այս ու այն կողմ գնացին և, պարտիզպաններին չգտնելով, հանգիստ քայլեցին մյուսների հետևից:

— Կտրեցե՛ք գլուխները, — բղավեց Թագուհին:

— Նրանց գլուխներն անհետացել են, ձերդ գերազանցություն, — ի պատասխան ճչացին նրանք:

— Հրաշալի է, — ծղրտաց Թագուհին, — կարող ես քրոքեթ խաղալ:

Զինվորները լուռ նայեցին Ալիսին, որովհետև խոսքը բացահայտորեն ուղղված էր նրան:

— Այո՛, — գոռաց Ալիսը:

— Ուրեմն գնանք, — մոնչաց Թագուհին և Ալիսը միացավ թափորին՝ հետաքրքրված, թե ինչ է լինելու հետո:

— Շատ... շատ հիանալի օր է, — մի նվազ ձայն լսվեց կողքից:

Պարզվեց, որ խոսողը Սպիտակ ճագարն էր, որը քայլում էր Ալիսի հետ համընթաց՝ անհանգստացած նայելով նրա դեմքին:

— Շատ, — կրկնեց Ալիսը, — իսկ ուր է Դքսուհին:

— Սուս, սուս-հապշտապ ցածրաձայն կանխեց ճագարը:

Խոսելիս նա ուսի վրայով վախեցած նայեց հետ, ապա կանգնելով ոտքի մատներին, բերանը մոտեցրեց Ալիսի ականջին ու շշնջաց.

— Նա մահվան է դատապարտված:

— Ինչի՞ համար, — հետաքրքրվեց Ալիսը:

— Դու ասացիր. «Ի՞նչ մեղք է», — հարցրեց ճագարը:

Ալիսը քրքջաց:

— Սո՛ւս կաց, — վախեցավ ճագարը, — Թագուհին կլսի: Գիտես ի՞նչ, Դքսուհին ուշացումով եկավ, իսկ Թագուհին որոտաց...

— Գրավե՛ք ձեր տեղերը, — և մարդիկ սկսեցին այս ու այն կողմ վազել տարբեր ուղղություններով՝ ցատկելով միմյանց վրայից: P-այց և այնպես, քիչ անց, նրանք տեղավորվեցին, ու խաղն սկսվեց:

Ալիսը կյանքում երբեք այդպիսի արտառոց խաղադաշտ չէր տեսել:

Ամենուրեք թմբեր էին ու ակոսներ: Քրոքեթի գնդակները կենդանի ոգնիներ էին, մուրճիկները՝ կարմրաթև թռչուններ, իսկ դարպասների փոխարեն զինվորները երկծալ ու չորեքթաթ հենվել էին գետնին:

Ալիսի համար շատ դժվար էր կառավարել իր կարմրաթևիկին: Նա միայն կարողացավ թռչունի մարմինը թևի տակ դնել, բայց ոտքերը մնացին կախ ընկած: Բայց և այնպես ամեն անգամ, երբ ուղղում էր թռչունին ու պատրաստվում նրա գլխով հարվածել ոգնուն, թռչունը թեքում էր Վիզը և ապուշ կտրած այնպես էր նայում Ալիսին, որ վերջինս չէր կարողանում ծիծաղը զսպել: Ի վերջո հաջողվեց նրա գլուխն իջեցնել, պահել հարվածի պատրաստ, բայց արդեն ուշ էր: Ոգնին ուղղվել էր ու դանդաղ հեռանում էր: Այնտեղ, ուր Ալիսն ուզում էր ուղարկել ոգնուն՝ կամ թումբ էր լինում, կամ էլ ակոս, իսկ երկծալ զինվորները շարունակ ոտքի էին կանգնում ու տեղից տեղ վազում, այնպես որ Ալիսը շուտով եզրակացրեց, որ այդ չափազանց դժվար խաղ է:

Մասնակիցները խաղում էին առանց հերթականության, շարունակ վիճում ու կռվում էին ոգնիների պատճառով: Քիչ անց Թագուհին այն աստիճան գայրացավ, որ ամեն բուստ ոտքը գետնին էր խփում ու ճչում:

— Կտրեցե՛ք սրա գլուխը: Կտրեցե՛ք նրա գլուխը:

Ալիսն սկսեց հուզվել: Հեշտ է, նա դեռ Թագուհու հետ վեճի չէր բռնվել, բայց գիտեր, որ դա անխուսափելի է: «Ի՞նչ կլինի իմ վիճակը: Սրանք շատ են սիրում գլխատել, բայց զարմանալին այն է, որ դեռ կենդանի մնացողներ կան», — մտածում էր Ալիսը:

Եվ շուրջն էր նայում փախուստի ճանապարհ գտնելու, աննկատ ծլկելու համար, երբ հանկարծ օդում նկատեց մի տարօրինակ կերպարանք: Սկզբում իրոք խիստ զարմացավ, բայց մի քանի բուստ ուշադիր դիտելուց հետո գլխի ընկավ, որ դա ժպիտ է և ինքն իրեն ասաց.

— Չեշիրյան Կատուն է: Հիմա մի քիչ կզրուցենք:

— Ինչպե՞ս ես, — հարցրեց Կատուն միայն այն ժամանակ, երբ երևաց բերանը:

Ալիսն սպասեց այնքան, մինչև հայտնվեցին Կատվի աչքերը և գլխով արեց:

«Եթե ականջները կամ թեկուզ դրանցից մեկը չհայտնվի, չեմ խոսի», — մտածեց նա:

Հաջորդ վայրկյանին երևաց Կատվի ամբողջ գլուխը: Հետո Ալիսը ցած դրեց կարմրաթևիկին ու սկսեց խոսել խաղի մասին: Աղջիկն այնքան էր ուրախացել, որ վերջապես իրեն լսող գտավ: Կատուն կարծես բավական համարեց իր գլուխը և այլևս չշարունակեց հայտնվել:

— Ինձ թվում է նրանք բոլորն էլ սխալ են խաղում, — բողոքեց Ալիսը, — և այնքան բարձր են վիճում, որ ասածդ չես լսում: Կարծես ոչ մի կանոն գոյություն չունի, իսկ եթե ունի էլ, ոչ ոք չի կիրառում: Չեք կարող պատկերացնել, թե մարդ ինչպես է շփոթվում, երբ խաղի բոլոր առարկաները կենդանիներ են: Օրինակ, դարպասը, որի միջով պետք է անցնեի, խաղադաշտի մյուս կողմը գնաց, իսկ երբ պատրաստվեցի հարվածել Թագուհու ոգնուն, փախավ, տեսնելով ինձ:

— Ինչպե՞ս է քեզ դուր գալիս Թագուհին, — ցածրաձայն հարցրեց Կատուն:

— Բոլորովին էլ դուր չի գալիս, — սկսեց Ալիսը, — նա այնպես...

— Հենց այդ պահին Ալիսը նկատեց Թագուհուն, որը կանգնած մոտերքում ականջ էր դնում խոսակցությանը — ... լավ է խաղում, որ անմիջապես պետք է հանձնվել:

Թագուհին ժպտաց ու առաջ անցավ:

— Այդ ում հետ ես խոսում, — մոտենալով Ալիսին, հարցրեց Թագավորը և հետաքրքրությամբ նայեց Կատվի գլխին:

— Իմ ընկերն է, Չեշիրյան Կատուն, — ասաց Ալիսը, — թույլ տվեք ներկայացնել ձեզ:

— Ինձ բոլորովին դուր չի գալիս նրա տեսքը, — նկատեց Թագավորը, — բայց եթե ցանկանում է, կարող է համբուրել ձեռքս:

— Բոլորովին էլ չեմ ցանկանում, — պատասխանեց Կատուն:

— Ի՛նչ հանդուգն ես, — վրդովվեց Թագավորը, — այդպես մի նայիր ինձ:

Եվ խոսելիս թաքնվեց Ալիսի թիկունքում:

— Կատուն կարող է նայել Թագավորին<sup>[24]</sup>, — առարկեց Ալիսը, — ես նման մի բան կարդացել եմ, բայց չեմ հիշում որտեղ:

— Նրան պետք է արտաքսել, — վճռեց Թագավորը և կանչեց Թագուհուն, որն այդ րոպեին անցնում էր իր կողքով:

— Սիրելի՛ս, ես կուզենայի, որ այս կատվին արտաքսեիր:

Թագուհին մեծ ու փոքր դժվարությունները հարթելու մի միջոց ուներ:

— Կտրեցե՛ք գլուխը, — առանց շուրջը նայելու հրամայեց նա:

— Ես ինքս կբերեմ դահճին, — ոգևորվեց Թագավորը և շտապ հեռացավ:

Ալիսը ցանկացավ հետ գնալ տեսնելու, թե խաղն ինչպես է ընթանում, բայց հանկարծ հեռվից հնչեց Թագուհու կատաղի ճիչը: Նա արդեն լսել էր խաղացողներից երեքի մահավճիռը միայն նրա համար, որ բաց էին թողել իրենց հերթը: Նրան բոլորովին դուր չէր գալիս խաղը, այնպիսի

խառնաշփոթություն էր տիրում շուրջը, որ երբեք չէր իմանում, թե երբ է իր հերթը, և գնաց փնտրելու իր ոգնուն:

Կենդանին կռվի էր բռնվել մեկ ուրիշ ոգնու հետ: Հարվածելու հիանալի առիթ էր, բայց դժբախտաբար Ալիսի կարմրաթևիկը պարտեզի մյուս ծայրին էր և անօգնական փորձում էր մազլցել ծառը:

Երբ թռչունին բռնած Ալիսը հետ եկավ, կռիվն արդեն ավարտվել էր, իսկ ոգնիներն էլ անհետացել էին:

«Դա դեռ ոչինչ չի նշանակում, — մտածեց Ալիսը, — որովհետև բոլոր դարպասները խաղաղաշուի այս կողմից գնացել են»:

Նա թռչունին թևի տակ դրեց, որպեսզի նորից չփախչի և վերադարձավ շարունակելու զրույցը Չեշիրյան Կատվի հետ:

Մոտ գնալով զարմանք կտրեց՝ տեսնելով հոծ բազմություն հավաքված Կատվի շուրջը: Վեճ էր գնում դահճի, Թագավորի և Թագուհու միջև, որոնք բոլորն էլ խոսում էին միաժամանակ, իսկ մնացածները դժգոհ ու անհանգստացած լռում էին:

Հենց որ Ալիսը հայտնվեց, նրանք երեքով կրկնեցին իրենց փաստարկները՝ դիմելով նրան: Նա մի կերպ հասկացավ, թե խոսքն ում է վերաբերում, որովհետև բոլորն էլ խոսում էին միաբերան:

Դահիճն ասում էր, որ ինքը չի կարող կտրել մարմին չունեցող գլուխ: Նա երբեք իր կյանքում այդպիսի բան չի արել և չի էլ ուզում անել:

Թագավորը պնդում էր, որ գլուխ ունեցողը պիտի գլխատվի, ուստի հարկավոր չէ հիմարություններ դուրս տալ:

Թագուհին աղաղակում էր, որ եթե դահիճը ի կատար չածի իր հրամանը, ապա մի ակնթարթում պետք է գլխատի բոլոր ներկաներին: (Հենց այդ վերջին խոսքերի պատճառով մարդիկ ահ ու սարսափի մեջ էին):

Ալիսը կարողացավ միայն ասել.

— Կատուն պատկանում է Դքսուհուն: Ավելի լավ է նրան հարցրեք:

— Նա բանտում է, շուտ նրան այստեղ բեր, — հրամայեց Թագուհին դահճին, որը նետի նման սուրաց-գնաց:

Դահճի գնալու հետ մեկտեղ Կատվի գլուխը սկսեց կամաց-կամաց անհետանալ:

Երբ դահիճը Դքսուհու հետ հետ եկավ, Կատվի գլուխն այլևս չէր երևում: Թագավորն ու դահիճը կատաղի առաջ նետվեցին փնտրելու Կատվին, իսկ մնացածներն անցան իրենց խաղին:

## **ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ**

### **ԿԵՂԾ ԿՐԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

— Չես կարող պատկերացնել, սիրելի փոքրիկս, թե ինչքան ուրախ եմ քեզ նորից տեսնելու համար,— Դքսուհին քնքշորեն թևանցուկ արեց Ալիսին, և նրանք առաջ շարժվեցին:

Ալիսին ուռեցի էր, որ Դքսուհին լավ տրամադրության մեջ էր և մտաօեց, թե գուցե պղպեղն էր պատճառը, որ նրան այդքան չարացրել էր իրենց առաջին հանդիպման ժամանակ:

— Երբ ես Դքսուհի լինեմ, — ասաց նա ինքնիրեն, — (բայց դա այնքան էլ հավանական չէր) բոլորովին պղպեղ չեմ պահի իմ խոհանոցում:

Ապուրներն առանց դրան էլ համով են: Պղպեղից մարդիկ դյուրագրգիռ են դառնում, — նա անչափ գոհ մնաց իր հայտնագործությունից: — Քացախը մարդկանց թթվեցնում է, երիցուկը դառնացնում է, իսկ գարու շաքարը երեխաներին քաղցրացնում է: Երանի մարդիկ իմանային այս ամենը և քաղցրավենիք գնելիս այդքան ժլատ չլինեին:

Նա լրիվ մոռացել էր Դքսուհուն և անակնկալի եկավ, երբ ականջի մոտ լսեց նրա ձայնը.

— Դու ինչ-որ բանի մասի՞ն ես մտածում, սիրելի՛ս, և մոռացե՞լ ես խոսելը: Ես հիմա չեմ կարող ասել, թե այստեղից ինչ բարոյախոսություն է բխում, բայց քիչ անց կհիշեմ:

— Գուցե, ոչ մի բարոյախոսություն էլ չկա՞, — համարձակվեց նկատել Ալիսը:

— Դե, դե, երեխա, — խոսելիս Դքսուհին պինդ սեղմվեց Ալիսին, — ամեն ինչ իր բարոյախոսությունն ունի, եթե միայն կարողանաս գտնել:

Ալիսին ամեննին դուր չեկավ Դքսուհու ջերմ վերաբերմունքը, նախ Դքսուհին շատ տգեղ էր, երկրորդ, լինելով իր հասակին՝ սուր կզակը դրել

էր Ալիսի ուսին: Չցանկանալով կոպիտ լինել, աղջիկը հնարավորին չափ դիմանում էր:

— Խաղն այժմ ավելի լավ է ընթանում, — Ալիսը շեղեց խոսակցությունը:

— Ճիշտ է, — համաձայնեց Դքսուհին, — իսկ դրա բարոյախոսությունը հետևյալն է. «Ո՛հ, սեր, ո՛հ, սեր, դու պտտեցնում ես երկրագունդը»<sup>[25]</sup>:

— Ինչ—որ մեկն ասել է, — շնչաց Ալիսը, — երկրագունդը պտտվում է այն պատճառով, որ ամեն ոք զբաղվում է իր գործով:

— Դե, իհարկե, դա նույն բանն է, — սուր ծնոտն աղջկա ուսը խրելով ավելացրեց Դքսուհին, — իսկ դրա բարոյախոսությունը՝ «Մտածեք՝ իմաստի մասին, իսկ բառերն իրենք իրենց կգան»:

«Ինչքա՛ն շատ է սիրում ամեն տեղ բարոյախոսություն գտնել», — զարմացավ աղջիկը:

— Համարձակվում եմ ասել, որ դու մտածում ես, թե ինչու ձեռքս չեմ դնում մեջքիդ, — մի փոքր դադարից հետո սկսեց Դքսուհին, — որովհետև քո կարմրաթևիկն ինձ կասկածելի է թվում, բայց և այնպես կփորձեմ:

— Նա կարող է կծել, — զգուշությամբ նկատեց Ալիսը, որովհետև ցանկություն չունեի, որ Դքսուհին գրկեր իրեն:

— Շատ ճիշտ է, — հաստատեց Դքսուհին, — կարմրաթևիկը կծում է մանանեխի պես: Սա էլ մեկ ուրիշ բարոյախոսություն. շունը շան թաթ չի կծի:

— Միայն թե մանանեխը թռչուն չէ:

— Ճիշտ է, ինչպես միշտ, իսկըդ ամեն բան կտրում է:

— Ինձ թվում է՝ մանանեխը ուրիշ կենդանի է:

— Իհարկե ուրիշ կենդանի է, — Դքսուհին պատրաստ էր համաձայնություն տալու այն ամենին, ինչ կասեր Ալիսը, — այս անտառում մանանեխի շատ որջեր կան, իսկ սրա բարոյախոսությունը ավելի լավ է կենդանի լինել, քան անկենդան:

— Հիշեցի, — բացականչեց՝ Ալիսը, որը չէր լսել Դքսուհու վերջին խոսքերը, — դա բանջարեղեն է, չնայած նման էլ չէ:



— Լրիվ համաձայն եմ քեզ հետ, իսկ այստեղից բխում է հետևյալը, «եղիբ այնպիսին, ինչպիսին որ կաս» կամ եթե ուզում ես, ավելի պարզ ասեմ. «Երբեք մի պատկերացրու քեզ այլ կերպ, քան այն, ինչ կարող է թվալ ուրիշներին, որպեսզի այն, ինչ դու էիր կամ կարող էիր լինել, ոչ այլ ինչ էր, եթե ոչ այն, ինչ դու էիր կամ թվում էիր ուրիշներին, այլ կերպ լինելով»:

— Գուցե ես ավելի լավ հասկանամ, — քաղաքավարությամբ ասաց Ալիսը, — եթե գրի առնեմ այն, բայց չեմ կարողանում հետևել ձեր ասածին:

— Դա ոչինչ... է համեմատած այն բանի հետ, որ հիմա կասեմ, եթե ցանկանամ, — գոհ պատասխանեց Դքսուհին:

— Խնդրում եմ, ձեզ մի տանջեք՝ ավելի երկար նախադասություններ ասելով:

— Բայց մի՞ թե դա տանջանք է, — զարմացավ Դքսուհին, — ես քեզ եմ նվիրում այն բոլորը, ինչ մինչև հիմա ասել եմ:

«Շատ աննշան նվեր է: Լավ է, որ ծննդյան տարեդարձի նվերներն այդպիսին չեն լինում», — մտածեց Ալիսը, բայց չհամարձակվեց բարձրաձայն արտահայտվել:

— Նորից մտքերի մեջ ընկար, — սուր ծնոտի մի ուժգին հարվածով հարցրեց Դքսուհին:

— Ես իրավունք ունեմ մտածելու, — կտրուկ պատասխանեց աղջիկը, որովհետև արդեն սկսել էր փոքր ինչ անհանգստանալ:

— Ճիշտ այնպիսի իրավունք, ինչպիսին ունեն խոզերը թռչելու, — վրա տվեց Դքսուհին, — և դրա բա...

Բայց այստեղ, ի զարմանս Ալիսի, Դքսուհու ձայնը մարեց, նույնիսկ իր ամենասիրած՝ բարոյախոսություն բառի վրա, և թևն սկսեց զողալ: Ալիսը վեր նայեց: Նրանց դիմաց ձեռքերը խաչաձևած, ամպի նման մռայլ կանգնել էր Թագուհին:

— Գեղեցիկ օր է, ձերդ գերազանցություն, — ցածր ու դողդոջուն սկսեց Դքսուհին:

— Այժմ ես քեզ վերջին անգամ եմ զգուշացնում, — ոտքը գետնին խփելով բղավեց Թագուհին, — կամ դու կթոշես, կամ քո գլուխը, և այդ կատարվելու է կես թոպեում: Ընտրի՛ր:

Դքսուհին ընտրություն կատարեց և մի ակնթարթում չքացավ:

— Շարունակիր խաղը, — Ալիսին դիմեց Թագուհին, աղջիկն այնպես էր վախեցել, որ լուռ քայլեց նրա հետևից դեպի խաղաղաշտ:

Մյուս հյուրերը, օգտվելով Թագուհու բացակայությունից, հանգստանում էին ստվերում, բայց հենց որ տեսան նրան, շտապ վերսկսեցին խաղը: Նա միայն թռուցիկ ասաց, որ մեկ թոպեի հապաղումը կարժենա նրանց կյանքը: Թագուհին շարունակ վիճում էր խաղացողների հետ և բղավում. «Կտրե՛լ նրա գլուխը, կտրե՛լ սրա գլուխը»:

Մահվան դատապարտվածներին հսկողության տակ էին վերցնում զինվորները: Ճրամանն ի կատար ածելու համար նրանք դադարում էին դարպաս լինելուց, այնպես որ կես ժամ անց ոչ մի դարպաս չմնաց, որովհետև բոլորը՝ Թագավորից, Թագուհուց և Ալիսից բացի, գտնվում էին հսկողությանդ տակ:

Ի վերջո, Թագուհին շնչասպառ, եղավ հրամաններ արձակելուց և դիմելով Ալիսին՝ հարցրեց.

Դու դեռ չե՞ս տեսել Կեղծ Կրիային:

— Ոչ, — զարմացավ Ալիսը, — ես նույնիսկ չգիտեմ, թե դա ինչ բան է:

— Նրանից ապուր են պատրաստում, — բացատրեց Թագուհին:

— Ես այդպիսի բան ոչ տեսել եմ, ոչ էլ լսել, — եզրակացրեց Ալիսը:

— Դե, ուրեմն, — առաջարկեց Թագուհին, — գնանք նրա մոտ, և նա քեզ կպատմի իր պատմությունը:

Երբ միասին առաջ էին շարժվում, Ալիսը լսեց, թե ինչպես Թագավորը ցածրաձայն ասաց բոլոր ներկա գտնվողներին.

— Դուք ներված եք:

«Ա՛յ քեզ հիանալի բան», — ուրախացավ աղջիկը, նա:

Իրեն այնքան դժբախտ էր զգում, որ Թագուհին այդքան շատ մարդկանց մահվան էր դատապարտել:

Շուտով նրանք մոտեցան արևի տակ խոր քնած Արծվառյուծին<sup>[26]</sup>: (Եթե դուք չգիտեք, թե ինչ բան է Արծվառյուծը, նայեք նկարին):

–Վե՛ր կաց, ծուլի մեկը և այս երիասարդ օրիորդին տար Կեղծ Կրիայի մոտ: Ես պետք է գնամ ներկա գտնվելու մահապատժին, — Արծվառյուծին դիմեց Թագուհին և, նրանց մենակ թողնելով, հեռացավ:

Ալիսին՝ բոլորովին դուր չեկավ թռչունը, բայց ավելի ապահով էր մնալ նրա հետ, թան թե հետևել կատաղած Թագուհուն:

Արծվառյուծը ելավ, շփեց աչքերը, հետո նայեց Թագուհու հետևից այնքան, մինչև վերջինս անհետացավ, ապա կամացուկ քրքջաց.

— Ծիծաղելի է, — ասաց Արծվառյուծը, չգիտես՝ ինքն իր հետ էր խոսում, թե Ալիսի:

— Ի՞նչն է ծիծաղելի:

— Դե իհարկե նա, այդ ամբողջը նրա, երևակայության արդյունքն է: Գիտես, նրանք երբեք մարդ չեն գլխատում: Գնացինք:

— Այստեղ բոլորն ասում են՝ «Գնացինք», — դժգոհեց Ալիսը և դանդաղ հետևեց Արծվառյուծին, — իմ կյանքում ինձ երբեք այդքան չեն հրամայել:

Նրանք այնքան էլ չէին գնացել, երբ հեռվից նկատեցին Կեղծ Կրիային՝ տխուր ու մենակ նստած ժայռի բեկորին: Երբ մոտ եկան, լսեցին նրա խոր հառաչները, կարծես տառապյալ լիներ: Ալիսը սրտանց խղճաց Կրիային:

— Ի՞նչ վիշտ ունի, — հարցրեց նա Արծվառյուծին:

Արծվառյուծը պատասխանեց համարյա նույն խոսքերով, ինչ որ ասել էր Թագուհու հասցեին:

— Այդ ամբողջը նրա երևակայության արդյունքն է, նա ոչ մի վիշտ էլ չունի: Գնացինք:

Երբ ավելի մոտեցան, նրանց տեսնելուն պես Կեղծ Կրիան բարձրացրեց իր թախծոտ, արցունքով լի աչքերը:

— Ահա այս երիտասարդ օրիորդը, — ասաց Արծվառյուծը, — ուզում է լսել քո պատմությունը:

— Ես կպատմեմ նրան, — խուլ ու հուսահատ խոսեց Կեղծ Կրիան, — նստեք և մինչև վերջացնելս ոչ մի ծպտուն չհանեք:

Նրանք նստեցին և մի քանի բուպե ոչ մեկը ոչ մի ձայն չհանեց:

Ալիսը մտածում էր. «Չգիտեմ, թե նա ինչպես է վերջացնելու, երբ դեռ չի էլ սկսել», բայց համբերությամբ սպասում էր:

— Մի ժամանակ, — վերջապես սկսեց Կեղծ Կրիան ծանր հոգոցով, — ես իսկական Կրիա էի:

Այս խոսքերին հաջորդեց երկարատև դադար, որ ժամանակ առ ժամանակ խախտվում էր Արծվառյուծի կոնչոցներով և Կեղծ Կրիայի անվերջանալի սրտաճմլիկ հեկեկանքներով: Ալիսն ուզում էր կանգնել ու ասել. «Շնորհակալությունն ձեր հետաքրքիր պատմության համար», բայց մտածեց, որ այս բոլորին ինչ-որ բան է հաջորդելու, ուստի գերադասեց լռել:

— Երբ մենք փոքր էինք, — շարունակեց Կեղծ Կրիան, որն այժմ քիչ թե շատ հանգստացել էր, չնայած, երբեմն հեծկլտում էր, — ծովային դպրոց էինք գնում: Մեր ուսուցիչը ծեր Կրիա էր: Մենք նրան Չախմախ էինք անվանում:

— Ինչո՞ւ էիք Չախմախ անվանում, — հարցրեց Ալիսը:

— Շատ պարզ, որովհետև նա ախմախ չէր... Իսկապես, դու շատ բուրբ ես, — զայրացած շարտեց Կեղծ Կրիան:

— Անհարմար չե՞ս զգում, այդպիսի հասարակ հարց ես տալիս, — ամոթանք տվեց Արծվառյուծը:

Հետո նրանք լռեցին և այնպիսի հայացք նետեցին խեղճ աղջկա վրա, որ սա ամոթից քիչ էր մնում գետինը մտներ:

Վերջապես Արծվառյուծը ասաց Կեղծ Կրիային.

— Շարունակի՛ր, բարեկամ: Պատմությունդ մի ձգիր ամբողջ օրը:

Կեղծ Կրիան կրկնեց նույն խոսքերը.

— Այո, մենք ծովային դպրոց էինք գնում, — և դիմելով Ալիսին, ասաց, — բայց դու կարող ես չհավատալ դրան:

— Ես բոլորովին էլ չասացի, որ չեմ հավատում, — ընդմիջեց Ալիսը:

— Ո՛չ, ասացիր, — պնդեց Կեղծ Կրիան:

— Լեզուդ քեզ քաշիր, — բղավեց Արծվառյուծը, մինչ Ալիսը կբանար բերանը:

Կեղծ Կրիան վրա բերեց.

— Մենք ամենալավ կրթությունն էինք ստանում, փաստորեն ամեն օր դպրոց էինք հաճախում:

— Ես էլ եմ սովորել ամենօրյա դպրոցում, դա ինչ հպարտանալու բա՞ն է որ:

— Արտադասարանային առարկաներ անցնու՞մ էիք, — նկատելիորեն անհանգստացած հարցրեց Կեղծ Կրիան:

— Այո, մենք սովորում էինք ֆրանսերեն ու երաժշտություն, — պատասխանեց Ալիսը:

— Իսկ լվացք անե՞լ, — կրկին հարցրեց Կեղծ Կրիան:

— Իհարկե ոչ, — արհամարհանքով նետեց Ալիսը:

— Դե, ուրեմն ձեր դպրոցն այնքան էլ լավը չէր, — մեծ ափսոսանքով ասաց Կեղծ Կրիան, — իսկ մեր դպրոցում ծրագրի վերջում գրված էր. «Ֆրանսերեն, երաժշտություն և լվացք՝ դասերից հետո»:

— Դուք երևի դրա կարիքը այնքան էլ չէիք զգում, — ասաց Ալիսը, — որովհետև ապրում էիք ծովի հատակում:

— Ես չէի կարող սովորել այդ առարկաները, — հառաչեց Կեղծ Կրիան, — ես միայն հիմնական դասընթացն էի անցնում:

— Իսկ ի՞նչ առարկաներ էին դրանք:

— Սկզբում, անշուշտ, մրել—կարթել, — բացատրեց Կեղծ Կրիան, — իսկ հետո թվաբանության չորս գործողությունները՝ գուշակել, մանել, ցանկապատել, բարակել:

— Ես երբեք «ցանկապատման» մասին չեմ լսել, դա ի՞նչ բան է:

Արծվառյուծը զարմանքից բարձրացրեց Թները:

— Երբեք չե՞ս լսել «ցանկապատելու» մասին, — բացակաչեց նա, — դու երևի գիտես, թե ի՞նչ է «այգի գցելը»:

— Այո, — թերահավատորեն ասաց Ալիսը, — դա նշանակում է ծառապատել մի որոշ տարածություն:

— Դե, եթե դու չգիտես, թե ինչ բան է «ցանկապատելը», — շարունակեց Արծվառյուծը, — ուրեմն դու ապուշ ես:

Ալիսն այլևս չհամարձակվեց հարցեր տալ և դիմեց Կեղծ Կրիային.

— Ուրիշ ի՞նչ առարկաներ էիք անցնում:

— Հին դարերի և նորագույն մատնություն, — պատասխանեց Կեղծ Կրիան և սկսեց մաշկաթաթերի վրա հաշվել առարկաները, — Հին ու նոր դարերի մատնություն, ջրագրության հետ միասին, և հետո բժագրություն: Այդ առարկայի դասատուն՝ ծեր Բժավոր Կարմրախայտը շաբաթը մեկ անգամ էր գալիս: Նա մեզ սովորեցնում էր կարմրել և խայտալ ծանձաղուտների մեջ:

— Իսկ ինչպե՞ս էիք անում այդ բոլորը:

— Դե, հիմա չեմ կարող ցույց տալ, որովհետև շատ եմ գեր, իսկ Արծվառյուծը նման բան չի սովորել:

— Ժամանակ չունեի, — ասաց Արծվառյուծը, — ես դասական լեզուների ուսուցչի մոտ էի գնում, նա մի ծեր խեցգետին էր:

— Ես երբեք նրա մոտ չեմ սովորել, — հառաչեց Կրիան, — ասում են, նա ուսուցանում էր հիններեն ու սատիններեն:

— Ճիշտ է, — իր հերթին հառաչելով ասաց Արծվառյուծը և երկու արարածներն իրենց դեմքերը թաքցրին մաշկաթաթերի մեջ:

— Իսկ մի օրվա մեջ քա՞նի դաս էիք անում, — հարցրեց Ալիսը, շտապելով փոխել խոսակցության նյութը:

— Առաջին օրը՝ տասը, — պատասխանեց Կեղծ Կրիան, — իսկ հաջորդ օրը՝ ինը, և այսպես շարունակ:

— Ի՞նչ հետաքրքիր դասացուցակ է:

— Այդ պատճառով էլ դրանք դասեր են կոչվում, — նկատեց Արծվառյուծը, — որովհետև դասավորվելով պակասում են:

Սա Ալիսի համար մի նոր հայտնություն էր և նախքան նոր հարց տալը մի պահ մտածեց այդ մասին:

- Ուրեմն տասնմեկերորդ օրը պետք է տոն լիներ:
- Անկասկած, — պատասխանեց Կեղծ Կրիան:
- Իսկ ի՞նչ էիք անում տասներկուերորդ օրը, — աշխույժ հարցրեց Ալիսը:
- Բավական է դասերի մասին խոսենք, — վճռական ձայնով ընդհատեց Արծվառյուծը, — այժմ նրան խաղերի մասին պատմիր:

## **ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ ԽԵՑԳԵՏՆԻ ԿԱԴՐԻԼԸ [27]**

Կեղծ Կրիան հառաչեց և մաշկաթաթով տրորեց աչքերը: Ապա Նայեց Ալիսին՝ փորձելով խոսել, բայց կարճատև հեկեկանքները խեղդում էին նրան:

— Կարծես կոկորդում ոսկոր է դեմ առել, — ասաց Արծվառյուծը և սկսեց ցնցել նրան ու հարվածել մեջքին:

Վերջապես Կեղծ Կրիայի լեզուն բացվեց ու լացակումած շարունակեց.

— Երևի դու երկար չես ապրել ծովի հատակում...

— Երբեք չեմ ապրել, — ասաց Ալիսը:

— Եվ գուցե կենդանի խեցգետին չես տեսել:

(Ալիսն ուզում էր ասել. «Մի անգամ կերել եմ», — բայց կարողացավ զսպել իրեն ու ասաց, — Ոչ, երբեք):

— Ուրեմն դու ոչ մի գաղափար չունես, թե ինչ հիանալի բան է խեցգետնի Կադրիլը:

— Իհարկե ոչ: Այդ ի՞նչ պար է, — հարցրեց Ալիսը:

— Դե, — ասաց Արծվառյուծը, — սկզբում ծովափին շարք են կազմում...

— Երկու շարք, — ճշաց Կեղծ Կրիան, — փոկերը, կրիաները, սաղմոնները և այլ ձկներ, իսկ հետո, երբ ամբողջ ճանապարհը մաքրում են մեղուզաներից...

— Որն, իհարկե, որոշ ժամանակ է խլում, — ընդհատեց Արծվառյուծը:

— Երկու քայլ առաջ են գնում...

— Յուրաքանչյուրն իր, խաղընկեր խեցգետնի հետ, — գոռաց Արծվառյուծը:

— Ճիշտ է, — հաստատեց Կեղծ Կրիան, — երկու քայլ առաջ են գնում, մոտենում խաղընկերներին...

— Փոխում նրանց և նույն կանոնով հետ գնում, — բացատրեց Արծվառյուծը:

— Իսկ հետո, — շարունակեց Կրիան, — շարտում են...

— Խեցգետինները, — ցատկոտելով օդում, կոնչաց Արծվառյուծը:

— Ծովի մեջ, ինչքան ուժ ունեն...

— Եվ լողում են Նրանց հետևից..., — մոնչաց Արծվառյուծը:

— Գլուխկոնձի տալիս ջրում, — կատաղությամբ այս ու այն կողմ նետվելով բղավեց Կեղծ Կրիան:

— Ապա նորից փոխում խեցգետինները... — ճչաց Արծվառյուծը:

— Ու վերադառնում են ափ, ահա և քեզ պարի առաջին մասը: — Կեղծ Կրիան հանկարծակի ցածրացրեց ձայնը, և երկու արարածները, որոնք խոսելու ընթացքում խելահեղ ցատկոտում էին, կրկին նստեցին ու տխուր-տրտում նայեցին Ալիսին: Երևի գեղեցիկ պար է, — երկչոտ եզրակացրեց Ալիսը:

— Կուզենայիր տեսնել, — հարցրեց Կեղծ Կրիան:

— Իհարկե, շատ կուզենայի, — ասաց Ալիսը:

— Եկ, փորձենք առաջին մասը, — Կեղծ Կրիան դիմեց Արծվառյուծին, — գիտես ինչ, մենք առանց խեցգետինների էլ կարող ենք պարել: Իսկ ո՞վ է երգելու:

— Դու, ես խոսքերը մոռացել եմ, — վճռեց Արծվառյուծը: Եվ նրանք հանդիսավորությամբ սկսեցին պարել Ալիսի շուրջը, երաժշտության տակ շարժելով առջևի թաթերը, և երբեմն էլ շատ մոտից անցնելիս կոխոտում էին նրա ոտնաթաթերը, իսկ Կեղծ Կրիան մեղմ ու տխուր ձայնով երգում էր.



— Մի քիչ արագ չէիր քայլի, — մեռլանն ասաց խխունջին, —  
Ծովախոզը մեզ է հասնում ու նստում է իմ պոչին:  
Մի տես՝ կրիա ու խեցգետին ոնց են մրցում իրար հետ,  
Նրանք արդեն ծովափ հասան, իսկ դու իզուր ես մնում հետ,

Ե՛կ միացիր դու մեր պարին, եկ սլացիր դու մեզ հետ,  
Ե՛կ միացիր, եկ միացիր, եկ սլացիր դու մեզ հետ:  
Դու չես կարող պատկերացնել, թե ինչ հաճույք կստանանք,  
Երբ բոլորիս բարձրացնեն, ծովը նետեն անհատակ...

Բայց խխունջն ասաց — հեռու է, — հետո նայեց նա խեթ-խեթ:  
— Շնորհակալ եմ քեզանից, բայց չեմ պարի ես ձեզ հետ:  
Ես չեմ կարող և չեմ ուզում, ես չեմ կարող գալ ձեզ հետ:  
— հետո ինչ, — ասաց մեռլանը, — որ հեռու ենք ասից մենք.

Ծովից այն կողմ ուրիշ ասի կա, որտեղ հանգիստ մենք կապրենք:  
Անգլիայից որքան հեռու՝ Ֆրանսիային այնքան մոտ:  
Մի՛ վախեցիր, անգին խխունջ, թող մտքերը քո թախծոտ,  
Ե՛կ միացիր դու մեր պարին, եկ սլացիր դու մեզ հետ,  
Ե՛կ միացիր, եկ միացիր, եկ սլացիր, դու մեզ հետ<sup>[28]</sup>:

— Շնորհակալություն, շատ հետաքրքիր էր, — գոչեց Ալիսն ուրախացած,  
երբ պարը վերջացավ, — ինձ շատ դուր եկավ այդ զվարճալի երգը  
մեռլանի մասին:

— Ինչ վերաբերում է մեռլանին, — ասաց Կեղծ Կրիան, նրանք... դու  
իհարկե տեսել ես նրանց:

— Այո, հաճախ տեսել եմ... ճա... — հազիվ զսպեց իրեն Ալիսը:

Նա ուզում էր ասել՝ «ճաշի ժամանակ մի անգամ կերել եմ», բայց շտապ  
կանգ առավ:

— Ես չգիտեմ, թե որտեղ է գտնվում այդ «ճան», — ասաց Կեղծ Կրիան, —  
բայց եթե դու հաճախ ես տեսել նրանց, ուրեմն գիտես, թե ինչպիսի տեսք  
ունեն:

— Իհարկէ, — մտածկոտ պատասխանեց Ալիսը, — պոչը գտնվում է բերանի մեջ և ամբողջովին ծածկված է հացի Փշրանքով:

— Հենց դա է քո սխալը, — ասաց Կեղծ Կրիան, — հացի փշրանքը կլվացվի ջրում, բայց պոչը իրոք որ բերանում է և դրա... — այստեղ Կեղծ Կրիան հորանջեց ու փակեց աչքերը, — ասա նրան պատճառը և պատմիր մնացածը, — խնդրեց նա Արծվառնուծին:

— Պատճառն այն է, — սկսեց Արծվառնուծը, — որ նրանք խեցգետինների հետ էին պարում: Եվ երբ ծովից դուրս շարտվեցին, ստիպված եղան շատ երկար ճանապարհ անցնել, դրա համար էլ պոչը դրեցին բերանի մեջ ու այլևս չկարողացան հանել: Ահա բոլորը:

— Շնորհակալություն, շատ հետաքրքիր էր, — ասաց Ալիսը, — ես առաջ այդքան բան չգիտեի մեռլանի մասին:

— Եթե ուզում ես, ավելին կպատմեմ, — շարունակեց Արծվառնուծը, — գիտե՞ս ինչո՞ւ է նա մեռլան կոչվում:

— Երբեք այդ մասին չեմ մտածել, ինչո՞ւ, — հարցրեց Ալիսը:

— Դա վերաբերում է քո ձեռքերին ու մատներին, — հանդիսավոր ձայնով հայտարարեց Արծվառնուծը:

Ալիսը շվարեց:

— Իմ ձեռքերին ու մատներին, — զարմացած կրկնեց նա:

— Այդ ինչից են քո մատներն այդպես... Ուզում եմ ասել՝ այդ ինչից են նրանք երբեմն կապտում, — հարցրեց Արծվառնուծը:

Ալիսը նայեց մատներին, մտածեց մի պահ նախքան պատասխան տալը ու ասա.

— Ինձ թվում է՝ մեռլանից:

— Իսկ եթե ձեռքերդ մտցնես ջրի մեջ, — Արծվառնուծը խորաթափանց հայացքով նայեց Ալիսին, — մեռլանով կմաքրեն մեռլանը, հիմա հասկացար:

— Իսկ ովքե՞ր, — հետաքրքրվեց Ալիսը:

— Իհարկէ տափակաձկներն ու փափկասունները, — որպեսզի ձեռքերդ տափակ ու փափուկ մնան, — սպառված համբերությամբ պատասխանեց

Արծվառյուծը, — ամեն մի փոքրիկ ծովախեցգետին գիտե այդ հասարակ քանը:

— Եթե ես մեռլան լինեի, — Ալիսը դեռ երգի տպավորության տակ էր, — ծովախոզին կասեի, «խնդրում եմ, հետ քաշվեք, մենք ձեզ չենք ուզում»:

— Նրանք ստիպված էին ծովախոզին իրենց մեջ պահել, — ասաց Կեղծ Կրիան, — Խելքը գլխին ոչ մի ձուկ առանց նրա տեղ չի գնում:

— Իսկապես, — զարմացավ Ալիսը:

— Դե, իհարկե, եթե մի ձուկ գար ինձ մոտ ու ասեր, որ ճանապարհորդության է գնում, ես կհարցնեի, «խոզուկ ունես»:

— Դուք ուզում եք ասել, «խոզուկի հետ»:

— Ինչ որ ասում են, լսի՛ր, — վիրավորվեց Կեղծ Կրիան, իսկ Արծվառյուծը շարունակեց.

— Դե, պատմիր քո արկածներից մի քանիսը:

— Ուզում եք, ձեզ պատմեմ իմ այսօրվա արկածները, — երկչոտ սկսեց Ալիսը, — կարիք չկա երեկվա դեպքերի մասին խոսել, որովհետև ես երեկ ուրիշ էի:

— Բացատրիր միտքդ, — ասաց Կեղծ Կրիան:

— Ոչ, ոչ, սկզբից արկածները, — անհամբերությամբ բղավեց Արծվառյուծը, — բացատրությունները սարսափելի երկար ժամանակ են խլում:

Ալիսն սկսեց պատմել նրանց բոլորը՝ սկսած այն պահից, երբ ինքն առաջին անգամ տեսավ Սպիտակ ճագարին: Սկզբում անհամարձակ էր խոսում, որովհետև երկու արարածները, աչքներն ու բերանները լայն բացած, շատ էին մոտեցել իրեն, բայց շուտով հունի մեջ ընկավ և վախն էլ անցավ: Ունկնդիրները բացարձակ լռություն էին պահպանում: Նա արդեն պատմում էր, թե ինչպես Թրթուրի մոտ արտասանեց «Ծերացել ես, Վիլյամ հայրիկ» ոտանավորը, և բառերը ճիշտ չէին ստացվում, երբ Կեղծ Կրիան խոր շունչ քաշեց ու ասաց.

— Շատ հետաքրքիր է:

— Չափազանց հետաքրքիր է, — ավելացրեց Արծվառյուծը:

— Բառերը ճիշտ չէին ստացվում, — մտածկոտ կրկնեց Կեղծ Կրիան, — ապա փորձիր մի որևէ բան անգիր ասել: Ասա նրան, թող մի ոտանավոր արտասանի, — ու նայեց Արծվառյուծին, կարծես համոզված, որ վերջինս իշխանություն ունի Ալիսի վրա:

— Արտասանիր «Խոսեց հանկարծ ալարկոտը», — առաջարկեց Արծվառյուծը:

«Մի տես, սրանք ինչպես են հրամաններ արձակում և ստիպում դասերս կրկնել, կարծես դպրոցում լինեմ», — դժգոհ մտածեց Ալիսը, բայց և այնպես հնազանդ կանգնեց ու սկսեց, բայց նրա մտքերը դեռ լցված էին խեցգետնի Կադրիլով և իր արտասանածից ոչինչ չէր հասկացվում. բառերն էլ, անշուշտ, խիստ տարօրինակ էին հնչում:

Խոսեց հանկարծ խեցգետնինը ու ձայն տվեց նա այսպես.

«Մի քիչ շաքար ցանեք վրաս, խորովվեցի թե չէ ես»:

Ինչպես սազը իր կոպերով, այդպես էլ սա իր քթով

Գորտին շտկում, ձիգ կոճկվում ու պառկում է անվրդով:

Արտույտի պես թովոում է, երբ ավազներն են տաքուկ,

Քիթը ցցած շրջում է նա, ինչպես գոռոզ շնաձուկ:

Իսկ երբ ջրերն են վարարում և շնաձուկն է գալիս,

Պոչը քաշած ու սրտաճաք՝ իսկույն փախուստ է տալիս<sup>[29]</sup>:

— Սա բոլորովին նման չէ այն ոտանավորին, որ ասում էի երեխա ժամանակս, — սրտնեղեց Արծվառյուծը:

— Ես երբեք այդպիսի բան չեմ լսել, չլսված հիմարություն է, — ավելացրեց Կեղծ Կրիան:

Ալիսը ձայն չհանեց, նստեց գետնին՝ դեմքը ավերի մեջ սառած, ու սկսեց մտածել, արդյոք որևէ բան նորից իր բնական հունով կընթանա, թե ոչ:

— Բացատրիր ասածդ, — պնդեց Կեղծ Կրիան:

— Նա չի կարող, — շտապ վրա տվեց Արծվառյուծը և դիմեց աղջկան, — հաջորդ քառյակն ասա:

— Բայց ինչպես... Բայց նա ինչպես էր կարողանում քթով գոտին շտկել, ձիգ կոճկվել, — համառեց Կեղծ Կրիան:

— Երևի պարել էր սովորում, — Ալիսն այնպես էր մոլորվել, որ չգիտեր ինչպես շեղել խոսակցության նյութը:

— Դե շուտ, մյուս քառյակն ասա, — անհամբերությամբ կրկնեց Արծվառյուծը, — այն սկսվում է՝ «Անցնում էի ես պարտեզով...»:

Ալիսը չհամարձակվեց հակաճառել, չնայած համոզված էր, որ ամեն ինչ սխալ է ստացվելու ու դողացող ձայնով շարունակեց.

Անցնում էի ես պարտեզով, մեկ էլ տեսնեմ ծառի տակ  
Բուն ու Հովազն ընկերացած կիսում էին կարկանդակ:  
Հովազն իսկույն իրեն վերցրեց կարկանդակն ու տակինը,  
Իսկ պնակը Բվին թողեց որպես նրա բաժինը:  
Անուշ արեց կարկանդակը ու թույլ տվեց, որ խեղճ բուն  
Մի լավ լպստի գդալը, հետո իր հետ տանի տուն:  
Մինչդեռ իր գրպանը դրեց պատառաքաղ ու դանակ  
Ու խնջույքը եզրափակեց՝ զիլ ոռնալով ծառի տակ:

— Ի՞նչ օգուտ այդ ցնդաբանությունից, եթե չես կարողանում բացատրել,  
— ընդհատեց Կեղծ Կրիան, — կյանքումս նման խառնաշփոթ բան չեմ լսել:

— Ճիշտ է, լավ կանես այլևս չշարունակես, — ասաց Արծվառյուծը:

Մրա վրա Ալիսն անչափ ուրախացավ:

— Ուզում ես փորձենք Խեցգետնի Կադրիլի մի ուրիշ ձև, — շարունակեց Արծվառյուծը, — թե ուզում ես, որ Կեղծ Կրիան մի ուրիշ երգ երգի:

— Թող երգի, երգի, եթե իհարկե դեմ չէ, — Ալիսը թախանձեց այնպես ջերմագին, որ Արծվառյուծը խիստ վիրավորվեց:

— Հըմ, ճաշակն ընկեր չունի: Լսիր, բարեկամ, երգիր «Կրիայի ապուրը»:

Կեղծ Կրիան խոր հառաչեց ու սկսեց հեկեկանքից խզվող ձայնով մոլտալ:

Ապուր գեղեցիկ՝ ով չի ցանկանում,  
Սպասում է մեզ ապուրամանում,  
Տաք, համով ապուր, տաք, համով վոռիկ,  
Ապուր իրիկվա, ապուր գեղեցիկ,  
Ապուր իրիկվա,  
Տաք, համով վոռիկ:  
Ապուր ուր գեղեցիիիիի՛կ,  
Տաք, համով վոռիկ,  
Ապուր գեղեցիկ:

Ապուր գեղեցիկ՝ տաք-տաք ամանում,  
Մուկ ու թռչնի միս ով է ցանկանում,  
Ամանում կա տաք վոռիկ, այնքան գեղեցիկ,  
Շատ էժան վոռիկ, այնքան գեղեցիկ:  
Ապուր իրիկվա,  
Ապուրուր գեղեցիիիկ,  
Տաք, համով վոռիկ՝  
ԱՊՈՒՐ ԳԵՂԵՑԻԿ:

Ապուր իրիկվա,  
Տաք, համով վոռիկ՝  
Ապուր գեղեցիկ<sup>[30]</sup>:

— Նորից կրկներգը, — գոռաց Արծվառյուծը:

Կեղծ Կրիան հենց նոր էր սկսել, երբ հանկարծ հեռվից լսվեց.

— Ատյա՛նն է գալիս:

— Գնացի՞նք, — բացականչեց Արծվառյուծը և Ալիսի ձեռքից բռնելով առաջ սլացավ, առանց սպասելու երգի ավարտին:

— Ի՞նչ ատյան, — հևալով հարցրեց Ալիսը:

Արծվառյուծը միայն ասաց.

— Գնացի՞նք, — և ավելի արագ վազեց:

Քամին մեղմորեն նրանց ականջին էր հասցնում երգի մեղամաղձոտ հնչյունները, որոնք գնալով կամաց-կամաց մարում էին.

Ապուր իրիկվա,  
Տաք, համով վռիկ՝  
Ապուր գեղեցիկ:

## **ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ Ո՞Վ Է ԳՈՂԱՑԵԼ ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐԸ**

Փոսիկի Թագավորն ու Թագուհին բազմել էին գահին: Հոժ բազմություն էր հավաքվել, զանազան փոքրիկ թռչուններ, գազաններ, խաղաթղթերի ամբողջ կապուկը, շղթայակապ Վալետը՝ հսկող զինվորներով շրջապատված, կանգնել էին նրանց դիմաց: Թագավորի կողքին էր Սպիտակ ճագարը: Նրա մի ձեռքին շեփորն էր, մյուսին՝ սպիտակ մագաղաթը: Դատարանի մեջտեղում սեղան էր դրված՝ վրան մի լիքը ափսե կարկանդակ, որոնց ախորժալի տեսքից Ալիսը քաղց զգաց:

«Երանի դատը շուտ վերջանար, և բոլորիս հյուրասիրեին», — մտածեց աղջիկը: Սակայն դա այնքան էլ հավանական չէր և ժամանակ անցկացնելու համար սկսեց զննել շրջապատը:

Նա երբեք դատարանում չէր եղել, միայն գրքերից գիտեր և շատ ուրախացավ, երբ կարողացավ զանազանել բոլոր պաշտոնյաներին:

— Սա դատավորն է, որովհետև կեղծամ ունի:

Ի միջի այլոց, դատավորը Թագավորն էր: Նա թագը դրել էր կեղծամի վրա (նայեք ճակատի նկարին, եթե ուզում եք տեսնել, թե նա ինչպես է հագել այն) և անհանգիստ էր զգում իրեն, և դա բոլորովին սազական չէր նրան:

— Սա ատենակալների աթոռն է, — մտածեց Ալիսը, — իսկ այդ տասներկու արարածներն էլ (նա ստիպված էր ատենակալներին «արարածներ» կոչել, որովհետև, ինչպես արդեն ասացինք, նրանցից մի քանիսը կենդանիներ էին, իսկ մի քանիսը՝ թռչուններ) ատենակալներն են: Նա վերջին բառը երկու-երեք անգամ կրկնեց հպարտ-հպարտ, քանի որ իր տարիքից քիչ աղջիկներ գիտեին այդ, նա իրավացի էր: Բայց և այնպես ավելի լավ կլինեք, եթե ասեք «երդվյալ ատենակալներ»:

Բոլոր տասներկու աստենակալներն էլ եռանդով գրում էին՝ քարե տախտակների վրա:

— Այդ ի՞նչ են գրում., — շշնջաց Ալիսը Արծվառյուծի ականջին, — չէ որ դատը դեռ չի սկսվել:

— Իրենց անունները, — նույնպես շշուկով պատասխանեց Արծվառյուծը, — երևի վախենում են մինչև դատի վերջը մոռանան:

— Հիմարներ, — արհամարհանքով նետեց Ալիսը, բայց իսկույն լռեց, որովհետև այդ նույն վայրկյանին Սպիտակ ճագարը գոռաց.

— Լռությո՛ւն:

Թագավորը դրեց ականցը և անհանգստացած նայեց շուրջը՝ տեսնելու խոսողին:

Ալիսը կարողացավ պարզ տեսնել, ասես աստենակալների ուսերի վրայով նայելիս լինեք, որ բոլորն էլ իրենց քարե տախտակների վրա գրեցին «հիմարներ»: Իսկ նրանցից մեկը, որը չէր կարողանում հեզել այդ բառը, ստիպված հարցրեց կողքինին, թե ինչպես է գրվում այն:

— Մինչև դատի վերջը նրանց քարե տախտակների վրա ազատ տեղ չի մնա, — եզրակացրեց Ալիսը:

Ատենակալներից մեկի մատիտը գրելիս խզխզում էր. դա, իհարկե, այն աստիճան նյարդայնացրեց Ալիսին, որ նա ոտքի ելավ, շրջանցեց դահլիճը ու հասնելով աստենակալին, թոցրեց մատիտը: Այդ գործողությունն այնքան արագ կատարվեց, որ խեղճ փոքրիկը (դա Մողես-Բիլն էր) ոչինչ չկարողացավ հասկանալ: Մատիտն ամենուր փնտրելուց հետո ստիպված եղավ մատով գրել մինչև օրվա վերջը: Նրա աշխատանքն իզուր էր, որովհետև քարե տախտակի վրա հետք չէր մնում:

— Մունետիկ, կարդա մեղադրականը, — ասաց Թագավորը:

Որից հետո Սպիտակ ճագարը երեք անգամ հնչեցրեց շեփորը, հետո բացեց մագաղաթն ու կարդաց հետևյալը.

Փոսիկի Աղջիկը  
Եկավ ու կանգնեց,  
Մի քանի համով



Կարկանդակ թխեց:

Փոսիկի Վալետը  
Եկավ ու կանգնեց,  
Գողացավ դրանք  
Արանքը ճղեց<sup>[31]</sup>:

— Ի՞նչ վճիռ եք կայացնում, — ատենակալներին դիմեց Թագավորը:

— Հիմա չէ, հիմա չէ, — հապշտապ ընդհատեց ճագարը, — մինչ այդ շատ անելիքներ կան:

— Կանչիր առաջին վկային, — կարգադրեց Թագավորը: Սպիտակ ճագարը երեք անգամ փչեց փողն ու ձայնեց.

— Առաջին վկա:

Առաջին վկան Գլխարկագործն էր: Նրա մի ձեռքին թեյի բաժակն էր, իսկ մյուսին՝ կարագահացը:

— Կներեք, ձերդ գերազանցություն, — սկսեց նա, — որ սրանք հետս եմ բերել: Երբ կանչեցին, ես թեյս դեռ չէի վերջացրել:

— Դու պետք է վերջացնեիր, — ասաց Թագավորը, — երբ ես սկսել:

Գլխարկագործը Նայեց Մարտյան Նապաստակին, որը Քնամկանը թևանցուկ արած եկել էր նրա հետևից:

— Կարծեմ, մարտի տասնչորսին էր, — ասաց Գլխարկագործը:

— Տասնհինգին էր, — ուղղեց Մարտյան Նապաստակը:

— Տասնվեցին էր, — ավելացրեց Քնամուկը:

— Գրեցեք, — հրամայեց Թագավորը:

Ատենակալներն անմիջապես գրեցին այդ թվերը, գումարեցին և ստացածը վերածեցին շիլինգների ու վենսերի:

— Գլխարկդ հանիր, — ասաց Թագավորը Գլխարկագործին:

— Գա իմ գլխարկը չէ:

— Գողացված է, — բացականչեց Թագավորը նայելով ատենակալներին, որոնք անմիջապես նշեցին այդ Փաստը:

— Ծախելու համար եմ պահում, — որպես բացատրություն ավելացրեց Գլխարկագործը, — ես սեփական գլխարկ չունեմ: Ես Գլխարկագործ եմ: Այստեղ Թագուհին դրեց ակնոցը և մի այնպիսի հայացք նետեց Գլխարկագործի վրա, որ վերջինս սփրթնեց ու սկսեց անհանգիստ շարժումներ անել:

— Վկայություն տուր, — ասաց Թագավորը, — և հանգիստ կանգնիր, թե չէ տեղնուտեղը գլխատել կտամ:

Բայց այդ խոսքերն անհրաժեշտ ազդեցություն չգործեցին Գլխարկագործի վրա: Նա մեկ մի ոտքին էր հենվում, մեկ՝ մյուս ու սարսափահար նայում Թագուհուն և այն աստիճան էր հուզվել, որ կարագահացի փոխարեն կծեց բաժակը:

Հ-ենց այդ պահին Ալիսին համակեց մի տարօրինակ զգացում, և դա այնպես շփոթեցրեց նրան, որ երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր հետ. վերջապես գլխի ընկավ՝ ինքը նորից սկսել էր աճել: Սկզբում որոշեց հեռանալ դահլիճից, բայց փոքր-ինչ մտածելուց հետո վճռեց մնալ այնքան, քանի դեռ տեղը կբավականացներ իր համար:

— Այդպես մի սեղմիր ինձ, — ասաց Քնամուկը, որ նստած էր Ալիսի կողքին, — հազիվ եմ շնչում:

— Ի՞նչ կարող եմ անել, — մեղմ ասաց Ալիսը, — ես մեծանում եմ:

— Դու իրավունք չունես այստեղ մեծանալու, — բարկացավ Քնամուկը:

— Հիմարություններ դուրս մի տվեք, — համարձակվեց նկատել Ալիսը: — Իսկ գիտեք, որ դուք էլ եք մեծանում:

— Այո, բայց ես քիչ տարածություն եմ զբաղեցնում և քիչ եմ մեծանում, ոչ թե քեզ նման ահռելի չափերով, — Քնամուկը խոժոռված ելավ տեղից ու անցավ դահլիճի մյուս կողմը:

Թագուհին, որ մինչ այդ անթարթ նայում էր Գլխարկագործին, տեսնելով Քնամկան տեղափոխությունը, դիմեց դատարանի կատարածուններից մեկին.

— Վերջին համերգի երգիչների ցուցակը:

Այս խոսքերի վրա թշվառ Գլխարկագործն այնպես դողացրեց, որ կոշիկները դուրս թռան ոտքերից:

— Վկայություն տուր, — զայրացած կրկնեց Թագավորը, — թե չէ գլխատել կտամ, ինձ համար ոչ մի նշանակություն չունի քո բարկությունը:

— Ես մի թույլ մարդ եմ, ձերդ գերազանցություն, — սարսափահար արդարացավ Գլխարկագործը, — նոր էի սկսել թեյել, մի շաբաթ առաջ, երբ կարագահացն սկսեց բարակել, իսկ թեյը թափվեց...

— Թեյն ի՞նչ եղավ:

— Ամեն ինչ սկսվեց թեյից:

— Թեյից միայն նախաճաշն է սկսվում, — կտրուկ ասաց Թագավորը: — Դու ինձ հիմարի տեղ ես դնում, ինչ է: Շարունակիր:

— Ես մի թույլ մարդ եմ, — կրկնեց Գլխարկագործը, — այդ դեպքից հետո ամեն ինչ թափվում է:

— Ես չեմ ասել, — անմիջապես հակառակվեց Մարտյան Նապաստակը:

— Ասել ես, — կրկնեց Գլխարկագործը:

— Ես ժխտում եմ, — պատասխանեց Մարտյան Նապաստակը:

— Նա ժխտում է, — կրկնեց Թագավորը, — անցեք առաջ:

— Դե, ուրեմն, Քնամուկն ասաց... — շարունակեց Գլխարկագործը և անհանգստացած նայեց շուրջը՝ տեսնելու, թե արդյոք Քնամուկն էլ է ընդդիմախոսելու, բայց Քնամուկն

անխռով քնած էր:

— Հետո, — հոգոց հանեց Գլխարկագործը, — ես մի հատ էլ կարագահաց վերցրի:

— Իսկ ի՞նչ ասաց Քնամուկը, — հարցրեց ատենակալներից մեկը:

— Այդ մեկը չեմ հիշում, — պատասխանեց Գլխարկագործը:

— Դու պետք է հիշես, — պնդեց Թագավորը, — թե չէ գլխատել կտամ:

Թշվառ Գլխարկագործը ձեռքից բաց թողեց բաժակն ու կարագահացը և ծնկի եկավ:

— Ես մի թույլ մարդ եմ, ձերդ գերագանցություն:

— Դու շատ թույլ հոնտոր ես, — ասաց Թագավորը: Այստեղ ծովախոզերից մեկն սկսեց ծափահարել, բայց նրան անմիջապես կանխեցին: (Քանի որ դա շատ դժվար բան է, ես ձեզ կբացատրեմ, թե այդ գործն ինչպես գլուխ բերեցին: Դատարանի կատարածուները ծայրին պարաններ ունեցող մի լայն պարկ բերեցին, ծովախոզին գլխիվայր մտցրին մեջն ու նստեցին վրան):

— Լավ էր, տեսա, — ուրախացավ Ալիսը, — շատ հաճախ եմ լրագրերում կարդացել. «Դատի վերջում ծափահարության մի քանի փորձեր եղան, բայց դատարանի կատարածուներն անմիջապես կանխեցին»: Մինչև այժմ չէի հասկացել դրա նշանակությունը:

— Եթե դա է քո ամբողջ իմացածը, կարող ես ոտքի ելնել, — կարգադրեց Թագավորը:

— Ես չեմ կարող ոտքի ելնել, որովհետև արդեն կանգնած եմ:

— Ուրեմն, կարող ես նստել:

Այստեղ մի ուրիշ ծովախոզ սկսեց ծափահարել, բայց նրան էլ անմիջապես լռեցրին:

«Ծովախոզերի ձայնը կտրեցին, երևի դատն ավելի արագ կրնթանա», — մտածեց Ալիսը:

— Ես գնամ թեյս վերջացնեմ, — Գլխարկագործն անհանգստացած դիմեց Թագուհուն, որն աչքի էր անցկացնում երգիչների ցուցակը:

— Հեռացիր, — կարգադրեց Թագավորը և Գլխարկագործն այնքան արագ դուրս նետվեց, որ նույնիսկ չհասցրեց հագնել կոշիկները:

— Հենց հիմա կտրեցեք նրա գլուխը, այնտեղ դրսում, — հրամայեց Թագուհին:

Բայց մինչև կատարածուն կհասներ դռանը, Գլխարկագործն արդեն անհետացել էր:

— Կանչիր մյուս վկային, — ասաց Թագավորը:

Հաջորդ վկան Դքսուհու խոհարարուհին էր: Նա պղպեղի տուփը բռնել էր ձեռքում: Ալիսն անմիջապես գլխի ընկավ, թե ով է նա, որովհետև դռան մոտ կանգնածներն անմիջապես սկսեցին փռշտալ:

— Տուր քո վկայությունը, — ասաց Թագավորը:

— Չեմ տա, — պատասխանեց խոհարարուհին:

Թագավորն անհանգստացած նայեց Սպիտակ ճագարին, որը շնջաց.

— Ձերդ գերագանցությունը պետք է խաչաձև հարցաքննության ենթարկի այս վկային:

— Դե, եթե ես պետք է խաչաձևեմ, ուրեմն կխաչաձևեմ, — հառաչեց Թագավորը և ձեռքերը խաչաձևելով, աչքերն այնպես ոլորեց խոհարարուհու վրա, որ կոպերը համարյա փակվեցին:

— Ինչի՞ց են պատրաստում կարկանդակները, — խուլ հարցաքննեց Թագավորը:

— Հիմնականում պղպեղից, — պատասխանեց խոհարարուհին:

— Օշարակից, — լսվեց մի քնկոտ ձայն Ալիսի հետևում:

— Բռնեք Քնամկան օձիքից, — ճչաց Թագուհին, — գլխատեք Քնամկանը: Դատարանից դուրս վոնդեք նրան, ճզմեք, կամթեք նրան, կտրեք նրա այտմորուսները:

Մի քանի բոպե դահլիճում իրարանցում էր, բայց երբ Քնամկանը դուրս հանեցին, և բոլորը կրկին գրավեցին տեղերը, խոհարարուհին չքվել էր:

— Ոչինչ, կանչիր մյուս վկային, — թեթևացած շունչ քաշեց Թագավորը, հետո դիմեց Թագուհուն.

— Սիրելիս, դու պետք է խաչաձև հարցաքննության ենթարկես հաջորդ վկային: Ես չեմ կարող անել, որովհետև գլուխս ցավում է:

Ալիսը հետաքրքրությամբ նայում էր Սպիտակ ճագարին, որը բացում էր ոլորած ցուցակը և անհամբեր սպասում, թե ով է լինելու հաջորդ վկան:

«Նրանք դեռ ոչ մի վկայություն չեն ստացել», — մտածում էր նա:

Պատկերացրեք նրա զարմանքը, երբ Սպիտակ ճագարը զիլ ձայնով հայտարարեց.

— Ալիս:

## **ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԱԼԻՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

— Այստեղ եմ, — Ալիսը հուզմունքից լրիվ մոռացավ, որ ինքը բավական մեծացել է վերջին մի քանի րոպեի ընթացքում և այնպիսի արագությամբ ցատկեց, որ փեշի ծայրը դիպավ ատենակալների աթոռին՝ շարտելով նրանց դահլիճում նստածների գլխներին, և նրանք մնացին այդպես չոված: Դա Ալիսին հիշեցրեց ոսկե ձկների ակվարիումը, որ պատահմամբ վայր էր գցել մի շաբաթ առաջ:

— Ա՛խ, ներեցեք ինձ, — խիստ շփոթված գոչեց նա և սկսեց հնարավորին չափ արագ բարձրացնել ատենակալներին, որովհետև ոսկե ձկների դեպքը դեռ թարմ էր, և գիտեր, որ պետք է անմիջապես հավաքել նրանց ու նստեցնել աթոռներին, թե չէ իսկույն կմեռնեն:

— Դատը չի շարունակվի, մինչև բոլոր ատենակալներն իրենց տեղերը չգրավեն, բոլո՛րը, — շեշտը դնելով վերջին բառի վրա, մռայլ ասաց Թագավորը և խստությամբ նայեց աղջկան:

Հանկարծ Ալիսը նկատեց, որ շտապելիս Մոդեստին մեջքի վրա է դրել և խեղճ փոքրիկը, չկարողանալով շրջվել, անօգնական շարժում է պոչը: Եվ նորից բարձրացնելով Մոդեստին, ուղղեց ու դրեց տեղը:

«Իմիջիայլոց, նրա դիրքը ոչ մի նշանակություն չունի, որովհետև դատավարությունը դրանից չի տուժի», — մտածեց Ալիսը:

Հենց որ ատենակալները փոքր-ինչ ուշքի եկան, քարե տախտակներն ու մատիտները գտնվեցին և հանձնվեցին տերերին, նրանք գործի անցան և ջանասիրաբար գրի առան այդ դեպքը, բացի Մոդեստից, որը շշմած լայն բացել էր բերանը և հայացքը հառել առաստաղին:

— Ի՞նչ գիտես այս գործի մասին, — հարցրեց Թագավորն Ալիսին:

— Ոչինչ:

— Առանձնապես ոչինչ, — հետաքրքրվեց Թագավորը:

— Առանձնապես ոչինչ, — կրկնեց Ալիսը:

— Դա շատ կարևոր է, — ատենակալներին դիմեց Թագավորը:

Ատենակալները դեռ նոր էին սկսել գրել, երբ հանկարծ Մպիտակ ճագարն ընդհատեց.

— Դուք երևի ուզում էիք ասել՝ կարևոր չէ, ձերդ գերազանցություն: — Նա խոսեց հարզանքով՝ յուրաքանչյուր խոսքի վրա խոժոռելով ու ծամածռություններ անելով Թագավորին:

— Դե, իհարկե, ուզում էի ասել՝ կարևոր չէ, — շտապ ուղղեց Թագավորը և սկսեց կիսաձայն կրկնել, — կարևոր է, կարևոր չէ, կարևոր չէ, կարևոր է, — կարծես փորձում էր ստուգել, թե որ բառն է ավելի լավ հնչում:

Ատենակալներից ոմանք գրեցին՝ կարևոր է, ոմանք էլ՝ կարևոր չէ: Ալիսը պարզ տեսնում էր նրանց գրածը, որովհետև շատ մոտ էր նստած. «Ի՞նչ նշանակություն ունի, թե որն են գրում», — մտածեց նա:

Մինչ այդ Թագավորը, որն արագ-արագ գրում էր ծոցատետրում, գոչեց.

— Լռություն՝ն, — և կարդաց, — հոդված 42. Ովքեր մեկ մղոնից ավելի հասակ ունեն՝ պետք է հեռանան դատարանից:

Բոլորը նայեցին Ալիսին:

— Ես մեկ մղոն հասակ չունեմ, — ասաց Ալիսը:

— Ունես, — պնդեց Թագավորը:

— Մոտ երկու մղոն ես, — ավելացրեց Թագուհին:

— Ես ոչ մի դեպքում դուրս չեմ գա, — պնդեց Ալիսը, — դա ընդունված օրենք չէ, դուք հենց նոր հնարեցիք:

— Դա օրենսգրքի ամենահին հոդվածն է:

— Ուրեմն պետք է լինի «Հոդված 1», — ուրախացավ Ալիսը: Թագավորը գունատվեց, շտապ փակեց ծոցատետրը և ցածր, դողացող ձայնով դիմեց ատենակալներին.

— Ձեր վճիռը:

— Դեռ նոր վկայություններ են լինելու, ձերդ գերազանցություն, — մի արագ ցատկ արեց Մպիտակ ճագարը, — հենց հիմա հայտնաբերվեց այս փաստաթուղթը:

— Ի՞նչ է գրված այդտեղ, — հարցրեց Թագուհին:

— Դեռ չեմ բացել, կարծես բանտարկյալի ձեռքով գրված նամակ է՝ ուղղված ինչ-որ մեկին:

— Եթե ուղղված չէ ոչ մեկին, որն, ինչպես գիտեք, քիչ է պատահում, ուրեմն քո ասածը ճիշտ է, — եզրակացրեց Թագավորը:

— Իսկ ում է հասցեագրված, — հարցրեց մի ատենակալ:

— Հասցե չկա, — պատասխանեց Սպիտակ ճագարը, — փաստորեն վրան ոչ մի բան չի գրված, — խոսելիս նա բացեց թուղթը, — սա բոլորովին էլ նամակ չէ, այլ ոտանավորների մի ամբողջ շարան:

— Դրանք բանտարկյալի՞ ձեռքով են գրված, — հարցրեց մի ուրիշ ատենակալ:

— Ոչ, և դա կասկածելի է, — պատասխանեց Սպիտակ ճագարը:  
(Ատենակալները շփոթված տեսք ընդունեցին):

— Նա կեղծել է ինչ-որ մեկի ձեռագիրը, — ասաց Թագավորը:  
(Ատենակալների դեմքերը փայլեցին):

— Ձերդ գերազանցություն, ես չեմ գրել, ոչ ոք չի կարող ապացուցել դա: Այնտեղ ստորագրություն չկա, — արդարացավ Վալետը:

— Եթե չես ստորագրել, — ասաց Թագավորը, — ավելի վատ քեզ համար, ուրեմն չար մտադրություն ես ունեցել, իսկ եթե ոչ՝ ուրեմն որպես ազնիվ մարդ կստորագրեիր:

Այս խոսքերի վրա ծափահարություններ թնդացին: Ամբողջ օրվա ընթացքում Թագավորի արտահայտած ամենախելացի միտքն էր այդ:

— Եվ դա ապացուցում է նրա մեղավոր լինելը, — եզրակացրեց Թագուհին: — Անմիջապես կտրեք...

— Ոչ, այդպիսի բան չի ապացուցում, — հակառակեց Ալիսը, — դուք նույնիսկ չգիտեք, թե ինչի մասին են դրանք:

— Կարդա՛, — Սպիտակ ճագարին դիմեց Թագավորը: Սպիտակ ճագարը դրեց ակնոցը:

— Որտեղի՞ց սկսեմ ձերդ գերազանցություն, — հարցրեց նա:

— Սկսիր սկզբից, — խիստ ասաց Թագավորը, — կարդա մինչև վերջ ու հենց հասնես վերջին՝ վերջացրու:



Դատարանում քար լռություն էր մինչև որ Սպիտակ ճագարը կարդաց հետևյալը.

Ինձ ասացին՝ դու նրա մոտ ես վազել,  
Եվ այն մեկն էլ հարցուփորձ է արել քեզ:  
Նա իմ մասին քեզ լավ խոսքեր է ասել,  
Բայց ասել է, թե չեմ կարող լողալ ես:

Ինձ կանչեցին՝ խոցս տվեցի ես Փորձից,  
(Ամեն մեկի համար փաստ է ակնհայտ),  
Իսկ եթե նա ձեռք չքաշի այդ գործից,  
Ինչեր պիտի գլխիդ բերի գործը այդ:

Ես մեկին՝ մեկ, իսկ երկրորդին՝ հենց երկու,  
Դու ինձ՝ երեք, կամ գուցե թե փոքր-ինչ շատ:  
Նրա մոտից հետ վերցրիր ողջը դու.  
Թեև նրանք իմն են եղել անընդհատ:

Թե խառնվենք պատահաբար նա կամ ես,  
Եվ այդ գործին մասնակցություն ունենանք,  
Կսպասի, որ նրանց ինքդ ազատես,  
Ինչպես մի օր քո միջոցով դուրս եկանք:

Իմ կարծիքով, եթե խորը մտածենք,  
(Երբ նա պոռթկաց ու որոշեց վայր իջնել),  
Դու եղել ես ընդամենը մի արգելք  
Մեր բոլորի և սրա-նրա միջև:

Թող չիմանա, որ նա սիրում է սրանք,  
Թող ոչ մեկը երբեք ոչինչ չիմանա,  
Թող չիմանան այս մեծ գաղտնիքը նրանք,  
Այն հավիտյան միայն մեր մեջ թող մնա<sup>[32]</sup>:

— Մինչև այժմ եղած վկայություններից ամենակարևորն է, — ձեռքերը շփեց Թագավորը, — այնպես որ, թող այժմ ասենակալները...

— Եթե որևէ մեկը կարողանա բացատրել դրանց իմաստը, — ասաց Ալիսը, — (նա վերջին բռպեին այնքան էր մեծացել, որ բոլորովին չէր վախենում Թագավորին ընդհատելուց), — ես նրան վեց փենս կտամ: Ես դրանց մեջ ամեննին իմաստ չեմ տեսնում:

Ատենակալները գրեցին. «Նա դրանց մեջ ամեննին իմաստ չի տեսնում», բայց նրանցից ոչ մեկը չփորձեց բացատրել ընթերցվածը:

— Եթե դրանք անիմաստ են, — ասաց Թագավորը, — ուրեմն մենք փրկված ենք ամեն տեսակի գլխացավանքից, որովհետև կարիք չունենք իմաստ փնտրելու: Բայց՝ դեռ չգիտեմ... — ձեռագիրը փռելով ծնկներին, շարունակեց նա, — ինձ թվում է, այստեղ ուշադրության արժանի տողեր կան.

«...Թե չեմ կարող լողալ ես»: Դու կարող ես լողալ, — նա դիմեց Վալետին: Վալետը տխուր օրորեց գլուխը.

— Չեմ կարող: (Նա իսկապես չէր կարող լողալ, որովհետև ամբողջովին ստվարաթղթից էր):

— Մինչև հիմա ամեն ինչ կարգին է: — Թագավորը շարունակեց քթի տակ կարդալ. «Ամեն մեկի համար փաստ է ակնհայտ»: Սա, իհարկե, ատենակալներին է վերաբերում: «Իսկ եթե նա ձեռք չքաշի այդ գործից...», սա Թագուհու մասին է: «Ինչեր պիտի գլխիդ բերի գործը այդ»: Իսկապես ինչ: Էս մեկին՝ մեկ, իսկ երկրորդին՝ հենց երկու», իսկ. սա էլ, անշուշտ, կարկանդակների մասին է, թե՛ Նա ինչ արեց դրանք:

— Ինչո՞ւ չեք շարունակում, — հարցրեց Ալիսը, — կարդացեք. «նրա մոտից հեռ վերցրիր ողջը դու»:

— Իհարկե, այդպես է, — հաղթականորեն բացականչեց Թագավորը, մատնացույց անելով սեղանին դրված կարկանդակները, — դրանից ավելի պարզ ոչինչ չկա: «Երբ որ նա պոռթկաց...», ինձ թվում է, դու երբեք չես պոռթկացել, այնպես չէ՞, սիրելիս, — ասաց նա Թագուհուն:

— Երբե՛ք, — պոռթկաց Թագուհին և թանաքամանը շարտեց Մողեսի գլխին:

(Դժբախտ փոքրիկ Բիլը դադարեցրել էր մատով գրելը, որովհետև նկատել էր, որ ոչ մի հետք չի մնում քարե տախտակի վրա: Բայց այժմ նա շտապ գործի անցավ՝ օգտագործելով երեսից կաթկթացող թանաքը):

— Իսկապես, դու միայն փոթկում ես, սիրելիս, — կրկին Թագուհուն դիմեց Թագավորը և ժպտալով նայեց շուրջը:

Դատարանում քար լռություն տիրեց:

— Բառախաղ է, — բարկացավ Թագավորը և բոլորը ծիծաղեցին:

— Թող ասենակալները վճիռ կայացնեն, — արդեն որերորդ անգամ կրկնեց Թագավորը:

— Ո՛չ, ո՛չ, — ասաց Թագուհին, — սկզբում պատիժը, հետո դատավճիռը:

— Բացարձակ հիմարություն, — գոռաց Ալիսը, — ո՞վ է տեսել պատժել վճիռ կայացնելուց առաջ:

— Լեզուդ քե՛զ քաշիր, — գայրույթից կարմրատակելով բղավեց Թագուհին:

— Չեմ քաշի:

— Գլխատել նրան, — ճչաց Թագուհին ձայնը գլուխը զցած:

Ոչ ոք տեղից չշարժվեց:

— Դուք ձեզնից ի՞նչ եք ներկայացնում, — բղավեց Ալիսը (նա արդեն իր նախկին հասակն էր ընդունել), — դուք խաղաթղթերի մի կապուկ եք և ուրիշ ոչինչ:

Այդ վայրկյանին կապուկն օդ բարձրացավ ու թռավ աղջկա վրա: Ալիսը կես վախեցած, կես բարկացած մի սուր ճիչ արձակեց և փորձեց պաշտպանվել, բայց հանկարծ տեսավ, որ պառկած է գետափին, գլուխը դրած քրոջ ծնկին: Ավագ քույրը քնքշորեն հեռացնում էր ծառերից թափվող չոր տերևները նրա դեմքից:

— Ալի՛ս, սիրելի՛ս արթնացիր, — ասում էր նա, — ի՞նչ երկար քնեցիր:

— Այնպիսի մի զարմանահրաշ երազ տեսա, — ասաց Ալիսն ու պատմեց քրոջն այն ամենը, ինչ կարողացավ հիշել իր տարօրինակ արկածներից,

որոնք դուք հենց նոր կարդում էիք: Երբ վերջացրեց, քույրը համբուրեց նրան ու ասաց.

— Միրելիս, քո երազն իսկապես որ զարմանահրաշ էր, իսկ հիմա վազիր տուն: Արդեն ուշ է, թեյ խմելու ժամանակն է:

Ալիսը վեր կացավ ու վազեց տուն՝ ճանապարհին մտածելով իր հրաշալի երազի մասին:

Իսկ քույրն այդպես էլ մնաց նստած, գլուխը ձեռքին հենած՝ նա դիտում էր մայր մտնող արևը և մտածում քրոջ հետաքրքիր արկածների մասին, մինչև որ քունը տարավ ու երազում տեսավ հետևյալը:

Սկզբում նրա երևակայության մեջ կենդանացավ կրտսեր քույրը: Մի անգամ ևս Ալիսի քնքուշ ձեռքերը գրկեցին նրա ծնկները, և լուրջ, փայլուն աչքերը նայեցին իր աչքերի մեջ: Նա լսում էր քրոջ ձայնի ելևէջները և տեսնում գլխի ծանոթ շարժումը՝ աչքերին թափվող անհնազանդ մազերը հետ տանելու համար: Մինչ այդ, շրջապատը կենդանանում էր ու լցվում քրոջ երազի տարօրինակ արարածներով:

Երկար խոտերը խշշում էին Սպիտակ ճագարի ոտքերի տակ, երբ նա անցնում էր իր կողքով: Վախեցած Մուկը թաքտում էր հարևան լճակի մեջ: Հնչում էին Մարտյան Նապաստակի և նրա ընկերների թեյի բաժակների զրնգոցը անվերջանալի թեյրմայման ժամանակ, Թագուհու սուր ճիչը, որ մահվան էր դատապարտում իր թշվառ հյուրերին: Մեկ անգամ ևս Փոքրիկ գոճի-երեխան փռշտաց Դքսուհու ծնկին, մինչ ափսեներն ու սկուտեղները փշուր-փշուր էին լինում շուրջը: Մեկ անգամ ևս լսվեցին Արծվառյուծի կոնչոցը, Մոդեստի մատիտի խզխզոցը, և ծովախոզերի խեղդվող ձայները թշվառ Կրիայի հեռվից եկող հեկեկանքների հետ միասին լցրեցին օդը:

Քույրը նստած նիռիում էր. նա արդեն հավատում էր, որ ինքը գտնվում է Հրաշքների Աշխարհում, չնայած գիտեր, որ աչքերը բացելուն պես ամեն ինչ կվերածվեր գորշ իրականության. խոտը քամուց կօրորվեր, լճակը կխայտար եղեգների ճոճքից, կհնչեր ոչխարի հոտի զանգակների դողանջը թեյի բաժակների զրնգոցի փոխարեն, իսկ Թագուհու սուր ճիչերի տեղ կարձագանքեր հովվի կանչը: Երեխայի փռշտոցին, Արծվառյուծի կոնչոցին և մնացած բոլոր անսովոր ձայներին (նա

համոզված էր) կփոխարիներ ազարակի խառնաշփոթ աղմուկը, իսկ Կեղծ Կրիայի խուլ հեկեկանքների տեղ կլսվեր նախիրի բառաչը:

Վերջապես, նա պատկերացրեց, թե ինչպիսին կլինի կրտսեր քույրը հետագայում, երբ հասուն աղջիկ դառնա: Ջերմորեն ու քնքշանքով իր շուրջը կհավաքի երեխաներին, որոնց աչքերը կփայլեն հետաքրքրությունից, լսելով այդ տարօրինակ հեքիաթը և տարիներ առաջ երագում տեսած Հրաշքների Աշխարհի պատմությունը: Նա երջանիկ կզգա երեխաների հետ, կմասնակցի նրանց ուրախություններին ու թեթև վշտերին հիշելով իր սեփական մանկությունն ու ամառային երջանիկ օրերը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ոսկե կեսօրը» 1862թ. հուլիսի 4-ն է, երբ Քերուլը, պատվարժան Ռոբինսոն Դաքվորթը և երեք Լիդել քույրերը նավակով զբոսանքի գնացին: Բանաստեղծությունում նշված «առաջինը» քույրերից ավագն է՝ Լորին Շարլոթը, որն արդեն տասներեք տարեկան էր, «երկրորդը»՝ տասնամյա Ալիս Փլեզընսը, «երրորդը»՝ ութամյա Էդիթը: Քերուլն այն ժամանակ երեսուն տարեկան էր:
2. Քերուլն, անկասկած, լավ գիտեր, որ սովորական ազատ անկման դեպքում Ալիսը չէր կարող սափորը վայր գցել (սափորը նրա դիմաց կմնար կախված վիճակում), ոչ էլ այն դնել դարակին (անկման արագությունը թույլ չէր տա): Հարկ է նշել, որ «Սիլվի և Բրունո» վեպի ութերորդ գլխում Քերուլը նկարագրում է այն բարդությունները, որոնք կապված են ընկնող տան մեջ թեյըմպման հետ, նաև այնպիսի տան մեջ, որը ներքև է իջնում հավասարաչափ մեծացող արագությամբ: Սրանով Քերուլը կանխագուշակում է հանրահայտ «մտավոր փորձը», որտեղ Էյնշտեյնը օգտագործել է երևակայական ընկնող վերելակը՝ հարաբերականության տեսության մի քանի կողմերը բացատրելու համար

(ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

3. Քերոլի ժամանակների հանրամատչելի գրականությունում տարբեր կարծիքներ կային այն մասին, թե ինչ կկատարվի, եթե մարմինն ընկնի Երկրի կենտրոնով անցնող թունելի մեջ: Այս հարցը դեռևս Պլուտարքոսն է տվել, և շատ այլ հայտնի մտածողներ (այդ թվում Բեքոնը, Վոլտերը) քննարկել են այն: Ճիշտ է պատասխանել Գալիլեյը. «Մարմինը կընկնի մեծացող արագությամբ, հետո արագությունը կնվազի մինչև Երկրի կենտրոնին հասնելը, այստեղ արագացումը կհավասարվի գրոյի, որից հետո արագությունը կսկսի նվազել, իսկ դանդաղեցումը կմեծանա այնքան ժամանակ, մինչև մարմինը հասնի թունելի հակառակ ծայրը: Հետո մարմինը կրկին կշարժվի դեպի երկրի կենտրոնը»: Կարելի է կարծել, թե մարմինը այսպես հավիտյան տատանման մեջ կլինի: Սակայն օդի դիմադրությունը, ի վերջո, նրան կկանգնեցնի Երկրի կենտրոնում (ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):
4. Դինան Լիդելների կատուն է եղել: Նա մեկ անգամ էլ կհայտնվի երկրորդ հեքիաթի առաջին գլխում:
5. Այս հատվածը թարգմանելիս թարգմանիչը հարմար գտավ շարունակելու Քերոլի լեզվաբանական խաղը. Do cats eat bats?... Do bats eat cats? — հանգը պահպանելու համար՝ չղջիկ-աղջիկ: Հմմտ. ռուս.՝ Едят ли кошки мошек? Едят ли мошки кошек? — որտեղ «ba-չղջիկ»-ը փոխարինված է մժղուկով՝ կրկին հանգը պահպանելու համար (кошка-мошка):
6. Թե ինչու Ալիսը երբեք քսանին չի հասնի, կարելի է բացատրել այսպես. բազմապատկման անգլիական աղյուսակը ավանդաբար վերջանում է 12-ով, այնպես որ, եթե շարունակելու լինենք այս անհեթեթ պրոգրեսիան՝  $4 \times 5 = 12$ ,  $4 \times 6 = 13$ ,  $4 \times 7 = 14$  և այլն, ապա ստիպված պետք է հասնենք  $4 \times 12 = 19$ : Մինչև 20-ը մեկ թիվ պակաս է

(ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

7. Անգլիացի աստվածաբան և մանկագիր Այզեք Ուոթսի (1674-1748) ամենահայտնի ոտանավորներից մեկը՝ «Աստվածային երգեր փոքրիկների համար» ժողովածուից (1715):

Փոքրիկ մեղուն ամբողջ օրը  
Աշխատում է անդադար,  
Ու բուրավետ ծաղիկներից  
Հավաքում է թարմ նեկտար:  
Տես՝ ինչպիսի խնամքով է  
Նա իր տունը կառուցում,  
Եվ ամեն օր փոքրիկներին  
Քաղցր մեղր մատուցում:  
Թող որ ես էլ լինեմ տոկուն,  
Աշխատասեր մեղվի պես,  
Եվ ամեն մի օրվա համար  
Պատասխան տամ պարզերես:

8. Այս դրվագում Ալիսի «Երջանիկ փոքրությունը» ստիպում է հիշել նշանավոր մաթեմատիկոս Սըր Էդմունդ Ուիթիքերի քերոլյան կատակի ոգով առաջ քաշած տիեզերքի տեսությունը: Ուիթիքերը նկարագրում է նվազող (փոքրացող) տիեզերքը. այստեղ մատերիայի ընդհանուր քանակը, հավանորեն անփոփոխ կերպով կնվազի և վերջին հաշվով տիեզերքը կդառնա ոչինչ: «Այս տեսությունը,—հայտարարել է Ուիթիքերը,— գոնե այն առավելությունն ունի, որ չափազանց պարզ և հասկանալի է բացատրում տիեզերքի վերջնական ճակատագիրը»  
(ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

9. Որտե՞ղ է իմ կատուն (Ֆրանս.)

10. Բադ Ռոբինը Ռոբինսըն Դաքվորթն է (անգլ. duckբադ, այս մականունը Դաքվորթն ստացել էր դեռևս ուսանողական տարիներին), Լորը՝ Լորինն է, Արծվիկ Էդը՝ Էդիթը, Դոդո թռչունը՝ ինքը Քերոլը (կակազելիս նա իր ազգանունն արտասանում էր «Դո-Դո-Դոջսըն»):
11. Վիլիելմ Նվաճող — Նորմանդիայի դուքսը: 1066թ. գրավել է Անգլիան և հիմք դրել անգլիական թագավորների նորմանդական դինաստիային: Կոմս Էդվին, կոմս Մորքար, արքեպիսկոպոս Սթիգանթ — միջնադարյան Անգլիայի նշանավոր պետական գործիչներ:
12. «Պատկերային» բանաստեղծության օրինակ, որտեղ ձևը համապատասխանում է բովանդակությանը (տվյալ դեպքում Քերոլի ոտանավորը պատկերում է մկան պոչ): Նման բանաստեղծություններ գրվել են թե՛ Հին Հունաստանում, թե՛ մեր օրերում (Մ. Մալարմե, Գ. Ապոլիներ, Դ. Թոմաս, նաև «կոնկրետ պոեզիայի» ներկայացուցիչները): Որոշ քննադատներ այն գրական լուրջ ժանր են համարում:
13. Ըստ Փիթեր Հիթի՝ «Թրթուրը նկատի ունի Լոքի հայացքը անձի անփոփոխության մասին. անձը գիտակցում է իրեն որպես այդպիսին, քանի որ հիշում է իր անցյալը և կարող է հիշողության մեջ կենդանացնել իր սեփական կյանքի փորձը»:
14. Ռոբերտ Սաութիի (1774-1843 թթ.) վաղուց (և արժանիորեն) մոռացված «Ծերունու ուրախությունները և թե ինչպես դրանք ձեռք բերեց» բանաստեղծության ծաղրերգությունը: Ահա բնագրի առաջին երկու տների թարգմանությունը.

— Ծերացել ես, Վիլյամ հայրիկ,— ջահելն ասաց ծերունուն,—  
 Ու մազերդ սպիտակել են ձյան պես,  
 Բայց առույգ ես, Վիլյամ հայրիկ, քաջառողջ ու եռանդուն,  
 Ասա, ինչպես այդ ամենը տրվեց քեզ:  
 — Քո տարիքում,— պատասխանեց նրան Վիլյամ հայրիկը,—



Չեմ մոռացել, որ ծերություն կա կյանքում,  
Հետևաբար՝ չեմ շռայլել երբեք կյանքի բարիքը,  
Որ միշտ լինեմ քաջառողջ ու եռանդուն:

Հորես Գրիգորիի կարծիքով՝ 1816-ին տպագրված այս գործի մեջ Սաուրին անգիտակցորեն ծաղրում է Վիլյամ Վորդսվորդի փիլիսոփայությունը: Վերջինս՝ «Ձոն անմահության» հեղինակը, Սաուրիից «խլել» էր բանաստեղծ-դափնեկրի կոչումը և մինչև իր կյանքի վերջը չզիջեց ոչ մեկին: Սաուրին ռոմանտիկական պոեզիայում առանձնակի հետք չի թողել: Նա ավելի շատ հիշատակվում է որպես «Լճային բանաստեղծների» «Վորդսվորդ, Քոլրիջ» մտերիմը: Կազմակերպել է նաև Ձոն Քիտսի գրական հալածանքը, որի համար դատապարտվել է Բայրոնի կողմից (տե՛ս Բայրոնի «Ձոն Քիտս» բանաստեղծությունը):

15. Ուրախ ծաղրերգության բնօրինակը ոմանք վերագրում են Ջ. Լեգֆորդին, ոմանք՝ Դ. Բեյթսին: Քերոլի ուշադրության կենտրոնում եղել է հետևյալ տունը. Սե՛ր տուր, սե՛ր տուր երեխային,  
Համբերությամբ՝ ուրախ կյանք, Չէ որ հյուր է նա մեր տանը, Եվ հրաժեշտ պիտի տանք:
16. Քերոլի ժամանակներում հաճախ էին ասում. «Ժպտում է ինչպես չեշիրյան կատուն»: Ասացվածքի ծագումն անհայտ է: Սակայն երկու տեսություն գոյություն ունի: Ըստ առաջինի՝ Չեշիր կոմսությունում (որտեղ, ի դեպ, ծնվել է Քերոլը) մի անհայտ ներկարար պանդոկների դռների վերևում ժպտացող առյուծներ է նկարել: Համաձայն երկրորդի՝ չեշիրյան պանիրը մի ժամանակ պատրաստել են ժպտացող կատվի պատկերով: «Սա հատուկ է Քերոլին, — հաստատում է դոկտոր Ֆիլիս Գրինեյքերը՝ Քերոլի մասին հոգեվերլուծական աշխատության հեղինակը, — քանի որ այդ դեպքում կարելի է ընդունել այն ցնորական գաղափարը, որ պանրից պատրաստած կատուն կարող է ուտել այն առնետին, որն իր հերթին մեծ հաճույքով կուտեր այդ պանիրը»

(ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

17. Լայնորեն օգտագործում էին նաև Mad as a hatter (խելառ ինչպես գլխարկագործը) և Mad as a March Here (խելառ ինչպես մարտյան նապաստակը) արտահայտությունները: Քերուի կերպարները հենց այս դարձվածքներից են առաջացել: Առաջին դարձվածն իր ծագումով պարտական է այն իրողությանը, որ մինչև վերջերս գլխարկագործներն իսկապես խելագարվում էին: Նրբաթաղիքի մշակման համար օգտագործվող սնդիկը երբեմն սնդիկային թունավորում էր առաջացնում, որի զոհերը տառապում էին ջղակծկումներից (hatter's shakes): Պատահում էին և հոգեկան հիվանդության դեպքեր: Երկրորդ դարձվածը նկատի ունի մարտ ամսին (գուգավորման շրջանում) արու նապաստակի խելահեղ վարքը (ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների): Գլխարկագործն ու մարտյան նապաստակը կհայտնվեն երկրորդ հեքիաթում այլ անուններով՝ Գդակագործ և Լապստրակ:

18. «Ժպիտ առանց կատվի» արտահայտությունը մաքուր մաթեմատիկայի ոչ վատ նկարագրություն է: Չնայած մաթեմատիկական թեորեմները հաճախ կարող են հաջողությամբ գործադրվել արտաքին աշխարհի նկարագրության մեջ, սակայն զուտ թեորեմները հանճարի տեսական ընդհանրացման բուն էությունն է, որը պատկանում է բոլորովին ուրիշ տիրության. «Հեռու է մարդկային կրքերից,— ինչպես մի անգամ նշել է Բերթրան Ռասելը,— հեռու է անգամ բնությունից փոխառած ողորմելի փաստերից: Այն պատկանում է կանոնավորված տիեզերքին, որտեղ մաքուր միտքը կարող է բնականորեն գոյություն ունենալ, ասես իր հարազատ օջախում, և որտեղ մարդը (գոնե ազնիվ մղումներ ունեցող մարդը) կարող է թաքնվել իրականության տրտում արքտրից» (ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

19. Գլխարկագործի հանելուկը Քերոլի ժամանակներում անթիվ մեկնաբանություններ առաջացրեց: 1898թ. հրատարակության առաջաբանում Քերոլը գրել է. «Ինձ հաճախ հարցնում են, թե կարելի է արդյոք գլխարկագործի հանելուկի պատասխանը գտնել: Թերևս կարելի է այստեղ ընդունելի մի տարբերակ նշել, երկուսի օգնությամբ էլ կարելի է պատասխաններ տալ (թեև տափակ պատասխաններ), երկուսին էլ երբեք շրջոն չեն դնում: Չնայած սա իմ միտքը հետո եկավ, իսկ հանելուկը սկզբում ուղղակի լուծում չունեի»: Ինչպես տեսնում ենք, անհեթեթ հանելուկին Քերոլը տալիս է նույնքան անհեթեթ պատասխան:

20. Քերոլի «Միլվի և Բրունո» գրքում գերմանացի պրոֆեսորի ժամացույցն այնպիսին է, որ, եթե սլաքները հետ տանես, ապա դեպքերը ևս կվերադառնան անցյալի գիրկը — Հերբերթ Ուելսի «ժամանակի մեքենայի» հետաքրքիր կանխագուշակում: Քերոլին է պատկանում նաև այն դատողությունը, որ կանգնած ժամացույցը ավելի ճիշտ է աշխատում, քան այն, որն օրական մի րոպե հետ է մնում: Առաջինը ճշգրիտ ժամանակը ցույց է տալիս օրվա մեջ (գիշեր ու ցերեկ) երկու անգամ, մինչդեռ երկրորդը՝ երկու տարում մեկ անգամ: «Հնարավոր է,— շարունակում է Քերոլը,— որ դու հարցնես... թե ես ինչպե՞ս իմանամ, որ հիմա, ասենք, ժամը ութն է: Չէ որ իմ ժամացույցով չեմ իմանա: Համբերություն: Դու լավ գիտես, որ ժամը ութին քո ժամացույցն ստույգ է: Հիանալի է: Ուրեմն պարտավոր ես հետևել այս կանոնին. ուշադիր հետևիր քո ժամացույցին և հենց որ նա ճիշտ ժամանակը ցույց տա, ուրեմն ժամը ութն է»: Ա. Էդինգթոնը և հարաբերականության տեսությամբ զբաղվող այլ ֆիզիկոսներ խելահեղ թեյրմպումը (որտեղ ժամացույցի սլաքները միշտ վեցն են ցույց տալիս) համեմատել են Դե Միթթերի տիեզերքի մոդելի այն մասի հետ, որտեղ ժամանակի ընթացքը կանգնել է: (Այն հայտնի է նաև Էյնշտեյն-Միթթեր մոդել անունով): (Ծանոթագրությունը՝ անգլիացի մաթեմատիկոս Մարթին Գարդների):

21. Ջեյն Թեյլորի «Աստղի» ծաղրերգությունը: Բանաստեղծությունը բավական հայտնի էր 19-րդ դարում:

Շողա, աստղ գիշերվա,  
Քո տեղը ո՞վ կիմանա,  
Ճախրիք մթին երկնում հար,  
Որպես փայլուն մի գոհար:  
Մութ ու մռայլ երկնքում,  
Գիտեմ դու աչք չես փակում,  
Մեզ ես նայում դու անթարթ,  
Մինչև լուսայգ գա հանդարտ...

22. Էլսի, Լասի, Թիլի — Լիդել քույրերը: Էլսին՝ Լորին Շարլոթն է, այդպես են հնչում նրա անվան սկզբնատառերը անգլերեն (L. Ch.), Թիլին՝ Մաթիլդ անվան կրճատ ձևն է՝ Էդիթի ընտանեկան մականունը, Լասի՝ Ալիս անվան գրաշրջությանը (Alice — Lacie):

23. Քրոքեթ — մարգախաղ, որտեղ փոքրիկ գնդակը փայտե մուրճիկների հարվածով անհրաժեշտ է անցկացնել պատրաստված դարպասներից ներս: Ծագել է Ֆրանսիայում, 17-րդ դարում:

24. Կատուն կարող է նայել թագավորին — անգլիական հին ասացվածք, ասել է, թե կան բաներ, որոնք ցածր խավի մարդիկ կարող են անել բարձրաշխարհիկ մարդկանց ներկայությամբ:

25. Դանտեի «Դրախտի» և ամբողջ «Աստվածային կատակերգության» վերջին տողը՝ փոքր ինչ փոփոխված: Ա. Տայանի թարգմանությամբ՝ «Մերն, որ շարժում է արևն ու այլ աստղեր», (Երգ երեսուներեքերորդ, 145):

26. Արծվառյուծ — դիցաբանական էակ՝ արծվի գլխով և թևերով, առյուծի մարմնով: Միջնադարում արծվառյուծը խորհրդանշում էր աստծու և մարդու միությունը՝ Քրիստոսի մեջ: Քերոլի Արծվառյուծը Օքսֆորդի սենտիմենտալ շրջանավարտների հավաքական դիմանկարն է:

27. Կադրիլ — ժողովրդական, սալոնային և պարահանդեսային պար, չափը 2/4: Պարում են չորս և ավելի զույգերով: Առաջացել է Ֆրանսիայում և յուրացվել շատ ժողովուրդների կողմից: Ունի հայկական տարատեսակները՝ «Քյոռ-օղլի» և «Ագուռի» կադրիլ: Հայտնի է, որ Լիդել քույրերը կադրիլի մասնավոր դասեր են անցել:
28. Քերոլը ծաղրանմանակում է Մերի Հաութի (1799-1888) «Մարդն ու ճանճը» բանաստեղծության առաջին տունը.

— Անցիր ինձ մոտ, բարեկամս,— մի օր ճանճին սարդն ասաց,—  
Մենք կնստենք, կգրուցենք ու կկիսենք աղ ու հաց:  
Այս չքնաղ, հյուսկեն ոստայնը դեպի սենյակ է տանում:  
Քեզ պես անգին հյուրի համար ես ոչինչ չեմ խնայում:  
— Ձե՞ն ես առնում,— ասաց ճանճը,— շնորհակալ եմ, խնամի,  
Եթե մեկը քո ոստայնը սխալվի ու ոտք դնի, տեղով կրակը կընկնի:

29. Սկզբնաղբյուրը Այգեք Ուոթսի հանրահայտ «Ալարկոտը» բանաստեղծությունն է:

Խոսեց հանկարծ ալարկոտը, ու մրթմրթաց նա այսպես.  
— Ինչո՞ւ եք ինձ քնից հանում, ախր քնած էի ես:  
Ինչպես դռան սոնիներն են չորանալուց խուլ ճռռում.  
Այդպես էլ նա ճռճալով շուռ է գալիս ու խռռում:  
Ա՛խ, մենակ թե պառկած մնա, ա՛խ մենակ թե չաշխատի,  
Այսպես թողնես նա շաբաթներ ու ամիսներ կվատնի,  
Անգամ մարդը չաշխատելուց ժանգոտվում է ու մաշվում,  
Իսկ սա նստում պարապ-սարապ ու ճանճերն է լուռ հաշվում:  
Անցա նրա մեծ պարտեզով, ու ինչ պատկեր ահավոր՝  
Փուշ ու մոլախոտ ծածկել են կաղնիները դարավոր:  
Հազի շորերն էլ որ տեսնեք՝ միայն քուրջ ու ցնցոտի  
Նա մսխել է ունեցածը, ինչպես անբան մի լոթի...

30. 1862թ. օգոստոսի մեկին Քերոլը գրառել է օրագրում այն մասին, որ Լիդել քույրերն իր համար երգել են Ջ. Սեյլսի «Աստղ իրիկնային»

երգը.

Աստղ իրիկնային՝ երկնակամարում,  
Արծաթ շողերդ անդորր են բերում,  
Երբ ճախրում ես դու հանդարտ ու լռիկ,  
Աստղ իրիկնային, աստղ գեղեցիկ:

*Կրկներգ՝*

Աստղ գեղեցիկ.  
Աստղ գեղեցիկ,  
Աստղ իրիկնային,  
Հանդարտ ու լռիկ.  
Աստղ գեղեցիկ...

31. Քերուլը բաց է թողնում այս հանրահայտ մանկական երգի շարունակությունը.

Փոսիկի արքան  
Վալետին գտավ՝  
Կարկանդակները  
Խլեց ու կերավ:  
Ու այդ օրվանից  
Վալետը դարձավ  
Ազնիվ, ու ոչինչ  
Էլ չգողացավ:

32. Նոնսենի ծայրահեղ օրինակ: 1885-ին տպագրված նախնական տարբերակը եղել է կատակ-նոտանավոր: Հետագայում Քերուլն այնպես է այն «խառնել», որ բոլոր վեց տները զրկվել են իմաստից: Այսպես Քերուլն ակնարկում է Անգլիայի դատարաններում տրվող անիմաստ. (ասել է թե կեղծ) վկայությունները: Ինչպես ապացուցում է թագավորը. «Մինչև այժմ եղած վկայություններից

ամենակարևորն է», և քիչ անց ավելացնում. «Եթե դրանք անիմաստ են, ուրեմն մենք փրկված ենք ամեն տեսակի գլխացավանքից»: